

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ





# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



Յ. ՕՇԱԿԱՆ . . . . .	Արժիւները
Ռ. ՈՐԲԵՐԵԱՆ . . . . .	Սկիզբ եւ վախճան
» . . . . .	Հիմա որ...
» . . . . .	Կախարդը
Բ. ԵՂԻԱՅԵԱՆ . . . . .	Որդի մարդոյ
Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ . . . . .	Շրջաններ
» . . . . .	**
» . . . . .	Զրապտոյտ
Ն. ՎԻՐԱՊԵԱՆ . . . . .	Յարութեան օրը
* * * . . . . .	Մեծը՝ Հրաչեայ Անտեան
Հ. ԱՃԱՌԵԱՆ . . . . .	Գիտութեան մատուցած ծառայութիւններս
Ռ. ԶԱՐԵԱՆ . . . . .	Հրաչեայ Անտեան
Է. ԱՂԱՅԵԱՆ . . . . .	Բազմերախտ հայագէտը
Ս. ՍԱՀԱՌՈՒՆԻ . . . . .	Մշակութային լուրեր
* * * . . . . .	Մահ՝ Կարօ Սասունիի
Բ. ՓԱՓԱԶԵԱՆ . . . . .	Յառաջապահ թատրոնի մասին
Լ. ՄԿՐՏՉԵԱՆ . . . . .	Ալեքսանդր Սուժենիցին
Ս. ՊՈՅԱՃԵԱՆ . . . . .	Հ. Տասնապետեանի «Հայկական Հարցը»
Կ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ . . . . .	Ա. Կոստեանի «Միայն լուսնով կայ Հայոց փրկութիւն»
* * * . . . . .	Շահեկան գիրք մը՝ «Գրական տեղեկատու»

«Բազին»ի ներկայ թիւին մէջ նմոյշներ արտագրուած են հայրենի հետեւեալ գրողներէն.

Ռաֆայէլ Իշխանեան, Վազգէն Գեորգեան, Յովհաննէս Գրիգորեան, Ալբերտ Կոստանեան, Հենրիկ Էդոյեան, Մարգօ Ղուկասեան, Դաւիթ Յովհաննէս, Արմէն Մարտիրոսեան, Արտեմ Յարութիւնեան, Հրաչեայ Սարուխան, Ֆելիքս Պետրոսեան, Անահիտ Պարսամեան եւ Վարազ Առաքելեան:

# Բազմ

## ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

ՃԵ. — ԺԶ. ՅԱՐԻ. ԹԻՒ Զ      ՍԵՊՏԵՄԲԵՐ 1977      ԳԷՅՐՈՒԹ

### Յ. ՕՇԱԿԱՆ

Իր հարազատներուն կողմէ մեր տրամադրութեան տակ դրուած Յ. Օշականի անսխալ թուղթերուն մէջ կայ քանի մը էջնոց տեսարակ մը, ուր «կայսերական յաղթերգութիւն» ընդհանուր խորագրին տակ սեւադրուած են երեք կարճ դրութիւններ, — «Վրդովուած խղճմտամբը», «Եսքմամ գիշեր» եւ ստորեւ տրուած «Արծիւները», երեքն ալ անաւարտ:

Հնարաւոր չեղաւ ճշգեղ, թէ մեծանուն գրագէտը հորը գրի առած է այդ էջերը եւ ինչո՞ւ այդքան արագ վերջ դրած կայսերական իր ա՛յս յաղթերգութեան:

Ուրիշ առիթով մը պիտի տանք նաեւ շարքին միւս երկու կտորները:

## Ա Ր Ծ Ի Ի Ն Ե Ր Ը

Երկուքով կ'ապրէին անոնք, մշաասլէս սլայծառ. լոյսին մէջը այդ լեռներուն, որոնց մէկ երեսը ձերմակ ծովին, ու միւսն ալ՝ նոյնքան ճերմակ աւազին կը նայէին:

Արու եւ էգ էին անոնք. երկար տարիներ Լիրանանի մարմարներուն մէջ սլարուցուցած իրենց արամութիւնը, սլատահական զոհերու արիւնովը քիչ մը գունաւորուած, բայց աչքերը նայելու ատեն շաա անգամ կը դոցուէին ընդարձակ քունի մը վրայ: Ճատոնց է գաւակ չէին ունենար, թոցուցած ըլլալով յաջորդական սերունդներ:

Բայց անոնք, արու եւ էգ, գագաթէ գագաթ իրարու թըռ-

չաժ ատեն, իրենց ներքեւ տափակցող հողի կզգիականերուն վրայ, հսկայ բան մը կը ձգէին, իրենց շուքը: Ու քիչ անգամ, սարերուն անմատոյց փապերուն առջեւ անոնք կտուց կտուցի կը նստէին թախժոռ, վարէն սեւցող գիշերուան նայելով, որ պիտի գար էրենց փեռուրներուն հետ նոյնանալու:

Անոնց մաքէն չէր անցած իջնալ վարերը, լերան փէշերը չարչարող գիւղերուն շուրջը, կամ հեռաւոր գաշաին մէջ, իր ճերմակ աանիքներուն ներդաշնակ անկիւնաւորումը տարածող քաղաքին մօտենալ:

Անոնք, արու եւ էգ էին, իրենց պապերէն սորված լերան մարմարներուն մէջ շնչել կարենալու բարձրութիւնը, ու անոնք երբեք չփորձեցին ասփարակութեանց, մարգերուն, կենդանիներուն ամէնէն սգեղին արորումին ենթակայ հտրթութիւններուն վրայ իրենց փեռուրներէն լոյսի շերտեր թափթփել:

### Բ.

Օր մը, սակայն, վարի գաշտերէն հովին թեւովը բան մը եկաւ գանելու թռչունները իրենց բոյնին առջեւ, երբ ինկած արեւէն ետքը, գլուխնին մէկ ճիւղէն կախ, անոնք կը մտածէին մութին, բոլոր չհասկցուող բուններուն խորհուրդին:

Հոս մըն էր եկողը, զոր անապատէն գարձին հովը բերած էր ցրուելու հանգարա քնացող ժայռերուն վրայ եւ որ ծանր, գժնգակ, գալարուն՝ կը քսուէր քարերուն կարծրութեանը, մինակ ասուապող բոյսերուն փշոռ ասեղներուն: Վարի գաշտերէն կու գար անիկա, թէ աւելի հեռուններէն: Թռչունները որոշապէս չկրցան ճշգեւ, ու երբ հորիզոնները քննելու սաւառնող մեծ Արծիւը դարձաւ, պատմեց, թէ մութը կը գոցէր բոլոր հովիտները, եւ թէ՛ գիշերը կը սկսէր իրեն անծանօթ չարչարանքով մը, ամէն կողմէ լոյսերով ծածկուած, վիրաւոր իր ծածկոյթովը:

Առտուն կանուխ, արեւին առջի ասեղներէն ալ առաջ, արծիւները, այս անգամ զոյգ՝ քննելու ելան հովիտը: Թեթեւ ու անկատար մշուշի մը ընդմէջէն, որ լերան մէջքին գօտիի մը պէս կը փաթթուէր, անոնք տեսան տակաւին ստուերներուն մէջ իրենց պղտոր գիծերով, կարաւանները, սունկի ձեւ վրաններուն ճերմակ անապատը, որ ամբողջ գիշերը վաղեր էր նորօրինակ գետի մը պէս, բռնելու գէմէ գէմ լեռներուն ծոցը փորուող այգ գետինը:

Թռչունները լայն բացին իրենց ունգերը: Հակառակ հովին, որ լերան ծովի երեսէն կու գար հիմա ուժգին՝ անտես ջրովէժի մը նման թափելու գարվար, գիշերուան հոար, միշտ վարքուած, տեղ ալ կը գտնէր այգ հովի հոկայ ուլիքին մէջէն, պատրուաւած տեղերէն վեր մագլցելու, ծանր փտութեան ու ներսումին աղտովը բեռնաւոր, ու կը կենար յոգնած, քարերուն բռնին, պատսպարան փնտռելով մարմարէ խորշերուն կամ խորտակուած եղեւիններու խոռոչին մէջ:

Ու թռչունները գիտէին ատիկա:



Անոնք ամբողջ օրը, ասորքինակ հեաքրքրութենէ մը ասրուած՝ վաղեցին իրենց թեւերուն հսկայ սլաքով, միշտ քիչ մը աւելի վար, միշտ դէպի դաշտերը, ուրկէ քրրուած վրաննե-  
րուն տեղը հիմա մարդերու մը քնացում մըն էր, որ կ'եփէր, կը շարժէր, ու սնու ու համաչափ ալիքներու, աւաղներու այդ ծո-  
վուն վրայ, կը քայլէին դանդաղ, կը քայլէին աստանքով, ու ա-  
նոնց վրայէն անոնց մեծ ցար, անոնց ասորքինակ եղերդութիւնը  
կը բարձրանար, նման հոտին, որ նոյնքան վշաաղին եկեր էր վե-  
րերը ապաւէն փնտռելու:

Որք իրիկուն եղաւ: Հովր դարձուց իր առաջասաները եւ  
այդ իրիկուն անոր թեւերը ծանրացեր էին բոյորովին: Լերան  
վրայ հոս ու հոն ապաստանած բոյոր հոտերը, ամէնքն ալ ադ-  
աղնուազոյն երազներու եւ զգացումներու դայարաղին մահացու-  
մէն սեղած՝ կը փախչէին, դեռ սարսափը, դեռ անէծքը թերեւ  
իրենց անախ բաժակներուն մէջ պինդ սեղմած, դէպի վեր, դէ-  
պի կապոյտը՝ նմանելով այոպէս մահուան մէջ անգամ հողիին  
այն ժողովուրդին, որ չէր մոռցած, իր պատմութեան ամէնէն  
ահաւոր օրերուն, աչքերը դէպի երկինք դարձնելու:

Ու հոտերը իրերու եկած, անախսանելի աղերսովը իրենց  
վառարաններուն, կ'ելլէին միշտ վեր, ծանր, եւ մնալով հովէն,  
որ կը նեղուէր կարծես այդ մեջումէն: Լերան բոյոր գազանները,  
իրենց քիթը ուր բացին անոր ալիքին ու վախկոտ եղնիկները ա-  
ւելի ամուր փակուեցան իրենց թաքտացներուն խորը:

Ու այս ամէնը արեւով:



Արծիւները հիմա դաշտն էին, պղտիկ անաստի մը քիչ մը  
վերօքը, բարի ապաստաններու խումբի մը ծոցը աեղաւորուած:  
Անոնք, առջի օրերը, իրիկուան մաս, պարաք սեպեցին լեռը բարձ-  
րանալ, առաու կանուխ իջնելու համար ցածր: Հեազհեաէ իրենց  
մարմինները այնքան ծանր եւ պարարա եկաւ իրենց թեւերուն,  
որ աւելորդ գաան լեռն ի վեր այդ ելքին համար յողնութիւն վաա-  
նելու: Ու դարերուն բնազդը, որ կը յաականչէ կենդանիները, գա-  
ռածուեմով մը տեղի աուաւ: Արծիւները լքեցին իրենց մարմարէ  
բոյները:

Ու անոնք միեակ շմեացին: Լեռնաշղթային ամէն մէկ թափ-  
քէն մէկիկ-մէկիկ դուրս ինկան բոյոր ծեր ու երիասարդ, գոնչ  
ու հզօր թռչունները, անոնք խկ, որ եղերք նետուած նաւու մը  
պէս մահուան կը պատրաստուէին ու անոնք, որ նոր սաեղծում-  
ներու կրակը կը կրէին իրենց կտուցին վրայ: Ու ամբողջ եկաւ  
անաստակը:

Ոչ ոք անհանգիստ կ'ընէր գիրենք: Ակիզրները կարմիր փայ-  
լակի մը մէջէն յանկարծ պայթող բամբ ձայնը գիրենք վրդովեց:  
Բայց շատ շուտ վարժութիւնը եկաւ իրենց, ու յետոյ՝ կրկնու-  
թեան, յաճախումի,



Բ. ՈՐՐԵՐԵԱՆ

ՍԿԻԶՐ ԵՒ ՎԱՆՃԱՆ

Ամապատին մէջ կը յառաջանամ:  
Կողմնորոշումի բացարձակ ազատութիւն ունիմ:  
Կրնամ երբայլ տղ, ճախ:  
Արգիլուած եմ տեղ-ճայր եւ ետ-զարձր միայն:

Ճերեկը կիգիչ,  
Գիշերը՝ կծոզ ցուրտ համայնաաարած:  
Ձեռքիս ունիմ լազար մը, որուն մէջ հասակ կը մեռէ վարդ մը:  
Միակ շնչոզ էակը շուրջս:

Կըռնն, թէ միլիսնաւոր մարդիկ կը բալեն  
այս ամապատին մէջ: Կը լսեմ ամենց ազմուկը,  
բայց չեմ տեսներ գիրենք:  
Այս նաւրուն միակ գարգերը փշածաղիկներն են:  
Եւ մերթ ընդ մերթ կրկներեւոյթները,  
որոնք կը ներկայանան մարդկային կերպարանով,  
բարեկամութիւն, թշնամութիւն, սէր, ատելութիւն  
եւ փառասիրութիւն ծածկանումներով:  
Երկար չեմ մնար: Շուտ կ'ամայտանան:  
Նորերը կու գան նոր ծածկանումներով:  
Կ'անցնին նոյն արագութեամբ:  
Առաւելաբար կը տեսնեմ վաճառակամներ,  
ուղտերու կարաւաններով:  
Միակ տեսանելի երեւոյթները ամապատին մէջ:  
Վերէն, շատ վերէն կը թեւածեն արծիւներ, բազէներ,  
թիթեռներ, որոնք իրենք գիրենք կ'ամուսանեն արուեստագէտ:  
Կ'ուզեմ դպչիլ անոնց:  
Անկարելի:  
Միակ գեղեցիկ երեւոյթները այս ամապատին մէջ:

Դժուար թէ հանգիպիմ բարեխառն կլիմայի մը:  
Պիտի հալիմ արեւուն տակ, կամ սառիմ լուսնի լոյսին ձերքեւ:  
Տաքի եւ պազի այս կամոնաւոր յաջորդականութիւնը կը թրծէ  
մարմինս: Կը գառնամ տոկում եւ արժամաւոր  
ճանապարհորդ ամապատի:  
Անտեսանելի մարդոց  
հազարաւոր Ռայուածքներն են, որ կը ճնշեն ուտերուս:



Այս բազմութիւնները չեն սիրեր առանձին փայղ գամբորդները:  
 Իրարու ականջին բաներ կը փսփսան, կը քրքան,  
 Խորհրդաւոր նայուածքներ կը նետեն դէպի աջ, դէպի ձախ:  
 Մինչ թաղարին վարդը կ'անի, կը գեղեցկանայ  
 եւ իր գլուխը կը հակէ դէպի ինծի:  
 Ռունգերուս կը մօտեցնեմ գայն: Ինչ անո՛ւշ կը բուրէ:  
 Ճամբորդութիւնը երկար կը տեւէ: Երկար, շա՛տ երկար:

Ի վերջոյ կը տեսնեմ ցուցատախտակը:  
 Կը նշանակէ, որ հանգիստի ժամը մօտ է:  
 Ցուցատախտակի ետին հոյակապ պանդոկ մը  
 կը սպասէ գամբորդներուն:  
 Ժպիտը դէմքիս՝ կը յառաջանամ:  
 Կ'աշխուժանամ: Հանգչելու ժամը մօտ է:  
 Պանդոկին անունն է «Տեղ-փայլ եւ ետ-դարձ»:  
 Կը տեղաւորեմ թաղարը ապահով տեղ մը,  
 վերջին անգամ կ'արբեմ անոր ընդմէջ եւ կ'իյնամ գետին:

## Հ Ի Մ Ա Ո Ր ...

Աստղանաւորդներէն շատ առաջ,  
 Ես սիրեցի լուսինը.  
 Փնտռեցի գայն.  
 Գտայ մութին մէջ կախուած կանթեղ մ'իբրեւ,  
 Որուն ձեռքը կը հատնի ամէն առաւօտ:

Անոնցմէ շատ առաջ,  
 Արմսքրոնկէ՛ն ալ առաջ՝  
 Ոտք դրի ես անոր վրայ  
 Եւ ապրեցայ այդ սպառնալից խոռվոյն եւ լիութեամբ:

Փնտռեցի աստղերը մեծ ու փոքր,  
 Գտայ գանձնք եւ շարեցի  
 Լուսնի չորս դին.  
 Պատկերէն ապա ներշնչուած՝  
 Գիրեր եւ բառեր նուիրեցի անոնց:

Կը սիրէի գիշերը:  
 Անոր մօտալուտ սպառումին գաղափարը  
 Կը սարսափեցնէր գիս:



Աչքերս կը փակէի վախով՝  
Չտեսնելու համար դրօշներու փոխանցումը:

Մատղաշ հոգիներ միայն կը սիրեն գիշերը:  
Հիմա, որ արեւը կը նախընտրեմ լուսնէն,  
Գիտեմ, որ բան մը կոտորած է մէջս,  
Բան մը հանգած,  
Ջոր արեւը լոկ կրնայ վերարծարծել:

## Կ Ա Խ Ա Ր Դ Ը

Գիշերը՝

զարթնում ենք ազիտակցութեան  
եւ նանապարհ նշմարտութեան:

Գիշերը՝

Լուսիւնը կը սաւառնի ֆաղափն վրայ:  
Աղմուկ կայ միայն գերեզմանատան մէջ  
նորեկներու անհաշտութեան հետեւանումով...

Գիշերը՝

ֆահանային թաղած վերջին մեռելը ըմբոստացած է կարծէք  
եւ անոր արտասանած բոլոր աղօթքները կ'ուզէ վերադարձնել իրեն:

Գիշերը՝

Աստուած կը պտրտի իր տան մէջ  
եւ կը մաքրէ զայն:

Գիշերը՝

աշակերտը կ'ըլլայ ուսուցիչ  
եւ կը խօսի,  
մինչ աշակերտ դարձած ուսուցիչը ոչինչ կը հասկնայ  
իր ուսուցիչ աշակերտին տագնապահար բառերէն:

Գիշերը՝

արշակաւաններն ու բարեւոյնները  
վանքեր են,  
ուր կը նեմեն ծպտուած չարագործներ,  
որոնք վարդարան կը փաշեն ու կ'աղօթեն: Որո՞ւ...



Գիշերը՝

երգիչները կը գոռան՝  
 լռելու համար ցերեկին:  
 Պարուհիները ահաւոր դողէ բռնուած՝  
 կը դառնան միջատ  
 եւ Քրիստոսի օրհնած գինիի կարասները  
 տակաւ կը բազմապատկուին:  
 Կանայի հարսանիքը պիտի տեսէ մինչեւ առաւօտ:

Գիշերը՝

երազը կը դառնայ իրականութիւն,  
 որուն փոշեթաթախ քանցքին ծուէններէն  
 որդեր եւ սարդեր կը փորձեն բարձրանալ:  
 Մոզաւանջը՝ նինջի ընկեր՝  
 կը փարի մարմնին սիրատոչոր համբոյրներով,  
 եւ այս գիրկընդիսառնումէն  
 առաւօտեան կը ծնին բազմաթիւ փոքր մոզաւանջներ,  
 մեծնալու համար ժամ առ ժամ, օրէ օր,  
 ապրելու համար միասին:

Գիշերը՝

թոյնը կեանք է,  
 երկինքը՝ քաղաք, քաղաքը՝ գերեզմանատուն,  
 ուր մեռելները կ'երգեն միեւնոյն երգը,  
 սարսափեցնելով երկնի բնակիչները:  
 Հարուստը իր գանձին կը հսկէ անձուն,  
 իսկ աղքատը կը նեմէ անուրջներու պարտեզին մէջ:

Սիրողներուն՝ ապաստան,  
 հիւանդին սարսափ՝ գիշերը,  
 ուր սէրը կ'ըլլայ սէքս:  
 Դէմ առ դէմ պատերը կը փսփսան, կը բամբասեն,  
 զսպուած լռութիւնը իրենց կ'ըմբոստանայ,  
 եւ անոնք, այդ պատերը, լուտանքներ կը թափեն  
 հոն, յատակին պառկողներուն վրայ,  
 առաւօտուն վերստին լռելու համար:

Գիշերը ցալկն է կախարդին,  
 որ կը հպի ամէնուն անխտիր,  
 այլափոխուած մարդը վերադարձնելով բնութեան:

Բ. Ե Ղ Ի Ա Յ Ե Ա Ն

ՈՐ Դ Ի Մ Ա Ր Դ Ո Յ

Ա Ր Ա Ր Ե Ր Ր Ո Ր Դ

Գեթսեմանի... աստղալոյս գիշեր: Բլրակողին վրայ՝ ձիթեմիներ: Թովմաս նստած է՝ ձիթեմիի մը կոնդին յեց. Յովհաննէս ոտքի, Թովմասի ձեռքը վեր բռնած:

ԹՈՎՄԱՍ.— Թո՛ղ զիս, ես կ'ուզեմ առանձնութիւն՝ ես ինծի:

ՅՈՎՀԱՆՆԷՍ.— Այո, այս բլուրին մենութիւնը լուռ երգ մըն է... (Դարձեալ ձեռքէն կը քաշէ): Բայց երթանք Բարրիին մօտ:

ԹՈՎՄԱՍ (ոտքի ելլելով).— Ես չեմ գիտեր, թէ մեր այս երթալն ու գալը մեզ ո՞ւր պիտի հասցնէ: (Կը թօթւէ վրայ-գլուխը): Շրջէ, վաղէ, ծովլեռ մի ըսեր... Սա մէկ շարթուան մէջ մենք որքան տեղ քալեր՝ ենք՝ հաշուած ես... Դէ՛, Դեկապոլիսէն, Սամարիայէն, Յուդայի աշխարհը մեր ոտքին տակ առինք... Ու հիմա, նոյնիսկ քիչ մը հանգիստ չկայ մեզի: Ես կ'ըսեմ քեզի, թէ այս ճամբուն ծայրը յստակ չեմ տեսներ...

ՅՈՎՀԱՆՆԷՍ.— Ինչո՞ւ քու մէջդ յուսաբեկ այս տղան միշտ, Թովմա՛ս: Բարրին մեզմէ լաւ դիտէ ամէն բանի վախճանը: Մեր միակ հոգը թող բլրայ Անոր անելի մօտ ըլլալ. քալէ՛:

ԹՈՎՄԱՍ.— Հըմ, մի՛շտ Անոր մօտ... Դէ՛ք չէի՞ք, որ Յորդանանէն անդին երբ կը գանուէինք ու Ղազարոսի լուրը եկաւ, ըսիք. «Այդ շրջանները վրասանգաւոր են. թող վարդապետը ինք մինակը երթայ»: Ու ես ըսի. «Ո՛չ, մենք ալ երթանք, ու եթէ մահ կայ՝ մե՛նք ալ մեռնինք»: Դեռ քանի՞ ժամ կ'ընէ, երբ Ընթրիքի ընթացքին յայանեց, թէ պիտի բաժնուի մեզմէ. դարձեալ ես եղայ համարձակողը, թէ՛ «Տէ՛ր, ցոյց տուր ճամբան, մենք ալ գանք»: (Ետ գետին նետուելով): Ես կ'ուզեմ հետեւիլ եւ մօտէն հետեւիլ Անոր, բայց միանգամայն կ'ուզեմ դիտնալ, թէ մենք ո՞ւր կ'երթանք: Իսկ դուք կը հետեւիք՝ առանց դիտնալու:

ՅՈՎՀԱՆՆԷՍ.— Այդպէս մի ըսեր: Մենք բոլորս ալ կը սիրենք քու անկեղծութիւնդ, բայց կ'ըսեմ. պէտք է հաւատանք...

ԹՈՎՄԱՍ.— Հաւատա՛ եւ մի փնտեր: Այդ մտքով ալ քաջկուտեցիր զի՞ս մինչեւ հո՞ս: Դուն նախ քեզմէ սկսէ, Յովհաննէ՛ս. հայր ու եղբայր՝ դուք արդէն յաջող գործ մը ունէիք. իր մէկ խօսքին հաւատալով՝ ամէն ինչ թողուցիք՝ ուռկան, նաւ, տուն ու հետեւեցաք: Ի՞նչ խելք կար, ի՞նչ հաշիւ՝ ձեր ըրածին մէջ: Ելաք-վաղէ՛



ցիք ցնորքի մը ետեւէն. եւ ահա հասած ենք հոս. բաժանման կէտ մը, ուրկէ անդին ճամբան չի շարունակուիր...

**ՅՈՒՂԱՆՆԷՍ.**— Ուրեմն չե՞ս դաբ: (Կը հեռանայ առանձինը):

Կ'անցնին լուսաւոր ստուերներ: Կը մտնէ Յուդա, թափառկոտ, հեզնական, անհոգ:

**ԹՈՎՄԱՍ** (նստի ցատկելով).— Չարամիտ, ո՞ւր այդպէս փախար դողի նման... Ի՞նչ: Դէմքդ հանգոյցի ձեւ է առեր: Նայիմ. աչքերէդ արիւն կը կաթի:

**ՅՈՒԴԱ.**— Չդէ՛ դիս: Եաքը կը հասկընաս:

**ԹՈՎՄԱՍ.**— Յիմա՛ր, ի՞նչ գործի ես նորէն:

**ՅՈՒԴԱ.**— Լմնցաւ, ըսի, պիտի տեսնես: Ա՛լ չի կրնար օրօրել մեղ:

**ԹՈՎՄԱՍ.**— Անխե՛լք, դո՞ւն մնացիր: Քանի՛ ըրարքինքն չկրցան ծուղակել Ձայն:

**ՅՈՒԴԱ.**— Սուր եւ բիր՝ ամէն ինչ կը խոստովանեցնեն Անոր:

**ԹՈՎՄԱՍ** (յանկարծ վրան նետուելով ու խուզարկել սկսելով).— Ի՞նչ շարութիւն սաղրելու ելեր ես նորէն... Թո՛ղ տուր, տեսնեմ ի՞նչ սուր, ի՞նչ ըրիր... Տաճարը վկայ, ամէնէն առաջ ինձմէ կը ստանաս բռունցքը քունքիդ վրայ:

**ՅՈՒԴԱ** (թող տալով, որ թովմաս գինի խուզարկէ, ու հեզնօրէն).— Կը խընդամ վրադ, աղա՛յ, որ տակաւին այնքան կարեւորութիւն կու տաս Անոր:

**ԹՈՎՄԱՍ** (ձեռքը Յուդայի քսակին վրայ).— Օ՛, այս ի՞նչ է, ա՛յս:

**ՅՈՒԴԱ.**— Կեցի՛ր: (Քսակը ծոցէն հանելով՝ օդին մէջ կը շարժէ).— Գերիի մը գինն է այս, գինը՝ որով Մովսէս թոյլատրած է ծախել գերի մը: Հա, հա՛, հա՛: Երեսուն արծաթ. քիչ դուժար է, բայց Անոր արժէքէն աւելի է, վստահ եղիր:

**ԹՈՎՄԱՍ.**— Ա՞յդ ինչ խօսք է, վատուի՛: (Կը հրէ բռունցքովը: Պետրոս ներս կը մտնէ): Տես սա յիմարը, Պետրո՛ս, տես սա յիմարը:

**ՊԵՏՐՈՍ.**— Հա, դուն ուրեմն եկար մեր ետեւէն, ուրացո՛ղ, դուն ի՞նչ գործ ունիս այստեղ, աղուէ՛ս:

**ԹՈՎՄԱՍ.**— Գացեր-մտտներ է կ'ըսեմ, չե՞ս հասկնար:

**ՊԵՏՐՈՍ.**— Նախանձի՛ որդ. արդէն դուն մեր մէջ օտար մըն էիր: Ըսէ՛, ի՞նչ ըրիր. սխալմէ՛: (Ձեռքը մէջքի սուրին կը տանի):

**ՅՈՒԴԱ.**— Քաշէ՛, քաշէ՛ տեսնեմ, քաշէ տեսնեմ, որ այդ սուրը կեղծ չէ՞: Քու այդ մտտ ձեռքերդ ձրի հաց ուտելու համար են միայն: (Պետրոս կը հանդարտի): Լա՛ւ, դուն ալ դիացիր ահա. ծախեցի՛ ձեր վարդապետը:

**ՊԵՏՐՈՍ.**— Ի՞նչ, սատանի՛ պոչ, ի՞նչ ըրիր:

Յովհաննէս կը վերադառնայ:

**ՅՈՒՂԱՆՆԷՍ.**— Ի՞նչ աղմուկ է այս, գիչերուան մէջ:

**ՊԵՏՐՈՍ.**— Բայց լսէ, Յովհաննէ՛ս, լսէ սա փորձանքը:

**ՅՈՒՂԱՆՆԷՍ** (տեսնելով Յուդան մեղմացած).— Ա՛, թշուառ մեղաւոր:

**ՊԵՏՐՈՍ.**— Պատմէ, դաւադի՛ր. չպատմե՞ս, թէ ինչ ես ըրեր:

**ՅՈՒԴԱ.**— Ինչո՞ւ այս կեղծ իրարանցումը հիմա: Այն օրը, երբ Տաճարը մաքրեց, դուք չըսի՞ք՝ հիմա է ժամանակը, հռչակենք թաղաւորութիւնը...

**ՅՈՒՂԱՆՆԷՍ.**— Ան սորվեցուցած է մեզի, թէ թաղաւորութիւնը մենք պիտի հաստատենք, երբ դայ ժամանակը:

**ՅՈՒԴԱ.**— Չեղի պէս թոյլե՞րը... Չեղի պէս ծոյլե՞րը: Դուք բոլորդ ալ թուլցած ողկոյղի պէս ցնցուելու էք: Դուք հիմա ձեր փափուկ միտերը փրկեցէք: Փախէք՝ կ'ըսեմ: (Ձառներ կը ցոլցան հեռուները):

**ՊԵՏՐՈՍ** (ձեռքը սուրին) .— Թո՛ղ դան .  
հետն ենք մինչեւ ի մահ :

**ՅՈՒԴԱ** .— Վա՛յ, վա՛յ, շատախօ՛ս :  
Այդպէս մեծ-մեծ խօսելուդ համար  
չէ՞ր, որ քեզ յանդիմանեց անգամ  
մը, թէ ետիս քաշուէ, սատանա՛յ :  
Քեզ գործի վրայ տեսնէինք հապա :  
Ես ձեզ բոլորդ ալ կը ճանչնամ . ճա-  
գարները ձեզմէ քաջ են :

**ՊԵՏՐՈՍ** (բարկացած՝ վրան կը յարձա-  
կի) .— Հը՞հ, ի՞նչ, ի՞նչ :

**ՅՈՒՀԱՆՆԷՍ** (երկուքին միջեւ նետուե-  
լով) .— Աի գրգռուիր, Պետրո՛ս :  
(Յուդային) : Բայց դուն ինչո՞ւ ը-  
նէիր այդ վատութիւնը :

**ՅՈՒԴԱ** .— Ես պատճառ-բան չեմ գիտեր :  
Ես հրաժարած եմ այլեւս Իրմէ : Ձե-  
զի պէս հաճոյք չեմ գտներ իր մօ-  
արը : Ահա երեք պասեք անցաւ . Ան  
մեղի ամէն ինչ կը խոստանայ, բայց  
մենք կը շարունակենք մնալ սոված :  
Պասեքի Ընթրիքն իսկ այսօր սախա-  
ւեցանք սլատահական ասան մը մէջ  
ընել : Տուն-տեղ չունինք : Ուրիշնե-  
րու աւելցուքով կ'ապրինք, եւ գեո.  
Թագաւորութիւն կ'երազենք : Յիմար  
եղած եմ ես, կը խոստովանիմ, այս-  
քան երկար ատեն թափառելու ետե-  
ւէն . բայց այլեւս յոգնած եմ Իրմէ :  
Մի՛ ուրանաք, ե՛ս հոգացած եմ ձեր  
բոլորին ալ կարիքը : Դուք օր մը  
կանգ առած եւ հարցուցա՞ծ էք, թէ  
ի՞նչ պիտի ուտէք, ո՞ւր պիտի գիշե-  
րէք : Դուք միայն ազօթած էք, մինչ  
ես ամէն տեղ ձեր առջեւէն վազած,  
ձեզի համար բան-գործ կարգադրած :  
Բայց ի՞նչ չարչարանքով : Ո՞վ եր-  
բեւիցէ խորհած է, թէ թշուառներու  
խումբ մը ինչպէս կ'անցընէ իր օրը :  
Տեսէք, այս քսակը առաջին անգամն  
է, որ կը լեցուի այսքան գումարով :  
(Յովհաննէս եւ Պետրոս կը դիտեն  
քսակը, գարմացած) : Ի՞նչ կ'ապշիք :  
Այո՛, ասոր մէջն է ձեր սիրելիին  
գինը . . . Երեսուն արծաթ, ճի՛շդ  
Մովսէսի օրէնքին թոյլատրած գի-  
նը : Ես կ'ըսեմ՝ շատ իսկ է Իրեն պէս  
բարի ապստամբի մը համար :

**ՊԵՏՐՈՍ** .— Ուրեմն ինչո՞ւ չէ՞ս հոս ես  
եկեր : Ի՞նչ է ուղածդ :

**ՅՈՒՀԱՆՆԷՍ** .— Այսպիսի սիրտով, այս-  
պիսի խելքով՝ ուրեմն դուն ինչո՞ւ  
չհեռացար Իրմէ՝ առաջին իսկ Պա-  
սեքին :

**ՅՈՒԴԱ** .— Հա, իմ խենթ ըլլալս հո՛ղ է  
արգէն : Ես ուղած եմ հեռանալ Իր-  
մէ՝ չլսել իր խօսքը, դառնալ ես իմ  
ձեռքերու օրհնեալ աշխատանքին :  
Բայց — եւ ահա ասկէ յայտնի է, թէ  
ես տէրը չեմ իմ անձիս — ես ուղած  
եմ թողուլ Ձինք, բայց ինք քաշած  
է զիս եւ Իրեն կապած : Իր տեսիլքը  
կը հետեւի ինծի ամէն տեղ : Թէեւ  
ես կ'ուզեմ փախչիլ Իրմէ, բայց ա-  
ւելի կը կապուիմ Իրեն : (Տեսիլքներ  
կ'անցնին ծառերուն ետեւէն) : Ես իմ  
անձիս տէրը չեմ :

**ՅՈՒՀԱՆՆԷՍ** .— Ասիկա ոչինչ կը բա-  
ցատրէ :

**ԹՈՒՄԱՍ** .— Յուզա, իրա՞ւ մտանցիր  
Ձինք :

**ՅՈՒԴԱ** .— Չըսի՞ արգէն : Եթէ Ան իրաւ  
Մեսիան է՝ թող յայտնի ընէ . . . Թող  
պայթի պայթելիք պայքարը :

**ՅՈՒՀԱՆՆԷՍ** .— Դուն «Նախանձայողնե-  
րու» խումբին մէկ զոհն ես, Յուդա՛,  
անոնց ծրագիրն է՝ թագաւորութիւ-  
նը հուրով ու սուրով հաստատել :  
Սակայն ճշմարիտ թագաւորութիւնը  
պիտի գայ հոգւոյ զօրութեամբ՝ իբր  
մէկ ու անբաժանելի ժողովուրդ՝  
անբաժանելի ուժ կազմելով նախ :

**ՅՈՒԴԱ** .— Լաւ, թող ի՛նք տար ահա  
միութեան այդ ուժը, իսկ եթէ ինք  
կեղծ մեսիա է, թող յայտնի ըլլայ՝  
թո՛ղ ըլլայ Իրեն ալ այնպէս՝ ինչպէս  
եղաւ կեղծ մեսիա Յովնաթանին :

**ՅՈՒՀԱՆՆԷՍ** .— Այո բոլորը ետքէն բեր-  
ւած արդարացումներ են, Յուդա՛ :  
Ընդունէ ահա, որ ոճիր է գործածդ :  
Եւ արդէն քու խօսքերդ կը մատնեն,  
թէ մէջդ բան մը կը տանջէ քեզ :

**ՅՈՒԴԱ** .— Այո, ես ալ չեմ կրնար հաս-  
կրնալ . . . Թէեւ կ'ըսեմ, թէ ինչու  
կ'ընեմ այս բանը, բայց ես ալ կը  
զարմանամ, թէ ինչո՞ւ մի՞շտ ես



Բ Ա Գ Ի Ն

դործէի այս արարքը: (Մեղմացած): Յովհաննէս, դուն, որ անոր խորհուրդներուն թափանցող ես, ըսէ ուրեմն, թէ ինչո՞ւ Ան ըսաւ ինծի. «Գնա՛ եւ շուտ ըրէ՛ ինչ որ պիտի ընես»:

ՅՈՒՂԱՆՆԷՍ.— Որովհետեւ, Յուդա՛, Ան քու մէջդ տեսաւ արամադրութիւնը եւ հակումը դէպի չար դործը: Քու բնութիւնդ մնաց ընդունակ չար արարքի:

ՅՈՒԴԱ.— Բայց եթէ ինքն ալ գիտէր, թէ ես բնութեամբ չար հակումով մէկն եմ, ինչո՞ւ ուրեմն առաւ զիս խումբին մէջ: Ձիս Իրեն աշակե՞րտ ընտրեց, թէ մասնիչ:

ՅՈՒՂԱՆՆԷՍ.— Ան ուղեց լոյսի բերել բարին, որ քու մէջդ ալ կայ, ինչպէս ամէն մարդու մէջ իբրեւ սերմ, բայց մենք տեսանք օրէ օր նախանձոտն ու կծծին, որ մեծցաւ քու մէջդը: (Տեսիլք՝ ծառերու ետեւէն):

ՅՈՒԴԱ.— Ի՞նչ է իմ մեղքս:

ՅՈՒՂԱՆՆԷՍ.— Մեղքը՝ մարդուս ինքն իր կոչումին դէմ դործելն է:

ԹՈՒՄԱՍ.— Քու մեծագոյն մեղքդ՝ արկածախնդրութիւնդ է, Յուդա՛, դուն արտակարգին սէրը ունիս, յանկարծ բան մը ըլլալ կ'երազես:

ՅՈՒԴԱ.— Այո, ես փառասիրութիւն ունեցայ, մե՞ղք է: Իմ աշակերտութիւնըս հիասթափումի շարք մը եղաւ: Ո՛րքան մեծցաւ Անոր ժողովրդականութիւնը, ա՛յնքան նուաղեցաւ կամքը իմ մէջ, դրեթէ նահանջեց: Ես տեսայ, որ ձախողած ծրագիր մըն էր մերինը:

ՅՈՒՂԱՆՆԷՍ.— Յուդա, ես չեմ ուղեր քեզ դատել. ես կ'ուզեմ քեզ հասկընալ. սակայն քու ըսածներդ իրարու հետ հաշտ չեն:

ՅՈՒԴԱ.— Թերեւս ես չհասկցուիմ, թերեւս ծաղրուիմ. բայց ես դիտեմ, որ իմ ըրածս առանց մաքի չէ:

ՊԵՏՐՈՍ.— Մի՞աք... «Հրէասանի փրկութիւն» ըսածդ է, չէ՞, եւ ան ալ քեզի պէս մարդու մը մտքով:

ՅՈՒԴԱ.— Այո, ես եւ ինծի պէս մասծողները... Դուք եւս պէտք է այդպէս

պէս մասծէք: Ես հիմա իրաւունք կու տամ քահանայապետին... Ան խռովարար մըն է դարձած, ոչ թէ Բարբի:

ԹՈՒՄԱՍ.— Ուստի՛ դուն կանխամտածումով կը դործես մտադրութիւնդ:

ՅՈՒԴԱ.— Այո, այդ մասին կը մտածէի արդէն ատենէ մը ի վեր. իսկ սակարկութիւնը դեռ նոր ըրի, երբ Ան արտասանեց իր «Վայ»երու նշանաւոր ճառը: Միւսները պատրաստ էին ամէն զին վճարելու իր գլխուն համար: Իսկ այս երեկոյ, Ընթրիքին, ա՛լ հատաւ համբերութիւնս: Ձեր բոլորին առջեւ Ան արհամարհեց զիս, զիս մատնանչեց իբրեւ մատնիչ եւ «լաւ էր, թէ ծնած չըլլար» ըսաւ: Ընթրիքը թոյն դարձաւ ինծի: Գրեթէ վտարեց զիս սեղանէն, թէ՛ «Եւ, դնա՛ ըրէ ընելիքդ»: Ու երբ կ'երթայի՛ խօսք մը անդամ չըրաւ զիս ետ կեցնելու: Դիտէր, թէ ինչու կ'երթայի: Ձեր ալ անաարբերութիւնը զայրացուց զիս... Ձէի կրնար ալ զսպել ինքզինքս եւ... (Յուզումէն ու հեւքէն քուլցած): Ուղելով չէր կարծես:

ՅՈՒՂԱՆՆԷՍ (աշակերտներուն).— Մենք ալ պատասխանատու ենք մեր եղբոր անկումին համար, ընդունինք այդ մէկը: (Յուդային դառնալով): Յուդա, դեռ ուշ չէ: Ձե՞ս ուղեր վերադարձ մը ընել:

ՅՈՒԴԱ.— Ամէն ինչ վերջացած է... Անցած ենք «կարմիր ծովը». վերադարձ չի կրնար ըլլալ: (Հեռուէն երեւցող ջահերուն նայելով): Արդէն կը մօտենան: Հոս կը բաժնուին մեր ճամբաները: Անցէ՛ք:

Յովհաննէս կ'աշխատի բռնել Յուդան, բայց ան կը սահիկ'երթայ:

ԹՈՒՄԱՍ.— Բայց օղուտ չունի այսպէս սպասելը, Յովհաննէ՛ս:

ՅՈՒՂԱՆՆԷՍ.— Վրդովելու պէտք չկայ. սպասենք... Մենք կը ճանչնանք Յուդան... Դեռ ըրածն ի՞նչ է...

**ԹՈՎՄԱՍ.**— Երանի ես ալ քեզի չափ միամիտ ըլլայի... Դուն կը ճանչնաս այդ յիմարը, բայց ես ալ կը ճանչնամ զայն: (Պետրոսը թելէն առնելով): Երթանք Վարդապետին: (Կը մեկնին Պետրոս եւ Թովմաս): Ահա բազմութիւնը՝ ջահերով:

Կը մտնեն Մարթա եւ Մագդաղիկէ, շփոթած: Իրենց հետ կը քաշեն-կը բերեն Յուդան:

**ՄԱԳԴԱՂԻՆԷ.**— Ո՞ւր էք, Յովհաննէ՛ս. դուք դեռ ինչի՞ կը սպասէք: Տէ՛ր Աստուած, ինչ բազմութիւն:

**ՄԱՐԹԱ.**— Սակայն շուտ, գտնենք Բարբին... Պէտք է Ջայն հեռացնել վրտանգէն... Ամէն ինչ պատրաստ է, շո՛ւտ... (Յովհաննէս ցաւագին կը դիտէ Յուդան): Ինչո՞ւ կը լռէք. ո՞ւր է. եկած ենք Ձինք հեռացնելու:

**ՅՈՎՀԱՆՆԷՍ.**— Ուրեմն իրա՞ւ է: Յուդա՛:

**ՄԱԳԴԱՂԻՆԷ.**— Այս վայրենիէն հապաբարի՞ք պիտի սպասէիր: (Յովհաննէս զգաստացնելու շարժում մը կ'ընէ Մարիամին):

**ՅՈՒԴԱ.**— Ձգէ՛, ձգէ՛, թո՛ղ խօսի... Մեծ վնաս չէ այդքանը: Մա՛նաւանդ՝ որ զուարճալի է դիտել իր տաղանապանքը՝ գիշերուան այս զովութեան մէջ:

**ՄԱՐԹԱ.**— Գոնէ լռէ, ապերա՛խտ. եթէ ընելիք ունիս, ճարպիկութիւնդ հիմա՛ տեսնէինք: Գտի՛ր, ազատենք Ձինք:

**ՅՈՒԴԱ.**— Ազաւնեակներ, փոքրիկ տատրակներ. ես ձեզի ըսի, որ խոյս տաք այս վայրերէն: Մեղք է, որ ձեր ալ փափուկ միսերը ճզմուին... Ես ինքս անշո՛ւշտ թէ զործի մը համար եկած եմ հոս, բայց ոչ թէ ձեր սիրեկանը ազատելու:

**ՄԱԳԴԱՂԻՆԷ.**— Ուրեմն մենք առանձին կը գտնենք ճամբան... Մարթա՛... (Կը քաշէ գայն՝ հետը մեկնելու շարժումով):

**ՅՈՒԴԱ.** (Կիներու ճամբան բռնելով). — Ճամբայ չունիք:

**ՄԱՐԹԱ.** (մեկդի հրելով Յուդան). — Մենք է՛նչ ճամբով հոս եկած ենք՝ նո՛յն ճամբով ալ կրնանք Ջայն փախցընել:

**ՅՈՒԴԱ.** (պիկդ կեցած դէմերնին). — Ոչ ոք այս ճորէն կրնայ ելլել՝ առանց իմ հրամանիս:

**ՄԱԳԴԱՂԻՆԷ.** (Յուդան բարտեւն մեկդի հրելով). — Ատիկա քու զործի չէ:

**ՅՈՒԴԱ.**— Իմ զործս է՝ ձեր Բարբին յանձնել այս բազմութեան:

**ՅՈՎՀԱՆՆԷՍ.**— Յուդա, իրա՞ւ: (Թելը կը բռնէ):

**ՄԱՐԹԱ.**— Վայ օ՛ձ, ուրեմն դուն առաջնորդեցիր զանոնք այստեղ:

**ՄԱԳԴԱՂԻՆԷ.**— Հարամ-ճնած, դուն ինչպէ՞ս համարձակեցար չարիք մը տածել քու Տիրոջդ գէ՛մ, որ միայն բարիք գործած է:

**ՅՈՒԴԱ.** (ծաղրական). — «Բարի՛», «քընքո՛ւչ», այդ բաները միայն դուն կրնաս տեսնել:

**ՄԱԳԴԱՂԻՆԷ.**— Կը ծաղրես իմ տկարութի՞ւնս, անզգա՛մ: Ես քու միսերդ բզկտելու ուժ ունիմ տակաւին:

**ՅՈՎՀԱՆՆԷՍ.** (բռնելով, որ չյարձակի). — Մարիա՛մ...

**ՅՈՒԴԱ.**— Մեղք է քեզի, վառեա՛կ. մեղք է, որ ես քու անուշահոտ միսերդ սա փոշիներուն փռեմ...

**ՄԱՐԹԱ.**— Լռէ, լկտի՛: Ամօթ չէ մնացած մէջդ:

**ՄԱԳԴԱՂԻՆԷ.**— Ըսէ ի՛նչ որ ուզես: Ես փոշի ըլլամ, ցեխ ըլլամ: Տիրոջդ չխնայելէ ետք, ինծի՞ պիտի խընայէիր: (Յանկարծ կը տեսնէ Բարբի Յեսուի ստուերը): Ահա ինքն է, Բարունին:

Մարթա եւ Մագդաղիկէ կը դիմեն դէպի ստուերը: Չափեր կը փալփալին դիմացէն: Ամբոխի ձայներ: Յովհաննէս լուռ կը հետեւի:

**ՅՈՒԴԱ.**— Ահա, մարդիկ, ահա Որդին Մարդոյ. համբոյր մը միայն... Ինչ դատան վայրկեան... Աչքերս պիտի

դոցեմ... Չհանգիպիմ Անոր այրող նայուածքին :

Բարբի Յեսուի սպիտակագգեստ ստուերը կու գայ-կը կանգնի դէմը: Երկու հոգի արձանացած՝ գիրար կը դիտեն: Բարբի Յեսու նշան կ'ընէ, ու երկուքը միասին կը մեկնին:

Կը փոխուին լոյսերը: Առաւօտ է:

Կը մտնեն Մաքսապետ Սիմոն ու Մագդաղիկէ:

ՄԱՔՍԱՊԵՏ ՍԻՄՈՆ.— Մեղի մտիկ ր-րա՞ւ երբեք: «Հօրս առնը, հորս դործը», կ'ըսէր ու կ'երթար... «Աստնք են մայրս ու եղբայրներս», կ'ըսէր՝ ժողովուրդը ցոյց տալով: Ահա նոյն ժողովուրդը հիմա, ի՞նչ ովսանաններ, ի՞նչ խաչ: (Կը մտնէ Յովհաննէս շփոթած): Լուր մը ունի՞ս, Յովհաննէ՛ս:

ՅՈՎՀԱՆՆԷՍ.— Այո, այո, սեւ լուրեր... Դուք ո՞ւր կ'երթաք:

ՄԱՔՍԱՊԵՏ ՍԻՄՈՆ.— Ո՞ւր է Ան հիմա:

ՅՈՎՀԱՆՆԷՍ.— Աննա քահանայապետին տարին:

ՄԱԳԴԱՂԻՆԷ.— Մենք ալ հոն երթանք:

ՅՈՎՀԱՆՆԷՍ.— Բայց մինչեւ հոն հասնինք՝ հեռացուցած կ'ըլլան: Նախնական հարցաքննութեան համար էր:

ՄԱՔՍԱՊԵՏ ՍԻՄՈՆ.— Հարցաքննութի՞ւն:

ՅՈՎՀԱՆՆԷՍ.— Չէ՞ք հասկնար... Իր կեանքին դէմ է դաւը:

ՄԱՔՍԱՊԵՏ ՍԻՄՈՆ.— Ի՞նչ ըրած ունէր, որ անմեղը:

ՅՈՎՀԱՆՆԷՍ.— Մաքսապետ Սիմոն, աստնք դաժան թշուառականներ են, իրենց մեղքերը մասնանշելը՝ մեղք մը չէ՞ միթէ: Վա՛յ անոր, որ կ'ուսուցանէ մարդոց՝ աւելի արագ, քան անոնք կրնան սորվիլ:

ՄԱՔՍԱՊԵՏ ՍԻՄՈՆ.— Բայց ի՞նչ պատահեցաւ քահանայապետի ատեանին մէջ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ.— Ծեր Աննան հարցումներ

ըրաւ, բայց Բարբին երբեք չպատասխանեց: Ըսաւ միայն. «Ես յայտհամարձակ ամէն օր ուսուցաներ եմ. հարցուր անոնց, որ լսած են զիս»:

ՄԱՔՍԱՊԵՏ ՍԻՄՈՆ.— Ճիշդ է. ըստ մեր օրէնքին, դատավարութիւն չի կըրնար ըլլալ, եթէ նախ ուրիշներ չամբաստանեն:

ՅՈՎՀԱՆՆԷՍ.— Բայց այդ առարկութեան վրայ՝ սպասաւորներէն մէկը ապտակ մը իջեցուց երեսին, թէ՛ «Այդպէ՞ս կը պատասխանեն քահանայապետին...»: Այդ ապտակը, որ շառաչեց, ես ամբողջ մարմնովս սարսռացի, աչքերս մթազնեցան, գլուխս դարձաւ, ու ելայ-փախայ: Չեմ դիմանար:

ՄԱԳԴԱՂԻՆԷ.— Աճապարե՛նք: Ա՛հ, եթէ ես կին չըլլայի, եթէ զիս ատեան ընդունէին, ես կ'երթայի իր տեղը կը պատասխանէի, կը պոռայի բոլորին, թէ Ան միայն բարին գործած է, դո՛ւք էք դաւաճանները: (Մաքսապետ Սիմոն ձեռքէն բռնած՝ կը քաշէ, որ երթան: Կը մտնէ թովմաս): Լուր մը ունի՞ս, թովմաս:

ԹՈՎՄԱՍ (Յովհաննէսին).— Քեղ կը փնտռէի... Պէտք է զգուշանանք:

ՄԱՔՍԱՊԵՏ ՍԻՄՈՆ.— Դուն ո՞ւր տեսար Ձինք:

ԹՈՎՄԱՍ.— Աննայէն Կայեափա քահանայապետին տարին... Սինհետրիոնը, «Տաշուած Քաբերու Սրահ»ին մէջ... Մահավճիռ կ'ուզեն:

ՄԱՔՍԱՊԵՏ ՍԻՄՈՆ.— Բայց սխալ է. Սինհետրիոնի իրաւունքը չէ ատիկա: Մահավճիռ տալը միայն Հռովմի կուսակալին իրաւունքն է:

ՄԱԳԴԱՂԻՆԷ.— Երթա՛նք, բոլո՛րս ալ հոն երթանք:

ՅՈՎՀԱՆՆԷՍ.— Վտանգաւոր տեղեր թափառիլը ապահով չէ մեզի:

ՄԱԳԴԱՂԻՆԷ.— Մեռցնեն իսկ, մենք կ'երթանք:

Կը մեկնին Մագդաղիկէ եւ Մաքսապետ Սիմոն:

ԹՈՎՄԱՍ.— Ահաւոր է գաղտնի դաւադրութիւնը, Յովհաննէ՛ս: Դպիրները,



ծեր աղուէսին շուրջը բոլորուած՝ շարունակ խորհուրդ կու տային, թէ՛ «Պէտք է օրինական վկայութիւն մը դանենք՝ Զայն մահուան դատապարտելու»: Ոմանք առաջ եկան վրկայելու, թէ «Շարաթ օրուան մեր սրբութիւնը կ'աւրէ», կամ թէ՛ «Հայրերու աւանդութիւնը կ'անտեսէ»... Բայց դպիրները ըսին. «Ասոնք մահապատիժի պատրուակ չեն կրնար ծառայել»: Բայց երբ երեք վկաներ միանդամայն ըսին, թէ՛ «Լսած ենք, որ Ան ինքզինք Մեսիա օծեալ թագաւոր կոչած է», այն ասէն քահանայապետը ելաւ ատեանին առջեւ իր զգեստները պատուեց. «Ալ որո՞ւ պէտք են ուրիշ ամբաստանութիւնները»: Եւ ամբոխը միաբերան դոչեց. «Մահուան է արժանի»: Իսկ ես երբ լսեցի վկաներ, որոնք կ'ըսէին, թէ Ան ո՛չ միայն ինքզինք թագաւոր կոչեց, այլեւ իր շուրջը աշակերտներ հաւաքեց, եւ թէ՛ ահա այդ աշակերտներէն ոմանք մեր մէջն են, հոս, ես շունչս բռնած՝ փախայ...

Կը մտնէ Պետրոս, մագերն ու հագուստները ցանուցիր: Երեք աշակերտները իրարու գիրկը կը նետուին:

**ՊԵՏՐՈՍ.** — Վատ եղանք մենք, վա՛ս, բոլորս ալ:

**ՅՈՎՀԱՆՆԷՍ.** — Այո, գրուած է. «Հովիւը պիտի զարնուի եւ ոչխարները պիտի ցրուին»... Դուն մինչեւ ո՞ւր հետեւեցար Իրեն:

**ՊԵՏՐՈՍ.** — Հետեւեցայ ամբողջ դատաւարութեան, դացի մինչեւ իսկ Պիղատոսի բարձր ատեանը: Հոն էին քահանայ, դպիր, ժողովուրդ, զինւորներ: Պիղատոսին քով կանգնած էր թիկնասպահ այն սպան ու խորհուրդ կու տար, թէ փոթորիկը խաղաղեցնելու համար հարկ է մարդ մը զոհել... «Ուրեմն գուն քու ձեռքովդ պիտի գործադրես վճիռը, որ պէտքի ես վստահ ըլլամ», ըսաւ անոր Պիղատոս: Ապա՛ Պիղատոս

դարձաւ ու հարցուց քահանաներուն. «Ի՞նչ է ձեր ամբաստանութիւնը»: «Ժողովուրդին կը սորվեցնէ տուրք չտալ կայսեր, եւ ինքզինք թագաւոր կը յարջորջէ, մահ կը պահանջենք Անոր», ձայնեցին ժողովուրդին մէջէն: «Ուրեմն ես ձեր թագաւորը խա՞չ պէտք է հանեմ», հարցուց: «Մենք կայսրէն դատ թագաւոր չունինք», պոռացին, «մահ Անոր»: Ու Պիղատոս ելաւ եւ մահապարտի փրշապսակը անցուց Անոր գլխուն ու յանձնեց սպային: Ու վայրենի հեղեղ մըն էր, որ սկսաւ յորդիլ. աղաղակ, հայհոյութիւն, հրմշտուք, ծաղրանք, ապտակ, նիզակ... Բայց ինք՝ այդ բոլորին մէջտեղ կանգնած՝ լուռ էր՝ արձանի պէս: Իր շուրջը աշխարհ փոթորկած ծով էր, բայց ինք կանգնած վեր ու խաղաղ՝ ինչպէս փարոս մը, կարծես դատապարտուելու չէր բերուած, այլ՝ պըսակուելու: Բայց իր երկնասլաց աչքերուն հուրը, թափանցող ճառագայթ, կը փալիլէր փշապսակին ներքեւէն: Իմ աչքերս հանդիպեցան Անոր աչքերուն: Ան նայեցաւ ինծի ուղղակի, գորովով ու անհուն կարեկցութեամբ... Ու կուրծքիս աակ հալեցաւ իմ սիրտս. չդիմացայ այլեւս ու ելայ եւ փախայ:

Կը խուժեն դպիր ու զինուորներ, դէմ առ դէմ Պետրոսի: Յովհաննէս եւ Թովմաս զգոյշ մէկդի կը քաշուին:

**ԴՊԻՐ.** — Ահա, աս ալ անոնցմէ է... Բէնէ՛... (Զինուորը կը յարձակի Պետրոսին վրայ՝ գայն բռնելու):

**ՊԵՏՐՈՍ** (ցնցուելով զինուորին ձեռքերուն մէջ). — Ո՛չ, ես անոնցմէ չեմ:

**ԴՊԻՐ.** — Ինչպէ՞ս թէ ոչ: Դուն ալ Անոր աշակերտներէն չե՞ս:

**ՊԵՏՐՈՍ.** — Չե՛մ, ըսի ձեզի:

**ԴՊԻՐ.** — Սուտ կը խօսիս. ես քեզ տեսայ, որ դաւիթը նստեր էիր:

**ՊԵՏՐՈՍ.** — Կը սխալիս. ես Զայն չեմ ճանչնար... Երբեք չեմ ճանչցած...

Անիծուած ըլլամ, եթէ Զայն ճանչ-  
ցած եմ...

ԴՊԻՐ (պահ մը աչիք դարձնելով դէպի  
Թովմասը). — Բոնեցէ՛ք, աս ալ ա-  
նոնցմէ է: (Դպիրը եւ գինուորը  
միաժամանակ կը փարին Թովմասի  
վերարկուին: Թովմաս նարպիկու-  
թեամբ կը սողակի իր վերարկուին  
մէջէն, գայն կը թողու ձերբակալող-  
ներուն ձեռքին մէջ, կը փախչի: Դը-  
պիր եւ գինուոր կը վագեն Թովմասի  
ետեւէն: Պետրոս, երեսը քովի պա-  
տին՝ յուզումէն կէս-ծունկի կը փըլ-  
չի, կու լայ հեծկլտալով):

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Ուրիշ ի՛նչ հարուած  
մնաց քեզի կրելու, Աստուած իմ:  
(Պետրոսին մօտ գալով՝ ձեռքը ա-  
նոր ուսին): Պէ՞տք է, որ մենք այս-  
քան տկարանայինք:

ՊԵՏՐՈՍ. — Երանի՛ մեռնէի:

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Հանդարտէ, Պետրո՛ս,  
ե՛լ:

ՊԵՏՐՈՍ. — Մի կոչեր զիս «Պետրոս»,  
Վէ՛մ, անոր տուած մականունովը.  
Իմ մէջս չկայ Վէ՛մ մը. ես շինուած  
եմ աւազէ եւ հողէ. սնապարծ, թըշ-  
ւառական եւ վատ վախկոտ մը:

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Այո, ես քեզ տեսայ,  
երբ քու սուրդ հանեցիր, որ Զայն  
ձերբակալելու եկողին զարնես, բայց  
Ան արգելեց:

ՊԵՏՐՈՍ. — Երանի՛ այդ սուրը իմ կողս  
խրէին... Ես՝ որ երդում էի տուեր  
մինչեւ մահ հետը երթալու:

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Տկար ենք, բոլորս ալ,  
Պետրո՛ս:

ՊԵՏՐՈՍ. — Ես իմ Տէրս ուրացայ, Յով-  
հաննէ՛ս. ես մեղաւոր մըն եմ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Միթէ Ան բարեկամ չէ՞  
մեղաւորներուն, որոնք կը գղջան:

ՊԵՏՐՈՍ. — Կը գղջամ, դառնօրէն կ'ար-  
տասուեմ, միայն թէ՛ արժանանայի  
Անոր ժպտուն նայուածքին:

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Անոր մեծ սրտին մէջ ա-  
պահոյ տեղ կայ քեզի ալ, Պետրո՛ս,  
ու մենք ամէնքս պիտի քալենք իր  
ճամբով: Ե՛լ:

ՊԵՏՐՈՍ (ուրի գալով, ու յանդիմանա-

կան՝ ինքն իրեն). — «Թաղաւոր» ու  
մենք՝ Անոր աշակերտները:

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Այո, փուշով պսակուե-  
ցաւ Ան, որպէսզի մարդիկ ճանչնան  
խաղաղութեան թաղաւորը:

ՊԵՏՐՈՍ. — Խաղաղութի՞ւն...: Ինչպէ՞ս  
կրնաս դուն խօսիլ տակաւին խաղա-  
ղութեան մասին:

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Ա՛յս է ճամբան խաղա-  
ղութեան... (Զայներ լսելով՝ կը  
նայի դուրսը: Դուրսէն՝ թափօրի  
ձայն, ամբոխ ու գինուոր): Ահա  
Գողգոթայի թափօրը:

ՊԵՏՐՈՍ. — Այո, նաեւ գինուորներ...  
Ահազին խաչին ներքեւ կը դանդա-  
ղի...

Ծայր կու տայ թափօրը: Նախ՝  
կը մտնեն Դաւիթ եւ Կիրենացի:  
Կը տեսնուի խաչին մէկ մասը,  
որ կը դողդոջայ: Ապա՝ կու գայ  
Մարիոս սպան՝ խաչին ճիշդ գը-  
լուխը. անոր կը հետեւի Բարթի  
Յեսուն, խաչը ուսին. մէկ-եր-  
կու քայլ կ'առնէ: Անոր անմի-  
ջապէս կը հետեւին Մագդաղիմէ  
եւ Մարթա: Բարթի Յեսու մէկ-  
երկու քայլ եւս կ'առնէ, կը սայ-  
թափի ու կէս մը ծունկի կ'իյ-  
նայ, խաչին ներքեւ ընկնուած:  
Մարիոս կը դիտէ պահ մը, եւ  
յանկարծ առաջ կ'ուստնու, կը  
բռնէ Կիրենացին եւ ետ-ետ կը  
բերէ:

ՄԱՐԻՈՍ ՍՊԱՆ. — Մօտեցիր, Կիրենա-  
ցի՛, դո՛ւն վերցուր խաչը:

ԿԻՒՐԵՆԱՅԻ (խաչին գլուխի կողմը կանգ  
առնելով՝ ձեռքը վրան). — Ուրեմն  
խա՛չը միայն ինծի բաժին:

Ամէնքը արձանացած կը մնան:

ՐԱԲԻ ՅԵՍՈՒ (ծունկի եկած տեղը, գը-  
լուխը վեր առնելով). — Տէ՛ր, թող  
դոցա...

(Վերջ երրորդ արարի)

### ՉՈՐՐՈՐԴ ԱՐԱՐ

Ընտանեկան բնակարան. պարզ կահաւորում. տունը՝ Մաքսապետ Սիմոնի. Մարթա սենեակը կարգի կը դնէ. Դաւիթ կ'օգնէ անոր:

**ԴԱԻԻԹ** (գործը դադրեցնելով). — *Ես երուսաղէմ կը վերադառնամ. մնացեալը դուն կը կարգադրես: Ամէնքն ալ հոս պիտի հաւաքուին:* (Կը մեկնի):

**ՄԱՐԹԱ** (Դաւիթի ետեւէն կանչելով). — *Հօրմէս անպաաճառ լուր մը բերէք:* (Կը վերադառնայ իր գրադումին: Իւրովի): *Ի՞նչ սրաով պաարաստութիւն ատենեմ ես: Առանց Անոր՝ ո՛վ ալ դայ այստեղ՝ միշտ պարասպ պիտի թուի տունս:* (Կ'երգէ):

Փշրուած սափոր՝ աղբիւրի քարին, կուրծքս կ'արիւնի, ծորան ու ծորան, Ես ինչպէս տատրակ նետէ

սարսափած՝  
Սիրտն իմ կը բաղձայ փախչիլ դուրս ինձմէ...

*Ա՛հ, որքա՞ն յողնած եմ:* (Կը նստի): *Ո՞վ եմ ես հիմա, — լքուած, անաէր, առանձին:* (Կ'երգէ):

Մարմինս նման է այս փլած սոււնին կտորած գերանին ու խախտած սիւնին...

(Չայներ կը լսուին դուրսէն): *Ա՛հ, կ'երեւի վերադարձան:* (Կը վազէ դէպի պատուհան ու կը դիտէ դուրսը): *Ո՛հ, Խե՛նթը:* (Կը փախչի ու կը կծկուի սենեակին մէկ անկիւնը):

Կը մտնէ Յուդա, մագերը խոլ, բերանը փրփրած:

**ՅՈՒԴԱ**. — *Ո՞ւր են, հոս ալ չեն... Ուր ալ երթամ՝ ամայի է աշխարհը, եւ չորջու՝ անդունդ:* Ասիկա Մաքսա-

*պետ Սիմոնի առունը չէ՞ միթէ: Մարթա՛... (Պատուհանին սեւին դըրուած կուծը կը վերցնէ, որ խմէ): Ա՛հ, չկայ, նոյնիսկ ուժս մը չկայ... Չորցած է ամբողջ աշխարհը. (Յանկարծ խելքը կորսնցնելով): Հա, հա՛, հա՛... Ես քահանայապետը խաբեցի: Ես Չայն չմատնեցի: Մի՞թէ կրնայի մեռցնել Չայն: Ես զիրենք խաբեցի: (Փնտռելով): Մի՛շտ է քսակս: (Իր խելքին վերադառնալով): Ո՛վ խաւար, քու սեւ պատմուճանիդ մէջ փաթթէ զիս... Բարեկամներս իսկ կը փախչին ինձմէ: (Յանկարծ տեսնելով Մարթան, վերան կը նետուի): Մարթա՛, Մարթա՛, դուն, որ բարի ես... պուտ մը ջո՛ւր...*

**ՄԱՐԹԱ** (նիչով մը փախչիլ կը փորձէ, բայց կ'իյնայ-կը մարի). — *Ա՛հ, ի՞նչ պատահեցաւ:*

Կը մտնէ Պետրոս, տխուր, առանց շուրջը նայելու:

**ՊԵՏՐՈՍ**. — *Ո՞վ ապաշխարութիւն, մեղքերու ամէնէն սեւը կրնայ լուացուիլ քու սեւ ջուրերուդ փրփուրին մէջ:*

**ՅՈՒԴԱ**. — *Ա՛հ, ինձի՛ ալ պուտ մը ջուր, կ'այրի՛մ...*

**ՊԵՏՐՈՍ** (յանկարծ տեսնելով Մարթան՝ կը վազէ, գլուխը վեր կ'առնէ). — *Ա՞յո ինչ է Մարթա՛, Մարթա՛...*

**ՅՈՒԴԱ**. — *Ո՞վ ես դուն:*

**ՊԵՏՐՈՍ** (միայն Մարթայով գրադած). — *Ա՛ն՝ որ քեզ պիտի չճանչնայ այսուհետեւ:*

**ՅՈՒԴԱ**. — *Պետրոսն է... Եղբայրս՝ Պետրո՛ս, մի՛ մերժեր զիս այդպէս: Ես արդէն մահուան կը դիմեմ... Գուտթ մը ջո՛ւր...*

**ՊԵՏՐՈՍ** (Անկիւնի կուծէն Մարթայի երեսին ջուր սրսկելով). — *Մարթա՛, Մարթա՛...*

**ՄԱՐԹԱ** (արթննալով). — *Ո՞ւր եմ ես... Ա՛յ, ոչի՛նչ, ոչի՛նչ... Սաստի*



մախացալ: (Պետրոսը տեսնելով):  
Դո՞ւն էիր: (Ինքզինք հաւաքելով  
դուրս կ'ելլէ):

ՅՈՒԴԱ.— Գաւաթ մը ջո՛ւր, Պետրո՛ս:

ՊԵՏՐՈՍ.— Սնմեղ արիւնը խմեցիր՝  
չյաղեցա՞ր...

ՅՈՒԴԱ.— Ա՛հ, արի՛ւնը, որուն աղի  
ովկիանոսին մէջ կը խեղդուիմ, Պետ-  
րո՛ս, սիրաս կը մարի... Ումպ մը  
ջո՛ւր... Եթէ ոչ՝ հանէ սուրդ ու  
զա՛րկ կուրծքիս...

Կը մտնեն Յովհաննէս եւ Մագ-  
դաղիներ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ (Յուդան տեսնելով).—  
Աստուած իմ... Ինչո՞ւ դեռ այս-  
քան սաւ մեղի...

ՅՈՒԴԱ.— Ո՞վ կը խօսի:

ՄԱԴԴԱՂԻՆԷ.— Ուրեմն դեռ չճանչնա՞լ  
ալ կը ձեւացնես:

ՅՈՒԴԱ.— Ա՛յ, քաղցր ձայնը Մարիա-  
մի... Մաքրուած, սրբուած սիրտ:

ՄԱԴԴԱՂԻՆԷ.— Ու չճանչցա՞ր Յովհան-  
նէսը:

ՅՈՒԴԱ.— Աչքիս խաւար է լիջած... Ա՛հ,  
Յովհաննէս, Սնոր «սիրած աշակեր-  
տը»... Ա՛հ, պուտ մը ջո՛ւր...

ՊԵՏՐՈՍ.— Ելիր-դնա՛ այլեւս, կորսը-  
ւէ՛:

ՅՈՒԴԱ (կարծելով, թէ Յովհաննէսն է  
Խօսողը).— Դթոտ Յովհաննէս, դո՞-  
նէ՛ դուն մի վռնտեր զիս: Պիտի եր-  
թամ արդէն. ահա՛ կ'երթամ... Ես  
թշուառ արարած մըն եմ՝ իմ Տէրս  
մտանած մը... (Խեցճութեան գա-  
լով).— Հա, հա՛, հա՛... Ես զա-  
նոնք խաբեցի: Ա՛հ, բան չեմ տես-  
ներ...

ՅՈՎՀԱՆՆԷՍ.— Բոլորս ալ նոյնն ենք,  
Յուդա՛. հիմա մե՛ր ալ աչքերը կը  
նային՝ առանց տեսնելու:

ՅՈՒԴԱ.— Տեսայ, այո՛, մեծ ոճիր էր,  
բայց ես կարծեցի, թէ պիտի չպա-  
տահի երբեք... Ա՛հ, ինչո՞ւ լուռ  
մնաց Ան... Ես կը սպասէի, որ Ան  
պիտի դործէր հրաչքներուն հրաչքը,  
բոլորը պիտի տապալէր ու հաստա-  
տէր իր թողաւորութիւնը... Ես կը  
սպասէի տակաւին. դամբրու վրայ

մուրճին մինչեւ վերջին հարուածը՝  
ես կը սպասէի տակաւին... Հա,  
հա՛, հա՛...

ՅՈՎՀԱՆՆԷՍ.— Կատարուեցաւ՝ ինչ որ  
պիտի կատարուէր:

ՅՈՒԴԱ.— Խենթ մըն եմ ես հիմա...  
Խաչի ողբերգութիւնը ե՛ս սկսած  
եմ, ու հիմա կ'ուզեմ զայն ես վեր-  
ջացնել... Ինձմո՛վ:

ՊԵՏՐՈՍ (Յովհաննէսին եւ Մագդաղեմա-  
ցիին նայելով ապշած).— Ի՞նչ ըսել  
կ'ուզէ:

ՅՈՒԴԱ (կը պատմէ ընդհատ բառե-  
րով).— Գացի ու քահանայապետին  
ճամբան առի. ըսի, որ անմեղ մար-  
դու որդի մը մատնեցի, ե՛տ առէք.  
չձգեցի զինք՝ մինչեւ սրահին դու-  
ռը. մտնեմ ըսի, պոռամ բոլորին:  
Զիս դուրս հրեցին. ներս շարեցի  
իրենց քսակը... Ա՛հ, ո՞վ պիտի մա-  
րէ այս դժոխքը սբախ մէջ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ.— Միայն Ա՛ն՝ որ ներեց  
թշնամիներուն:

ՅՈՒԴԱ.— Չեմ կրնար, ես չեմ կրնար  
Իրեն դիմել... Պէտք է ես իմ ձեռ-  
քովս սեւ անդունդին մէջ թաղեմ իմ  
մեղքս...

ՊԵՏՐՈՍ.— Յուդա, ի՞նչ ըսել կ'ուզես:  
(Միւսներուն): Խենթացած է...

ՅՈՒԴԱ.— Միթէ պարզ չե՞մ խօսիր...  
Ես ինչպէ՞ս նայիմ մարդոց աչքերուն  
այլեւս:

ՅՈՎՀԱՆՆԷՍ.— Այո՛, ես տեսայ: Երբ  
Ան քեզի նայեցաւ՝ աչքերուն մէջ  
խորունկ վիշտ կար, բայց ոչ բար-  
կութիւն...

ՅՈՒԴԱ.— Ես թողութիւն չեմ խնդրեր...  
Ես մարդոց մէջ տեղ չունիմ այլեւս:  
Բայց ես ուզեցի — ա՛յ խենթութիւն  
— իր վերջին մէկ նայուածքին դի-  
նովութեան մէջ մեռնիլ... Մօտեցայ  
Իրեն: Ան ինձի նայեցաւ խաչէն, ու  
չչնջաց. «Ամէն ինչ կատարուած է»:  
Ի սէր անոր նայուածքին՝ կաթիլ մը  
ջո՛ւր...

ՅՈՎՀԱՆՆԷՍ.— Պետրո՛ս, ո՞ւր է կուժը:  
(Մագդաղիներ կուժը կու տայ Յու-  
դայի. Յուդա կը փորձէ խմել, բայց  
չի կրնար, ջուրը վրան կը թափէ):

**ՅՈՒԴԱ.**— Ամէն ինչ կատարուած է : (Պատէն կախուած չուան մը յափըշտակելով) : Ահա՛ չուանը... (Զուանը վիզին նետելով) : Շտապեցնելու համար անարդ այս հողին դէպի անդունդ... (Դէպի դուրս կը վազէ) :

**ՅՈՎՀԱՆՆԷՍ** (փորձելով գայն կեցնել) .— Յուզա, մի՛ ըներ :

**ՅՈՒԴԱ.**— Թո՛ղ աուր, դեռ ամէն ինչ չէ կատարուած... (Յուզա դուրս կը նետուի) :

**ՊԵՏՐՈՍ.**— Կը կարծե՞ս, որ իրեն պէս մէկու մը համար յոյս մը ըլլայ...

**ՅՈՎՀԱՆՆԷՍ.**— Ամէն առուակ կը վազէ ինքն իր ակօսած ճամբով ու կը հասնի իր փնտռած վախճանին...

Կը մտնէ Մարթա, ձեռքին՝ խոշոր կուժ մը ջուր. կը լեցնէ փոքր կուժը, գոր Յուզա պարապ գտած էր :

**ՊԵՏՐՈՍ** (կը վերցնէ կուժը, կը խմէ անկէ, ապա մօտենալով Յովհաննէսին) .— Այսպէս ուրեմն, վարադոյրը իջած է :

**ՅՈՎՀԱՆՆԷՍ.**— Հին օրէնքի վարադոյրն էր անիկա, որ պատուեցաւ :

**ՊԵՏՐՈՍ.**— Այո՛, երկիրը դղրդաց... Հեթանոս սպան իսկ հաւատաց, թէ Աստուծոյ բարկութիւնն էր այդ :

**ՄԱՐԹԱ.**— Սպան... Ան կրնար աւելի կանուխ հաւատալ... Երանի...

**ՄԱԴԴԱՂԻՆԷ.**— Ինչ խոր էր մօրը վիշտը :

**ՅՈՎՀԱՆՆԷՍ.**— Երբ մայրը տեսաւ՝ խաչելութեան իր տառապանքը մոռցած, անոր ուղղեց իր առաջին մտածումը... Չանաց ժպտիլ եւ դիս ցոյց տալով ըսաւ մօրը. «Կի՛ն, ահա քու որդիդ» . եւ ինծի՛ «Ահա՛ քու մայրը» :

**ՊԵՏՐՈՍ.**— Ուրեմն դուն տակաւին ապրելու պատճառ ունիս, Յովհաննէ՛ս :

**ՅՈՎՀԱՆՆԷՍ.**— Դեռ ամէնքս ալ ունինք, Պետրո՛ս, շատ պատճառներ ունինք ապրելու :

**ՊԵՏՐՈՍ.**— Խաչի վրայ ուրիշ խօսք ալ բրա՞ւ :

**ՅՈՎՀԱՆՆԷՍ.**— Քանի մը կարճ խօսքեր միայն... Կիներուն՝ որսն է՝ ողբային՝ ըսաւ. «Երուսաղէմէ դուռարեր, մի լաք իմ վրաս, լացէ՛ք չմի՛ վրայ...» : Ու խաչին վամերը զարնող զինուորներուն եւ սպային ակնարկելով՝ ըսաւ. «Հա՛յր, ննրէ անոնց» . ու խօսեցաւ՝ հետը խաչուած աւազակներուն ակնարկելով. իր վե՛ջէն խօսքն էր. «Հա՛յր, հողիս քու ձեռքդ կ'աւանդեմ...» :

**ՊԵՏՐՈՍ.**— Իսկ մեր՝ աշակերտներու մասին որեւէ բան չըսա՞ւ :

**ՅՈՎՀԱՆՆԷՍ.**— Ան մեղի ամէն բան խօսեցաւ, երբ մենք իրեն հետ էինք :

Կը մտնէ Մաքսապետ Սիմոն, դանդաղ, ձեռքերուն մէջ սկիւն մը :

**ՄԱՐԹԱ** (կ'ողջագուրուի) .— Հա՛յր իմ, հա՛յր իմ... Աշխարհը կը փլչի, հա՛յր :

**ՄԱՔՍԱՊԵՏ ՍԻՄՈՆ.**— Մարդոց ազիտութեան մէջ Աստուած ինքն ալ կը չարչարուի :

**ՄԱՐԹԱ.**— Հա՛յր, ես շատ կը վախնամ քու վրադ. դուն պէտք է հեռանաս այստեղերէն, երթաս դէպի Վերին Դալիլիա :

**ՄԱՔՍԱՊԵՏ ՍԻՄՈՆ.**— Վստահինք Աստուծոյ, աղջի՛կս : (Սկիւնը Յովհաննէսին յանձնելով) : Պահեցէք այս սկիւնը. Վերջին Ընթրիքի բաժակն է անիկա : Արիմաթացին տուաւ, որ ձեզի յանձնեմ :

**ՅՈՎՀԱՆՆԷՍ** (սկիւնը երկու ձեռքով վեր բարձրացնելով) .— Թանկագին յիշատակ. ասիկա նշանն է մեր բոլորին միութեան :

**ՊԵՏՐՈՍ.**— Արիմաթացին հաւատացեալ մարդ էր :

Կը մտնէ Դաւիթ, վախով, վագ-վրգելով :

**ԴԱՎԻԹ.**— Մարթա՛, Մարթա՛, հարիւրապետը : (Ընդհանուր իրարանցում) :

Պետրոս եւ Դաւիթ հակառակ  
կողմի դուռնէն խոյս կու տան:

ՄԱՐԹԱ.— Փախիր դուն ալ, հա՛յր: Ան  
հիմա քեզ կը փնտռէ:

ՄԱՔՍԱՊԵՏ ՍԻՄՈՆ.— Աստուած մեզ  
այստեղ է դրեր, ու մենք հո՛ս պէտք  
է մնանք:

Կը մտնէ Մարիոս սպան, շուրջը  
դիտելով:

ՄԱՐԻՈՍ ՍՊԱՆ.— Գիտեմ, օտար մըն եմ  
ես այստեղ, միակ վայրը, ուր ես  
պէտք չէ երեւէի: Ես՝ որ ձեր Տէրը  
խաչեցի: (Ներկաներու դէմքէն սար-  
սուռ կ'անցնի): Այո՛, եւ իմ իսկ  
ձեռքերով: (Հանելով երկար սուրը  
մէջքէն): Ահա՛ դեղարդը, զոր ես ա-  
նոնց կողերուն խրեցի: (Կը մօտե-  
նայ Մարթային): Բայց Մարթա, ո՛չ  
դուն, ո՛չ քու հայրդ ինձմէ վախնա-  
լու պատճառ չունիք: Ես շատ տա-  
ռապանք պատճառած եմ ձեզի: Բայց  
հիմա եկած եմ ձեզմէ ներում խընդ-  
րելու: Ընդունէ զիս իբրեւ մէկ ան-  
դամը տունին:

ՄԱԳԳԱՂԻՆԷ.— Մօտեցիր, Մարթա՛, ես  
կը ճանչնամ մարդիկը: Անկեղծ է  
ան: (Մարթա տեղէն չի շարժիր):

ՄԱՐԻՈՍ ՍՊԱՆ.— Ես հեթանոս մըն եմ  
ձեր մէջ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ.— Անոր սիրոյն մէջ չկայ  
խտիր ո՛չ հրէի, ո՛չ հեթանոսի:

ՄԱՐԻՈՍ ՍՊԱՆ (մօտենալով).— Ուրեմն  
ի սէր Անոր՝ զոր դուն կը սիրէիր:

ՄԱՔՍԱՊԵՏ ՍԻՄՈՆ.— Քաջ եղիր, աղ-  
ջի՛կս, ներէ իրեն:

Մարթա վարանքով կը մօտենայ  
Մարիոս սպային:

ՄԱՐԻՈՍ ՍՊԱՆ.— Մարթա, ահա դուն,  
ահա հայրդ, ներէ՛ ինձի:

Մարթա եւ Մարիոս սպան իրա-  
րու ձեռք կ'երկարեն:

ՄԱՐԹԱ (բայց յանկարծ ետ քաշելով իր  
ձեռքը).— Ա՛հ, արի՛ւն, արի՛ւն:  
(Հառաչելով գետին կ'իյնայ ու կը  
մարի):

Իրարանցումով՝ ամենքը Մար-  
թային շուրջ կը հաւաքուին:

ՄԱՐԻՈՍ ՍՊԱՆ.— Մարթա՛, Մարթա՛...  
ՄԱԳԳԱՂԻՆԷ.— Շունչը վրան է սակայն:

ՄԱՐԹԱ.— Տէ՛ր իմ:

ՄԱՐԻՈՍ ՍՊԱՆ.— Ես եմ, Մարթա՛, քեզ  
միակ սիրողը...

Մագդաղիներ Մարթայի գլուխը  
վեր կ'առնէ: Մարիոս սպան,  
զայն իր թեւերուն մէջ առած՝  
կը փորձէ գետնէն վերցնել:  
Մագդաղիներ եւ Մարիոս սպան  
միասին դուրս կը տանին Մար-  
թան: Ներկաները լուռ կը հե-  
տեւին անոնց: Կը պարպուի սը-  
րահը: Կը մտնեն Թովմաս եւ  
Պետրոս, թոյլ փալուածքներով:  
Պետրոսին ձեռքը ուռկան մը  
կայ: Թովմասի ձեռքը՝ լաթեր  
ու առասանի փաթոյթներ, կը-  
ծիկներ:

ՊԵՏՐՈՍ.— Է՛հ, հը՛... Յոգնած եմ  
շատ:

ԹՈՎՄԱՍ.— Գո՞ւն ալ յոգնած մնացիր:  
ՊԵՏՐՈՍ (կ'երթայ դէպի պատուհանը,  
կը բանայ, կը դիտէ դուրսը).— Հը-  
րաչալի առաւօտ... Ո՞վ լոյս բարի,  
քու գալուստդ կեանք է՝ այս փոք-  
րիկ ու տխուր աշխարհին:

ԹՈՎՄԱՍ.— Ո՞ւր է, առնը մարդ չկայ:  
Կ'ըսէիր, թէ բոլորը հոս սլիտի հա-  
ւաքուին:

ՊԵՏՐՈՍ.— Որո՞ւ հարցնես: Անոնք դեռ  
երազներու ետեւէ են: Այսօր երկ-  
րորդ առաւօտն է... Կիներ՝ իւր ու  
խունկ առեր՝ գերեզման են գացեր,  
Գաւիթ պատանին ալ հետերնին: Գո-  
նէ՛ ան հոս ըլլար, պատառ մը բան  
կը ճարէր մեզի: Է՛հ, նստինք մեր  
ուռկանները նորոգենք նախ: (Կը  
նստի):

ԹՈՎՄԱՍ (Պետրոսին քով նստելով եւ  
ուռկանն ու չուանը բռնելով).— Նո-  
րոյենք մեր հին օրերը... Ուրիշ ի՞նչ  
մնաց մեզի:

ՊԵՏՐՈՍ.— Ի՞նչ կը մնայ տենչերէն, ե-  
րազներէն, հովերէն:



**ԹՈՎՄԱՍ** .— Ի՞նչ պիտի մնայ ձիւներէն , որոնք կ'օծեն բլուրները :

**ՊԵՏՐՈՍ** (ուռկանին խոշոր պատուածքները բանալով) .— Յովհաննէսին հինէն մնացած ուռկանն է . առի , որ գոնէ ասով սկսինք : Նորը ուրկէ՞ ճարեմ ես :

**ԹՈՎՄԱՍ** .— Պետրոս , ա՞յս պիտի ըլլար ուրեմն ամէն խոստումի վախճանը :

**ՊԵՏՐՈՍ** .— Մի յուսահատիր , Թովմա՛ս , մարդուս ամէնէն ապահով հարըստութիւնը իր ձեռքերուն աշխատանքն է :

**ԹՈՎՄԱՍ** .— Լա՛ւ , բայց մենք այս անասկ դործ նախապէս արդէն դիտէինք եւ ձղեր-հեռացեր էինք անկէ՛ աւելի մեծ գործերու համար :

**ՊԵՏՐՈՍ** .— Անոր աշակերտիլը մեզի շահ մը թողուց անշուշտ : Մենք հիմա տարբեր մարդիկ ենք՝ ձկնորս ըլլալով հանդերձ :

**ԹՈՎՄԱՍ** .— Մենք ձկնորս մարդիկ էինք , պէտք էր աւելին տենչայինք :

Կը մտնէ Դաւիթ , շնչատ ու շըւարած :

**ԴԱՒԻԹ** .— Ո՞ւր է Յովհաննէսը : Մարիամ զինք կ'ուզէ :

**ՊԵՏՐՈՍ** (ուռկանը ձգելով ու ոտքի ցատկելով) .— Ի՞նչ է , ի՞նչ կայ որ . . .

**ԴԱՒԻԹ** .— Գերեզմանը պարապ գրտանք . . . Ո՞ւր է Յովհաննէսը : (Դաւիթ դուրս կը վազէ) :

**ՊԵՏՐՈՍ** (գործը լքելով ու տղուն ետեւէն վազելով) .— Տղա՛յ , ի՞նչ է ըսածդ . . . Թովմաս , դուն չե՞ս գար : (Կը վազէ դուրս , տղուն ետեւէն) :

**ԹՈՎՄԱՍ** (անտարբեր ու նստած տեղը՝ գործը շարունակելով) .— Դեռ նոյն մարդն է . . . Շուտով կը բռնկի , շուտով կը մարի : Քիչ առաջ ինչ նոր ծրագիրներ կ'որոճար . հիմա ահա թողուց գործը ու վազեց նոյն երազին ետեւէն . . .

Կը մտնէ Մաքսապետ Սիմոն , ձեռքը լեցուն ուտելիքներով :

**ՄԱՔՍԱՊԵՏ ՍԻՄՈՆ** (ձեռքի կողովը մէկ-

դի ձգելով) .— Ի՞նչ էր պատահած . Պետրոսն ու Յովհաննէսը տեսայ , որոնք կը վազէին . . .

**ԹՈՎՄԱՍ** .— Վստահ եմ , որ հիմա արդէն հասած կ'ըլլան . . . (Կը ծիծաղի) :

**ՄԱՔՍԱՊԵՏ ՍԻՄՈՆ** .— Բան մը իմացա՞ր :

**ԹՈՎՄԱՍ** (միշտ գործը շարունակելով) .— Բան մը չհասկցայ . պատանին եկեր էր վազելով , թէ Յովհաննէսը կը փնտռէր . . . Կիները գերեզմանը բա՞ց գտեր են , պարա՞պ են գտեր , բաներ մը թոթովեց , գնաց :

**ՄԱՔՍԱՊԵՏ ՍԻՄՈՆ** .— Բայց Արիմաթացին իր ձեռքովը կնքել տուած էր ծանր քարը :

**ԹՈՎՄԱՍ** .— Գիտե՞մ ես : Պատանքուիլը ես դիտեմ . . . Ինչ որ պատահած է՝ քիչ ետք յայտնի կ'ըլլայ . . . Նրստէ՛ : Միթէ այսքան կարեւորութիւն պէ՞տք է տալ մեռելի մը :

**ՄԱՔՍԱՊԵՏ ՍԻՄՈՆ** .— Բայց . . .

**ԹՈՎՄԱՍ** .— Մեռած է , ամէն ինչ մեռած . Ա՛ն ալ մեռած , մեր յոյսերն ալ :

**ՄԱՔՍԱՊԵՏ ՍԻՄՈՆ** .— Բայց մարդուն մահէն ետքն իսկ ամէն ինչ չի կորսուիր :

**ԹՈՎՄԱՍ** .— Ես չեմ կրնար հասկնալ , թէ մարդուն մէջ դեռ բան մը ապրի՛ երբ ան մեռած է արդէն :

**ՄԱՔՍԱՊԵՏ ՍԻՄՈՆ** .— Ապրող մասը , մահէն ետքն ալ , մարմինը չէ անշուշտ , այլ ողջութեան ատեն անոր մէջ աճած անձը , նկարագիրը , հողին , այնպէս՝ ինչպէս ծաղիկ մը , որուն խամրումէն ետքն ալ մեր աչքերուն մէջ կը վառի անոր գոյնը , մեզ գինովցնող անոր բոյրը :

**ԹՈՎՄԱՍ** .— Է՛հ , արձանը կը փշրուի՛ որքան ալ դեղեցիկ ըլլայ :

**ՄԱՔՍԱՊԵՏ ՍԻՄՈՆ** .— Ոչ , Թովմա՛ս . դուն կրնաս արձան մը փշրել , բայց չես կրնար փճացնել այն գեղեցկութիւնը , որ մարմին առած էր այ՛ք արձանով . . . Այդպէս է նաեւ մարդուն մէջ հողին : Միտքդ բեր հիմա Բարբիի ապրած դեղեցիկ կեանքը .

միաքղ բեր Անոր արիութիւնը, Անոր համեստութիւնը, արդարադատութիւնը, ներողամտութիւնը, Անոր ինքնալստահ համարձակութիւնը. միաքղ բեր Անոր բարութիւնը, անհուն սէրը. . Ասոնք բաներ են, որոնք չեն կորսուիր մարմնին մահով, այլ կը տեւեն յետնորդներու կեանքին մէջ, իմ մէջ, քու մէջդ, անոր մէջ... Բոլոր անոնց մէջ, որոնք օր մը ճանչցած էին Չայն:

Կը մանեն Մարիամ եւ Մարթա, իրարու թելը ինկած:

**ՄԱՐԻԱՄ** (ինֆզինֆ ձգելով նստարանին վրայ).— *Մի՛րտս:*

Մարթա կը վազէ, ջուր կը բերէ ու կու տայ Մարիամին, որ խմէ:

**ՄԱՔՍԱՊԵՏ ՍԻՄՈՆ**.— *Ի՞նչ պաասհեցաւ:*

**ՄԱՐԻԱՄ**.— *Լո՛րս...*

**ԹՈՎՄԱՍ** (հեզնանֆով).— *Լո՞րս...*

**ՄԱՐԻԱՄ**.— *Անպատմելի՛ լոյս...*

**ԹՈՎՄԱՍ** (սրտնեղ ու գայրացած).— *Ասոնց մէջ նստած՝ կարելի չէ աշխատիլ:*

Թովմաս ուռկանն ու չուանները կը հաւաքէ ահապարանֆով ու կ'երթայ:

**ՄԱՐԹԱ** (կուծը Մարիամի ձեռքէն առնելով).— *Շատ վախցած է... Տէրը տեսաւ...*

**ՄԱՔՍԱՊԵՏ ՍԻՄՈՆ**.— *Հասկա ըսին, թէ դերեղմանը պարապ էր:*

**ՄԱՐԻԱՄ** (ինֆզինֆ հաւաքելով).— *Այո՛, պարապ էր, բայց ես Ձինք տեսայ:*

**ՄԱՔՍԱՊԵՏ ՍԻՄՈՆ**.— *Տեսա՞ր... Ինչպէ՞ս:*

**ՄԱՐԻԱՄ** (կը պատմէ հեւֆոտ).— *Աստուծոն. կանխեցինք. մտանք պարտէզ. սիրտս կը դողար. ինչպէ՞ս պիտի*

*վերցնէինք ծանր վէճը՝ կ'ըսէինք: Չարհուրեցանք. քարը թաւալած էր եւ... դերեղմանը պարապ:*

**ՄԱՐԹԱ**.— *Ու կեցած կու լայինք մեր վշտէն, թէ ալ կորսնցուցած էինք Չայն բոլորովին:*

**ՄԱՐԻԱՄ**.— *Յանկարծ փայլատակում, լոյս եւ ձայն մը. «Չէ աստ, քանզի յարեալ»: Ետիս դարձայ... Թուեցաւ ինծի, թէ ձիթենիի տերեւներէն մազուող լոյսին տակ ստուեր մը անուշ կը դողդղար. ըսաւ. «Կին դու, ինչո՞ւ կու լաս: Կարծեցի, թէ պարտիղպանն է. աղաչեցի. «Տէ՛ր, եթէ զիտես, թէ ո՞ւր վերցուցած են Չայն՝ ըսէ... (Կը հեկեկայ բարձրաձայն): Այն ատեն՝ Ան իմ անունս տուաւ՝ «Մարիամ»: Ա՛հ, քա՛ղցր ձայնը... Ճանչցայ. Տէրը ինքն էր... Իրեն վազեցի, յիմար-յիմար թեւերս երկարած իր պատմուճանի ծփանքին... «Րարբունի՛...»: Բայց Ան ձեռքով հակառակ նշան ըրաւ... անհետացաւ:*

**ՄԱՐԹԱ**.— *Իրական էր, Տէրը ինքն էր. լուսաւոր. հրաշալիառ տեսիլք. արեւու լոյսէն զօրաւոր:*

**ՄԱՐԻԱՄ** (անդադար հեկեկալով).— *Հիմա կու լամ տխրութենէս. կու լամ՝ ուրախութենէս. լոյսեր կ'անցնին հողիէս: (Կ'իյնայ, ինֆնիր վրայ կը ծալուի):*

**ՄԱՐԹԱ** (թելէն վերցնելով).— *Ել, Մարիամ՛, դուն պէաք ունիս հանդիստի:*

**ՄԱՐԻԱՄ** (Մարթայի թելին կոթնած՝ ոտքի գալով).— *Այո, ես հիւանդ եմ. ինձմէ ուրիշ խօսք մի՛ սպասէք... Ես հիւանդ եմ. մարմինս փուշ-փուշ կը մղմզայ:*

Մարթա եւ Մարիամ դուրս կ'ելլեն՝ իրարու կոթնած:

Կը մտնէ Պետրոս, ցնծութեամբ մէջ:

**ՊԵՏՐՈՍ**.— *Յնծութիւն, ո՛վ երկինք: (Ետեւէն կը հասնի Թովմաս, ուռկանը դեռ թելին տակ): Մի՞թէ աշխարհի բոլոր քարերը պիտի կարե-*

նային Ջայն բանտել մութ քարայրին մէջ:

ԹՈՎՄԱՍ.— Ի՞նչ է, Պետրո՛ս. չեմ կըրնար ետեւէդ հասնիլ: (Մաքսապետ Սիմոնին դառնալով): Արդեօք ասո՞ր ալ խելքին եկաւ...

ՊԵՏՐՈՍ (կը շարունակէ խօսիլ օդին).— Տէրը չէ մեռած. Ան պիտի յաղթէ աշխարհին...

ԹՈՎՄԱՍ.— Ինչե՞ր կը խօսիս... Մի՞թէ խաչի վրայ չմեռաւ Ան, ու մի՞թէ մենք Անոր պատանքուիլն ու դերեղման դրուիլը չտեսանք:

ՊԵՏՐՈՍ.— Ոչ, Թովմա՛ս, ոչ. Ան չէ մեռած, կ'ապրի...

ԹՈՎՄԱՍ.— Կ'ապրի՞, ո՞ւր...

ՊԵՏՐՈՍ.— Հոս եւ ամէն տեղ: Տէրը յարուցիւն առած է. աւետեցէք աշխարհին...

Պետրոս կը վազէ դուրս. Մաքսապետ Սիմոն կը հետեւի Պետրոսին:

ԹՈՎՄԱՍ (ձեռքի ծրարները գետին կը դնէ, ու զարմանալով կը կրկնէ).— Տէ՛րը. դերեղմանէ՛ն. յարուցի՛ւն. առա՛ծ է: (Կը մնայ այլայլած, զարմացած, վերացած, ապշահար, լուռ):

Կը փոխուին լոյսերը: Երեկոյ: Կը մտնեն Մարթա եւ Դաւիթ: Սեղանի պատրաստութիւն. հաց. գինի, մումեր, խունկ, բաժակ, մական:

ԹՈՎՄԱՍ (կը շարունակէ ապշահար կրկնել).— Տէ՛րը. դերեղմանէ՛ն. յարուցի՛ւն. առա՛ծ է...: Դաւի՛թ, կը հաւատա՞ս, որ Տէրը կ'ապրի...

ԴԱՎԻԹ.— Կը հաւատամ: Դո՞ւն:

ԹՈՎՄԱՍ (կը սկսի օգնել սեղանի պատրաստութեան, զարմանալով կրկնելով նոյն խօսքերը).— Տէ՛րը. դերեղմանէ՛ն. յարուցի՛ւն. առա՛ծ է. կ'ապրի՛:

Կը մտնեն Յակոբոս Տեառնեղ-

բայր, Յովհաննէս, Մաքսապետ Սիմոն, Պետրոս:

Յովհաննէսի ձեռքերուն մէջ է սպիտակ պատանֆը:

ՅՈՎՀԱՆՆԷՍ.— Մահուամբ յաղթեց մահուան եւ աշխարհի կեանք պարգեւեց: ՅԱԿՈԲՈՍ ՏԵԱՌՆԵՂԲԱՅՐ.— Օրհնեալ է յարուցիւնը լոյսին...

ՅՈՎՀԱՆՆԷՍ (կտաւները թովմասին երկարելով).— Ահա՛ դերեղմանին մէջ ձգած իր մաքուր կտաւները...

ԹՈՎՄԱՍ (ֆննելով).— Խնկուած իր պատանքն է... Ես իմ ձեռքովս առերպատանքեր էի... Կը հաւատամ, Յովհաննէ՛ս... Տէրը յարեալ ի մեռելոց:

ՊԵՏՐՈՍ.— Ան չլքեց իր փոքրիկ հօտը:

ՅՈՎՀԱՆՆԷՍ.— Ան այսուհետեւ միշտ մեզի հետ է, ո՛ւր որ մենք հաւաքուինք իր անունով...

Լուսաւոր տեսիլք մը կը փայլէ յանկարծ: Ամէնքը տեսիլքին կ'յառին:

ՏԵՍԻԼՔԻՆ ՉԱՅՆԸ.— Խաղաղութի՛ւն ընդ ձեզ...

ՊԵՏՐՈՍ.— Ի՛նքն է, իր ձա՛յնը...

ԹՈՎՄԱՍ.— Տէ՛ր իմ եւ Աստուած իմ: ՏԵՍԻԼՔԻՆ ՉԱՅՆԸ.— Դացէք եւ այսուհետեւ լուսաւորեցէք աշխարհը, եւ Հողին ձեզի հետ է մինչեւ կատարած: (Տեսիլքը կ'անհետի):

ԹՈՎՄԱՍ.— Տէրը խօսեցաւ:

ՄԱՐԹԱ (փարելով Սիմոնին).— Հեռանա՛ք, հա՛յր... Ես շատ կը վախնամ:

ՄԱՔՍԱՊԵՏ ՍԻՄՈՆ.— Աղջի՛կս:

ՄԱՐԹԱ.— Երթանք Մարիամին քով. ան պէտք ունի ինձի:

ՊԵՏՐՈՍ.— Ինչպէ՞ս եղաւ Մարիամը:

ՄԱՐԹԱ.— Ան շատ հիւանդ է. շարունակ կը դառանցէ... Լո՛յս՝ կ'ըսէ, դիս լոյսին տարէք, դ՛րսէ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ.— Խեղճ տառապա՛ծ կ'ին, այսքան դորաւոր ցնցում՝ շատ է իրեն պէս հիւծած սրտի մը համար:



**ՄԱՐԹԱ.**— Ես կը վախնամ, հա՛յր, հոն երթանք: (Կը քաշէ հօրը թեւէն, որպէսզի միասին մեկնին):

Յանկարծ դէմ կ'ելլէ Մարիոս սպան:

**ՄԱՐԻՈՍ ՍՊԱՆ.**— Խաղաղութիւն ու լոյս ամէնուր: (Մարթա նիչով մը կը փարի հօրը): Մարթա՛, ես լոյսը տեսայ... Ես այստեղ էի... փայլատակեց. պահակները զարհուրեցան... Ու ես Անոր լոյսը տեսայ: Ես կը հաւատամ լոյսի. Ան ի՛մ ալ Տէրս է հիմա: Առաջ մէջս կար միայն քու սէրը: Հիմա կայ նաեւ Անոր լոյսը:

**ՅՈՎՀԱՆՆԷՍ.**— Այդ լոյսը զոհողութիւն կը պահանջէ:

**ՄԱՐԻՈՍ ՍՊԱՆ.**— Կը զոհեմ ամէն ինչ. կը հրաժարիմ փառքէ, պաշտօնէ, ունենալու համար այդ լոյսին խաղաղութիւնը... (Կը մօտեցայ եւ կ'անցէ Մարթայի եւ Մաքսապետ Սիմոնի ձեռքերը): Ներէ՛ ինծի, սիրէ՛ զիս...

**ՅԱԿՈԲՈՍ ՏԵԱՌՆԵՂԲԱՅՐ.**— Ներումը աստուածային շնորհք է. մարդուն կարողութիւնն է՝ սիրել միայն:

**ՄԱՐԹԱ.**— Կը սիրեմ քեզ, Մարիո՛ս: (Կ'ողջագուրուի Մարթա եւ Մարիոս):

Կը մտնեն միւս աշակերտները:

**ՅՈՎՀԱՆՆԷՍ.**— Առաջին պտուղ հեթանոսաց:

**ՅԱԿՈԲՈՍ ՏԵԱՌՆԵՂԲԱՅՐ.**— Եւ Անոր լոյսը մշտական կապն ըլլայ ձեր միութեան:

**ՅՈՎՀԱՆՆԷՍ.**— Եւ դուն՝ մեր ընտիր պետը: (Կը յանձնէ հովուական գաւազանը):

**ՊԵՏՐՈՍ.**— Պահենք անոր սուրբ յիշատակը: (Սկիւիւր առնելով՝ Յովհաննէսին կու տայ):

**ՅՈՎՀԱՆՆԷՍ** (բարձրացնելով սկիւիւր).— Այս է բաժակը, որմէ Ան ըմպեց սիրոյ եւ լոյսի վերջին հաղորդը: (Սկիւիւր կը յանձնէ Յակոբոսին):

**ՊԵՏՐՈՍ.**— Ողջոյն տուէք խաղաղութեան:

**ՅԱԿՈԲՈՍ ՏԵԱՌՆԵՂԲԱՅՐ** (բարձրացնելով բաժակը).— Այս է նոր կեանքի հացն ու զինին: Ամէնքդ արբեցէք ասկէ:

Բոլորը կը մօտեցան մէկ-մէկ, կ'ըմպեն բաժակէն. Մարթա եւ Մարիոս միասին կը մօտեցան, կ'ըմպեն: Մարիամ ներս կը մտնէ գայթելով, օրօրուելով, հիւանդ:

**ՄԱՐԻԱՄ.**— Ումպ մը լոյս, ինծի՛ ալ... (Ներկաներու զարմանքին տակ, կը մօտեցայ սկիւիւր):

**ՄԱՐԹԱ** (վեր բռնելով Մարիամը, որպէսզի չիյնայ).— Դուն հիւանդ ես, քոյր իմ:

**ՄԱՐԻԱՄ.**— Թող տուր ըմպեմ. ես հիւանդ չեմ. ես լոյսով արբեցած եմ, ես կ'ուզեմ լոյսով արբենալ... (Յակոբոս բաժակը կը խոնարհեցնէ, որպէսզի Մարիամ ըմպէ անկէ: Մարիամ կ'ըմպէ ու նորէն կ'ըմպէ): Կաաարեալ խաղաղութիւն կ'իջնէ հոգւոյս... Լո՛յս... (Մարիամ հազիւ արտասանած՝ կ'իյնայ գետին):

Ամէնքը Մարիամի մօտ կը վազեն:

**ՄԱՐԹԱ.**— Քո՛յր իմ...

**ՄԱՐԻՈՍ ՍՊԱՆ** (Մարիամին գլուխը վեր առնելով).— Շունչը մարմինէն մեկնած է...

**ՅՈՎՀԱՆՆԷՍ.**— Ճշմարիտ պատարադ...

**ՄԱՔՍԱՊԵՏ ՍԻՄՈՆ.**— Առաջին նահաաակը ԼՈՅՍԻ ԵՒ ՍԻՐՈՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ...

(Վարագոյր եւ վերջ)

## ՇՐՋԱՆՆԵՐ

Սէրերը իրենց մութ շրջանը կ'ունենան,  
եղանակը նախնական,  
եղանակը հասունութեան,  
դարը գիտութեան,  
վերագարքնումի.  
չե'ն մեռնիր երբեք:

Մենք, որ գիտենք  
անապատները ներքին,  
մենք, որ այնքան մինակ գիտցած ենք  
ըլլալ,

որ սորված ենք  
ապրիլ անոր դրացնութեամբ՝  
ձգողութեան մեր տեսութիւնը ունինք:

Սէրերը իրենց  
շրջանները պիտի բոլորեն  
պատմութեան պէս մարդկութեան,  
եւ այսպէս երբե'ք  
պիտի չմեռնին:

\*\*

Գրիշնա՝ ինչպէս  
բոլորին հետ միաձուլուիմ,  
երբ իմ ներսս  
մէկ չեմ հիմա:  
Քայքայումի պատմութիւնը այս ներքին,  
սարսափելի է աւելի,  
քան այն երկրորդը՝  
Փիզիքական երեւոյթէն կազմալուծման:

Օ՛, չեմ կրնար հիմա յորդիլ:  
Ամբարտակը կայ՝ կ'արգիլէ  
գեղումները աւելորդ  
(ամբարտակը՝ մարմիններու անհաղորդ,  
ելեկտրական թելերու,  
մեքենական արօրներու ֆանդուած,  
կառոյցներու կղմինտրէ)  
ամբարտակը ամլացումի երախն է...

Գրիշնա, հիմա  
ձանձրացած եմ շրջանակներէն կեանքի:  
Հիմա չեմ կրնար տեսնել ինքզինքս  
հեռուն,  
կենցաղով մը բրածոյ ու ապահով:

Արժուան ինչպէս՝  
իմ մարտական կառքիս մէջ  
ձգած գէնքերս՝ կու լամ:

Մի մօտենար, Գրիշնա...

## ՋՐԱՊՏՈՅՏ

ջուրեր օր մը  
մէջդ հոսեցան  
եւ ձեռք առին  
ատկէ ետք միշտ  
երբ կողքիդ էի  
կը զգայի թէ  
կանանչ ծովեր  
միսերուդ մէջ կը շարժէին  
յորձանուտին մէջ իրենց  
կորսնցնելով գիս

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ն. Վ Ի Ր Ա Գ Ե Ա Ն

ՅԱՐԱՒԹԵԱՆ ՕՐԸ

— Ի՞նչ է անունդ, — հարցուց հայ պաշտանեան:

— Արամ, — պատասխանեց ազան:

— Մի՞թէ դուք հա՞յ էք:

— Ոչ: Ես միայն ամերիկացի եմ:

— Չարմանալի է:

— Ի՞նչը զարմանալի է:

— Բայց ձեր անունը հայկական է: Արդեօք ձեր հայրը կամ մայրը...

— Ոչ, — կտրեց մարդուն խօսքը Արամ, — մայրս ալ, հայրս ալ դուստ մերիկացիներ են:

Պաշտանեան ուղեց դիանալ, թէ ինչպէս արուած է այդ անունը իրեն:

— Չեմ գիտեր, — բռաւ ազան՝ քիչ մը համբերութիւնը հատած: Կ'ուզէր կարճ կապել ու երթալ դորձին: Անունը՝ անուն էր: Իր հո՞գը, թէ ինչպէս դրուած էր իրեն: Կրնար Լեւրի դրուած ըլլալ, կրնար ձիւմ ըլլալ:



Իրիկունը ազան սիրազարմաւ, բնթրեց, յուայուեցաւ եւ նստեցաւ պարակղի ձառին աակ: Մայրը ծաղիկները կը ջրէր: Մէկէն միտքը եկաւ աստուան խօսակցութիւնը ու հարցուց:

— Մամա, ի՞նչ անասել անուն է Արամը. ո՞վ դրաւ այդ անունը ինձի:

Մայրը անակնկալի եկաւ. դարձապա՞ն՝ նայեցաւ ազան, որ նստած՝ պատասխանի կը սպասէր: Չայն չհանեց, դարձաւ իր դորձին, բայց սիրար մնաց

աչիկո՞ծ: Ծաքը, կարծես մաարերելով ազուն հարցական նայուածքը, ետ դարձաւ, բռաւ:

— Հայկական անուն է, — ու աւերցուց, — ես դրի:

Կրկին յուայուեցաւ, դարձաւ՝ որ արդան շնչմարէ իր յուղումը. դարձաւ պարճացաւ, թէ ինչո՞ւ յուայուեցաւ, չէ՞ որ մաղուց անցած, մտոցուած պատմութիւն էր, թէ եւ ինք ամէն օր իր հայ Արամին մասին կը մտածէր: Քանի՞ տարի առաջ էր. քսա՞ն, աւելի՞: Լացր եկաւ: Կէս ձղեց ջրաուքը, ներս մտաւ ու նեաուեցաւ բաղկաթոտին սրայ:

Տղան հասաւ ետեւէն:

— Ինչո՞ւ յուայուեցար: Երածս պարզ հարցում մըն էր:

— Ինչո՞ւ հարցուցիր:

Տղան պատմեց աստուան խօսակցութիւնը: Մայրը լռեց:

— Թէ ոչ, — տղան, ասանց շարունակելու՝ շեշտակի նայեցաւ մօրը աչքերուն: Մայրը սարսափեցաւ: Տղան նեաուեցաւ մօրը սիրը:

— Ներէ, մա՞յր, ներէ, գիտեմ, սր մաքուր ես, — ու սկսաւ համբուրել մօրը աչքերը, ձեռքերը, — քեզի պէս մաքուր մէկը կարելի չէ գանել Ամերիկայի մէջ՝ հիւսիսէն հարաւ, արեւելքէն արեւմուտք, ներէ, մա՞յր, նո անանկ քսել յուայուցի:

Մայրը կաւ յար:

Հոգ մի բներ, մամա՛, հոգ մի բներ:

Տղան մօտ քսան տարեկան էր, երկայնահասակ, դեղին մազերով: Ան կապուած էր միայն մօրը: Փոքր եղած ատեն, կը յիշէր, մարդ մը կու դար երբեմն, առանց մօրը հետ խօսելու՝ մեծ եղբայրը կ'առնէր ու կ'երթար. յետոյ՝ սկսաւ եղբայրը դալ՝ առանց անծանօթ մարդուն:

— Մամա, պաամէ, — կ'աղաչէր տղան:

— Ի՞նչ պատմեմ, տղա՛ս, անցած պատմութիւն է, որ միայն ինծի կը վերաբերի եւ քեզի հետ բնաւ կապ չունի:

— Բայց անո՞նք, կ'ուզեմ դիտնալ, թէ ինչո՞ւ այդ անունը դրուած է ինծի:

— Այդ անունը, — սկսաւ պատմել կինը, — հայ աղու մը յիշատակին համար դրած եմ քեզի: Ամուսնութեանս պատճառով հայ-սֆուլս կէս ձգած էի, յետոյ, երբ մեծ եղբայրդ ծնաւ ու մէկ տարեկան եղաւ, սկսայ իրիկունները շարունակել ուսումս: Ընդամէնը մէկ տարի մնացած էր ինծի՝ վկայական առնելու համար: Հայրդ այն ատեն սկսաւ հեղհետէ ջղայնանալ ինձմէ, նոյնիսկ նստելու ձեւս զայրոյթ կը պատճառէր իրեն: Իրեն պէս տաքարիւն մէկը չէի, լուռ մէկն էի. պարել, վազել, խնդալ, խաղալ շատ չէի սիրեր: Կը սիրէի աւելի տուն մնալ: Ատեն-ատեն միասին պատկերասփիւռ կը դիտէինք. երբեմն հօրդ կողմը կը դառնայի, անա՛նկ ձեւով մը ինծի կը նայէր, որ կարծես հում-հում պիտի ուտէր զիս: Օր մը հարցուցի, թէ ինչո՞ւ անանկ կը նայիս:

— Կ'ատեմ քեզ, — ըսաւ:

Աշխարհը կարծես դլխուս փլչեցաւ: Սկսայ լալ: Այնքան կը սիրէի զինք եւ այնքան կապուած էի իրեն, մինչ ինք միայն կ'ատէր զիս: Զաւակս կար, ու քեզմով ալ յղի էի: Լացս տեսնելէն ետք մեղմացաւ քիչ մը, սկսաւ դուրդուրալ վրաս, բայց սիրտս կոտրած էր արդէն: Որոշեցի դպրոց երթալ, որպէսզի թէ՛ ինք ազատ զգայ ինքզինք, թէ՛ ես: Բայց անշուշտ այդպէս չէր կրնար շարունակել:

Կինը կանգ առաւ:

— Հապա Արամին պատմութի՞ւնը,

— կըկնեց աղան նոյն հարցումը:

Կինը թեթեւ մը ժպտեցաւ եւ ասպաշարունակեց.

— Այլեւս խորունկ խրամատ մը կար հօրդ եւ իմ միջեւ: Երբ վերսկսայ հայ սքուլ յաճախել, մեր դասարանին մէջ տղայ մը երեւցաւ, անունը՝ Արամ, շատ հէնտարմ մէկն էր, բայց ես քիչ կը հաւաքրքրուէի իրմով, քանի որ հակառակ հօրդ ատելութեան՝ ես հաւատարիմ կը մնայի իրեն: Ես ուրիշ ոչ մէկ անձով կը հետաքրքրուէի: Դասս կ'ընէի ու, հազիւ պահը վերջացած՝ ուղղակի տուն կու գայի բայց Արամ սիրահարուեր էր ինծի: Ինքն ալ ինծի պէս լուռ, բարի մէկն էր: Սկսաւ խօսիլ հետս՝ դպրոցէն, դասէն, տունէն, երբեմն ալ սիրային ապրումներէ: Օր մը, երբ հօրդ հետ միասին տունէն դուրս ելանք, տեսայ, որ Արամ մեր առջեւէն կ'երթայ: Հօրդ ըսի, որ այդ տղան իմ դասընկերս է: Արամն ալ մեզ տեսաւ եւ սկսաւ հօրդ նայիլ: Հայրդ ջղայնացաւ: Ա՛լ անկէ ետք, Արամ սկսաւ մեր ճամբան հսկել: Արամին երեւումով հայրդ զիս լքելու մտքէն հրաժարեցաւ, մտածելով, որ Արամին հետ կ'ամուսնանամ: Ես ալ, ինչ մեղքս պահեմ, մինչեւ Արամին հանդիպիլս, շատ կը վախնայի տիվարսէն: Արամին հանդիպելէս ետք, վրաս ապահովութիւն մը եկաւ: Հայրդ հասկցաւ ատիկա եւ սկսաւ աւելի ջղայնանալ:

— Օր մըն ալ Արամէն հարսանեկան հրաւէր ստացանք: Զմեղադրեցի զինք: Բնական է պիտի ամուսնանար: Բայց վախ մը մտաւ սիրտս ու վախս իրականացաւ: Հայրդ, Արամին ամուսնանալու լուրը առնելէն անմիջապէս ետք, լքեց զիս ու ամուսնալուծուեցանք: Այդ միջոցին դուն ծնար: Ի՞նչ ընէի: Արամը աւելի կը սիրէր զիս, քան հայրդ, ես ալ շատ կը յարգէի զինք, ուստի՝ անոր յիշատակին քու անունդ Արամ դրի:

Կինը վերջացուց ու նայեցաւ տղուն, ետքը նորէն շարունակեց.

— Հայրդ լքեց զիս ու հետը տարաւ մեծ եղբայրդ. Արամը ամուսնացած էր, մինակ դուն մնացած էիր ինծի եւ դուն



էիր իմ Արամս : Աւելի ուշ , հետս ամուսնանալ ուղղողներ եղան , բայց մերժեցի , քանի որ նոյն պատմութիւնը պիտի կրկնուէր :

— Հիմա ո՞ւր է , — հետաքրքրուեցաւ աղան :

— Չեմ դիտեր ուր է , բայց հասցէն պայուսակներէս մէկուն մէջ ըլլալու է :

Տղան դնաց , խուզարկեց պայուսակները , դտաւ , բերաւ մօրը քով , զդուշութեամբ բացաւ : Շատ հին թուղթի կտոր մըն էր , գրեթէ անընթեռնելի , անունը կար , մականունը՝ ոչ :

— Ինչ է մականունը :

— Հիմա մոռցած եմ :

— Բայց այս ի՞նչ տեսակ վէպ է , — զարմացաւ տղան :

Մայրը չպատասխանեց : Ուշ էր : Առաւ աղուն ձեռքէն հասցէն ու քաշուեցաւ իր սենեակը :

\*\*

Տղան միտքը պահած էր փողոցին անունը եւ որոշած էր անպայման անցնիլ այդ փողոցէն ու տեսնել , ճանչնալ Արամը :

Օր մը , մտաւ այդ փողոցը , դանդաղեցուց ինքնաշարժին արագութիւնը , հասաւ տան թիւին եւ կանդ առաւ : Արդեօք հո՞ն էր տակաւին : Աօտեցաւ , դրտաւ յարկաբաժինին մուտքը , առանց յայտնի ընելու կարգաց նամակատուիին վրայի անունը : Ի զուր : Օտար անուն մըն էր : Ուրեմն մարդը փոխադրուած էր ուրիշ տեղ : Չարմացաւ , որ մայրը այդ մասին բան չէր դիտեր : Յիշեց մօրը պատմութեան բոլոր մանրամասնութիւնները :

Իրիկունը , նորէն հարցուց մօրը Արամին մասին , հասակին , մարմինին , աչքերու գոյնին , մազերու ձեւին մասին , զատ-զատ :

— Ինչո՞ւ այդքան կը հետաքրքրուելիս , — հարցուց մայրը :

— Քու կեանքիդ բոլոր մանրամասնութիւնները կ'ուզեմ դիտնալ , մամա՛ ,

— ըսաւ աղան , — ու աւելցուց , — ո՛չ միայն ներկայ օրերուդ պատմութիւնը , այլեւ՝ ծնած վայրկեանէդ մինչեւ վերջին վայրկեանը :

Մայրը յուզուած՝ փարեցաւ տղուն ու տաք-տաք համբուրեց երեսները :

\*\*

Կինը անողոք հիւանդութեամբ մը հիւանդանոց ինկաւ : Ամէն իրիկուն , տղան գործէն ուղղակի մօրը կ'երթար ու անոր սնարին մօտ կը նստէր մինչեւ ուշ զիշեր : Կ'ուզէր իմանալ անոր ամէն մէկ շշուկը ու կատարել բոլոր բաղձանքները : Կը դիտէր անոր դէմքը , որ հակառակ դեղիննալուն՝ փայլուն պայծառութիւն մը ունէր : Կարծես Մարիամ Աստուածածինը ըլլար պառկողը :

Կինը մրմռաց :

— Ի՞նչ կ'ըսես , մամա՛ , — ծռեցաւ աղան՝ ականջը մօրը շրթներուն :

— Մէկ անգամ տեսնէի , — ըսաւ կինը ու աչքերը լեցուեցան :

— Հա՞յրս :

— Ոչ , — ըսաւ կինը՝ դուրսը վեր շարժելով :

— Հապա ո՞վ :

— Միւսը :

— Արա՞մը , — հարցուց կայծակի արագութեամբ :

Կինը լուռ մնաց եւ արցունքի կաթիլները սահեցան այտերն ի վար :

\*\*

Ուշատես , տղան մտամոլոր տուն վերադարձաւ : Ինչպէ՞ս դտնէր Արամը : Եթէ մականունը դիտնար՝ դիւրին էր : Հայ ալ չէր , որ հայկական մականուններ շարէր մօրը առջեւ : Ով դիտէ ո՞ւր էր ան հիմա , թերեւս ալ մեռած էր : Ինչպէս մտատանջութեան մէջ : Կ'ուզէր մօրը վերջին փափաքը կատարէր , խղճախայթ չձգել սրտին : Քանի մը անգամ հեռաձայնի տետրակը ձեռք առաւ , նա-

յեցաւ ուշի-ուշով, բայց յուսահատ՝ կրկին աեղը դրաւ:

Իրիկուն մը, մօրը քովէն շատ տը- խուր վերադարձաւ: Ի՞նչ կեանք էր ի- րը: Հայրը աղօտ կերպով կը յիշէր մի- այն, իր աշխարհը ամբողջ մայրն էր, որմէ պիտի բաժնուէր յաւիտեան: Տը- խուր-տխուր շրջեցաւ սենեակներուն մէջ, կեցաւ մօրը մահճակալին քով, փղձկե- ցաւ, լացաւ երկար, ետքը նորէն սկսաւ աննպատակ թափառիլ սենեակներուն մէջ. ոչինչ կ'ուզէր ընել, նոյնիսկ չէր ուզեր պառկիլ: Կանգ առաւ պահարան- ներուն առջեւ, սկսաւ դզրոցները բանալ- դոցել: Աչքին զարկաւ մօրը վկայականը, առաւ ձեռքը, կարդաց, ետ տեղը պիտի դնէր, երբ յանկարծ միտքը փայլաա- կեցաւ: Այո՛, այո՛: Առաւ թուականը ու յաջորդ օրը, գործէն ետք, ուղղակի հայ- սքուլ դնաց եւ ներկայացաւ անօրէնու- թեան գրասենեակը: Ուզեց մօրը դպրոց յաճախած շրջանին աշակերտներու ան- ւանացանկը. տուին: Մէկ-մէկ անուննե- րը աչքէ անցուց, գտաւ, ան էր, — Ա- րամ Մինասեան: Արձանագրեց մօտը ու շնորհակալութիւն յայտնելով՝ վագեց հիւանդանոց:

— Այսօր ուշացար, — ըսաւ մայրը նայելով աղուն աչքերուն, որ ուրախու- թենէն կը փալփէր:

Տղան լուռ մնաց:

— Ի՞նչ ունիս, — կակազելով հար- ցուց մայրը:

Տղան նորէն չպատասխանեց:

Յաջորդ օրը, առաջին գործը ըրաւ փնտռել Արամը: Գիշերը գտաւ հեռա- ձայնին թիւը: Առաւ հասցէն: Ծանր բեռ մը ինկաւ ուսերէն: Ինչպէ՞ս այդ մասին չէր կրցած առաջ մտածել: Իրիկունը, դործարանին վերջին զանգին հետ՝ դուրս թռաւ, հասաւ տուն, լուացուեցաւ, հա- դաւ մաքուր հագուստները եւ ճամբայ ելաւ մարդուն հասցէին:

\*\*

Պարոն Արամ Մինասեանը երբ առ- տու արթնցած էր՝ ուրախ-ուրախ հա-

գած էր իր հագուստը ու գործի դացած: Իրիկունը տուն վերադարձած էր սրտի նոյն թեթեւութեամբ ու իր հիւանդ կնոջ պզտիկ ծառայութիւններ մատուցանելէ ետք, նստած էր ձօճաթոռին ու թերթ կը կարդար: Հաղիւ քանի մը աող կարդա- ցած՝ ոտքի ձայներ լսեց ու դրան զանգը զարնուեցաւ: Սկիզբը խորհեցաւ, որ ծանուցումներու համար է: Որոշեց չբա- նալ դուռը, բայց կրկնուեցաւ զանգին ձայնը: Մօտեցաւ: Դրան սեմին, տաղ- նապ արտայայտող նայուածքով երիտա- սարդ մը կանդնած էր, որ հարցուց.

— Ի՞նչ էք պարոն Արամ Մինաս- եանը:

— Այո, — ըսաւ մարդը, — ի՞նչ կը փափաքիք:

— Կ'ուզէի քիչ մը խօսիլ ձեզի հետ:

— Հրամայե՛ք:

— Ես, — սկսաւ տղան, — ես ալ Արամ կը կոչուիմ: Քանի մը օրերէ ի վեր ձեր հասցէն կը փնտռէի ու, վերջա- պէս, գտայ հայսքուլի տոմարներէն:

— Հայսքուլի՞, — զարմացաւ մար- դը:

— Այո, գուք մօրս՝ Պէթի Հեմիլթը- նի հետ հայսքուլի վկայական առած էք, ես Պէթիի տղան եմ, կ'ուզէի ձեզմէ կարեւոր բան մը իմանալ:

Արամ Մինասեան լուսնէն ինկածի երեւոյթ մը առաւ: Անմիջապէս չկրցաւ ըմբռնել, թէ այդ պահուն ինչ կ'անցնի- կը դառնայ շուրջը: Տղան զգաց Մինաս- եանի շփոթը, բէթնէ ժպիտ մը ուրուա- գծեց դէմքին ու կրկնեց խնդրանքը.

— Շաա կարեւոր է, կ'աղաչեմ. մայրս ծանր հիւանդ է. չէ՞ք յիշեր մայ- րս, Պէթին:

Մինասեան յանկարծ բռնեց աղուն ձեռքը.

— Դուք Պէթիին տղա՞ն էք:

— Այո:

Մինասեան կարծէք պիտի իյնար: Բռնեց աղուն ձեռքէն եւ պատշգամ ա- ռաջնորդեց:

— Պատմէ, պատմէ՛ Պէթիի մա Ու տղան պատմեց ամէն ի՞ յայտնեց մօրը ըսողականքը.

— Կ'աղաչեմ, մի մերժէք, ասոր մէջ ձեր կնոջ հանդէպ անհաւատարմութեան հարց չկայ: Մայրս պիտի մեռնի: Մի' մերժէք:

Ինչպէս մերժէր, իր հոգին, ամբողջ կեանքը պատրաստ էր տալու, միայն թէ՛ անդամ մը տեսնէր Պէթիի արեւի պէս փայլուն գէմքը:

Տղան մեկնեցաւ. ինք մնաց հոն: Կծիկի պէս քակուեցան յուշերը: Ա՛խ, Պէթի, Պէթի:

Կինը, մտահոգ՝ ելաւ պատշգամ.

— Ո՞ւր ես, ինչո՞ւ ներս չես գար:

— Գնա՛ պառկէ, — ըսաւ Արամ եւ ուղեց շարունակել յուշերուն ողեկոչումը: Սիրեր էր ամբողջ հոգիով եւ, իր կարդին, քանի անգամ ըսած էր. «Ա՛խ, դոնէ մէկ անգամ տեսնէի Պէթին»: Քանի տարի անցած էր, քսան տարի կ'ըլլար: Ամուսնութենէն առաջ որքա՛ն ըստ պասած էր անոր: Յաճախ սրաէն կ'ըսէր իրեն, թէ հով մը պիտի բաժնէ գանոնք եւ Պէթին իրեն պիտի արուի: Սպասած էր երկար, բայց ի գուր: Ուրիշ աղջիկներու սիրտհարուած էր, բայց անոնցմէ ոչ մէկուն առիթով սրաէն խորունկ ձայներ լսած էր, մինչ Պէթիին ձայնը միշտ կը հնչէր ականջին:

Գիտէր, որ թաղէն անոր անակնկալ հեռացումը իր պատճառով եղած էր, բայց ո՞ւր հաստատուած էր, չէր գիտեր, չգիտցաւ: Չստիպեց իրեն, սրտին ըսածները սուտ բաներ կարծեց: Եւ տակաւին չէ՞ որ սատանան ալ կար. գիտէր, թէ հո՛ն՝ ուր սէր կայ՝ հոն Աստուած ալ կայ, իսկ հո՛ն՝ ուր Աստուած կայ՝ սատանան բեղուն գործունէութիւն ցոյց կու տար: Պէթիէն յոյսի նշոյլ մը անգամ չէր մնացած, երբ ամուսնացաւ...

Հիմա, երբ մտղերը մեծ մասով ձերմկած են, ուրկէ՛ ուր, ահա անոր արդան կու գար՝ զինք հրաւիրելու: Պիտի երթար, անշո՛ւշտ պիտի երթար:

Չկրցաւ քնանալ:

Աշխարհը քանի՛ միլիոն տարի առաջ բաժնուած էր արեւէն ու տակաւին մինչեւ հիմա միայն արտաքին կեղեւը պաղած էր ու ներսը հալած ժայռերու

փոթորիկ կար, ու փոթորիկը կ'արթննար, կ'արթննա՛ր...

Ու ինք քանի՛ անգամ ըսած էր Պէթիին, որ միլիոն տարիներ պէտք են զինք մոռնալու համար:

Առտու գործի ղնաց, հանգիստ չըզցաց, ձյեց գործը եւ ուղղուեցաւ հիւանդանոցի կողմը: Վարէն կարմիր վարդերու փունջ մը դնեց եւ սրտատրոփ վեր բարձրացաւ. կարծես վաթսուեմեայ մարդ մը չէր, այլ՝ պատանի մը, անփորձ սիրահարի մը երեւոյթով:

Թեթեւ մը զարկաւ զանգը, ձայն չկար: Կամաց մը բացաւ գուռը, յառաջացաւ անաղմուկ: Կինը, թմրեցուցիչներու աղբեցութեան տակ՝ առտուան դէմ կրցած էր քնանալ: Չշարժեցաւ բնաւ: Մինասեան երկար նայեցաւ անոր: Կարծես հրեշտակ մը ըլլար պառկողը: Օ՛, յօնքերը: Նայեցաւ, չկշտացաւ, ծռեցաւ ապա եւ համբուրեց ճակատը: Կինը հազիւ բացաւ աչքերը.

— Ես եմ, Պէթի՛, Արամ Մինասեանը, — ըսաւ ու փղձկեցաւ:

Պէթին կարծես երազի մէջ էր: Սկիզբը շանդրադարձաւ, թէ ինչ կ'անցնի-կը դառնայ շուրջը, բայց երբ տեսաւ, որ կը կրկնուէր անունը, աչքերը աւելի բացուեցան ու պայծառացան. «Արա՛մ», ձչաց ու արցունքը սկսաւ հոսիլ աչքերէն: Արամ գրկեց անոր դալկացած դըլուխը ու սկսաւ համբուրել ազահաբար:

— Պէթի, ասիկա իմ յարութեան օրս է, — ըսաւ:

— Ի՛մ ալ, — ըսաւ կինը, — ու շարունակեց, — որքա՛ն կ'ուզէի անգամ մը տեսնել քեզ: Հիմա այլեւս հանգիստ եմ, փափաքս կատարուեցաւ: Գիտե՞ս, ամուսինս զիս լքեց, երբ ամուսնանալը լսեց: Բայց դուն ինչպէ՞ս գիտցար, որ հոս կը գտնուիմ:

— Տղադ գտաւ զիս ու պատմեց ամէն բան:

— Ծնորհակալ եմ, որ եկար, Արա՛մ, կարծես կեանքս վերադարձուցիր ինձի: Գիտե՞ս ինչ: Ամուսնալուծուելէս ետք, ամէն օր քու մասին սկսայ մտածել: Երբեմն հեռաձայնի քու թիւերդ կը դար-

նէի, բայց քու «հըլօ»դ հաղիւ լսած՝ կը  
վոցէի: Ատիկա ինծի բուականութիւն  
կու աար, կը սիրէի քեզ, Արամ, լուրջ  
էիր, հէնտարմ; ու երբ երկրորդ զաւակս  
ծնաւ՝ քու անունովդ կոչեցի զինք:

Մինասեան մտաբերեց: Ինք ըսած էր  
Պէթիին, որ հեռաձայնէ ու Պէթիին խոս-  
տացած էր: Ուրեմն այդպէս: Այդ գոց-  
ւող հեռաձայները իրմէ էին:

— Ես ալ, Պէթի, խորհեցայ, որ  
մոռցար զիս: Քեզ կորսնցնելէս ետք ամ-  
բողջ աշխարհին մնաք բարով ըսի: Ա՛խ,  
կ'ըսէի, ինչու Աստուած սէր դրած է  
սրտերուն մէջ եւ երազ ստեղծած. ա-  
ռանց անոնց ապրէինք չէ՞ր ըլլար:

Պէթիին ինք փափաքած էր տեսնել Ա-  
րամը, որուն պիտի պատմէր իր զաղտնի  
սէրը, բայց Արամ առիթ չէր տար, յոր-  
դած էր ու տարիներու կուտակած սէրը  
կը ջրվիժէր շրթներէն:

— Նայէ՛, Պէթի, դեռ մինչեւ հիմա  
տարեդարձներ կը տօնեմ, վկայականիդ,  
այսինչ կամ այնինչ երազին տարեդար-  
ձը, Ժպիտներուդ, խօսքերուդ տարե-  
դարձը, բոլոր, բոլոր՝ յիշատակներուդ  
տարեդարձը:

Պէթիին աչքերէն արցունքը աւելի ա-  
ռատ կը հոսէր: Ամուսինէն օր մը իսկ  
ասանկ խօսքեր չէր լսած:

\*

\*\*

Արամ Աինասեան սկսաւ ամէն օր  
այցելութեան երթալ Պէթիին: Կնոջ ծե-  
րունի հայրն ու մայրն ալ կու դային,  
քոյրերը, ազդականները: Անոնք վաղուց  
լսած էին Արամի մասին ու հիմա, երբ  
զայն կը տեսնէին Պէթիին մօտ, հարա-  
զատ փեսայի մը պէս կը դիմաւորէին  
զինք:

Շաա չանցած՝ Պէթիին մեռաւ: Մե-  
ռելատան մէջ այնքան զարդարած էին  
զինք, որ կարծես հրեշտակ մը քնացած  
էր դադաղին մէջ: Թաղեցին: Շատ մարդ  
չկար յուղարկաւորութեան, բայց երբ  
ընտանիքին անդամները շարուեցան ցա-  
ւակցութիւններ ընդունելու համար՝ Ա-  
րամը շարքին մէջ մտցուցին: Տեսակ մը  
զղացում կ'ուռեցնէր անոր սիրտը՝  
պայթելու աստիճան, — Պէթիի ընտա-  
նիքին յարգանքը, որուն կը միանար Պէ-  
թիին վերջին անդամ տեսած ըլլալու թե-  
թեւութիւնը: Յիշեց տարիներ առաջ ը-  
րած երդումը, որ եթէ վերստին Պէթիին  
տեսնէ՝ դումար մը պիտի նուիրէ եկե-  
ղեցիին: Որոչեց տուն հասնելուն պէս  
պատրաստել չէ՛ք: Ամբողջութեամբ  
բուժուած էր սիրտը: Կարծես ուրախու-  
թենէն պիտի պոռար...

ՆԵՐՍԷՍ ՎԻՐԱՊԵԱՆ





Հպարտ եմ, որ իմ աշակերտներու շարքին երկար տարիներ ունեցած եմ պր. Աճառեանը: Ան մէկն է անոնցմէ, որոնք պատիւ կը բերեն այն դպրոցին, ուրկէ անցած են:

ԱՆԹՈՒԱՆ ՄԵՅԷ

## Մ Ե Ծ Ը

### ՀՐԱՉԵԱՅ ԱՃԱՌԵԱՆ

Իրենց պատրաստութեան մարզերէն դուրս գանուող նիւթերու անգրադարձող մարդիկ յաճախ կ'ապաւինին գեղեցիկ նախադասութիւններու եւ, անդիտութիւններ ծածկելու յայտ կամ անյայտ պատճառներով՝ ուժ կու տան ընդհանրացումներու:

Մեր Ժողովուրդի փառքերէն Հրաչեայ Աճառեանի ծննդեան 100ամեակը յիշեցնելու պարզ պարաքն անգամ այդ վախը կը պատճառէ մեզի, որովհետեւ, թող խոստովանութիւն ըլլայ, Աճառեանի գործերէն աւելի՝ Աճառեանի եւ իր գործերուն մասին գրուածները կարդացած ենք մենք եւ մեր արամագրութեան տակ գտնուող անոր Ժառանգութեան մէկ մասը թղթատած ենք պարադայարար միայն, կարգ մը ստուգումներու համար:

Առասպելը վարակիչ է սակայն, որ սկսաւ կազմուիլ իր անունին շուրջ, երբ դեռ քսան տարեկան չէր եղած, Փարիզի մէջ, մեծանուն արեւելագէտներու ներկայութեան հայերէնի մասին կարդացած իր գեկուցումներուն ընթացքին, հիացումէն ապշահար անոնց ակնարկներուն տակ:

Կարդացէք քիչ անդին իր իսկ թելադրանքով դրի առնուած յուշերէն պզտիկ հատած մը՝ «Գիտութեան մասուցած ծառայութիւններս» եւ չափով մը հասկնալի կը դառնայ այն բազմարդիւն գորութիւնը, որ յաճախ չի պատահիր մարդկային կեանքին մէջ եւ քանի մը դարը հազիւ մէկ անգամ կը յայտնուի սակաւ ընտրեալի մը հետ: — Ընկալելու հազազիւա չնորհ, ճանչնալու հզօր կիրք, յղացումներու նորութիւն, ընդգրկուած նիւթերուն

հանդէպ մշտավառ սէր, քիչով չըրաւարարուելու պապակ, յիշողութեան հեքիաթային ունակութիւն, ու աշխատունակութիւն մը, որ առասպելական չափերու հասած յափշտակութիւն էր իր մէջ, առհասարակ իր մեծագործութիւններուն ու մեծութեան:

«Նրա հրատարակած ու անտիպ երկերի թիւը անցնում է մի քանի հարիւրից, իսկ ընդհանուր ծաւալով կարող է կազմել աւելի քան 10.000 տպագիր էջ», կը գրէ իր աշակերտներէն Գառնիկ Ստեփանեան:

«Դժուար է պատկերացնել, թէ մի մարդ կարող է այդքան քան անել, եւ սակայն արուած է, եւ այն էլ ինչպիսի հիմունքեամբ, ինչպիսի բարեխղճութեամբ», կը ըստազանէ իր աշակերտներէն միւսը՝ փրոֆեսէօր Էդուարդ Աղայեան:

Իսկ յուշագրական իր էջին մէջ անոր անձը դիմանկարած արուեստաբան Ռուբէն Զարեան կը հաստատէ իր կարգին, որ՝

«Անտեսանի արածը մի մարդու գործ չէ, այլ մի ամբողջ հաստատութեան: Անտեսանի մօտ կազմած ընկերներս ասում էին, թէ նա թողել է այնքան ձեռագիր, որ լիովին բաւական է մի երեք, նոյնիսկ չորս գիտնականի ծանրակշիռ վաստակ կազմելու համար»:

Աճառեանի մասին խօսած կամ գրած անձերուն մէջ չկայ մէկը, որ անոր նուաճած քանակական ու որակական այս զարմանահարաչ առատութեան դիմաց յայտնած չըլլայ իր գաբմանքը: Կը պատմեն նոյնիսկ, որ երբեմն Աճառեանը ինք եւս մատնուած է նոյն կացութեան: «Յաճախ եմ ակամատես եղել», երբ, կանգնած դրանց առաջ, ինքն էլ գարմացել է. — «Այս բոլորը մի մարդ է գրել, այն էլ մի աչքով»:

Այդ վաստակին մինչեւ անգամ պատմութեան միայն ծանօթ անձին քիչ կը թուին նախանձելի տիպոսները: Արդարեւ, լեզուաբան ըսես Աճառեանին համար՝ քիչ է, հայագէտ ըսես՝ քիչ է, դիւանական՝ քիչ, մտաւորական՝ քիչ, դիւտարար՝ քիչ, նորարար՝ քիչ, ակադեմիկոս՝ քիչ, անչափելի անոր վաստակին դիմաց ուրիշ չափերու եւ չափանիշերու պէտքը կը զգայ մարդ ու պարապը կը լեցուի անչափելի հիացումով:

Ու վաստակին հետ նաեւ վաստակաւորը, մարդը, որ մարդկային իր բարեմասնութիւններուն ներշնչականութեամբ նուազ հարուստ չէր, մասնաւոր հայ մարդը, որ նեարդներով կապուած էր իր ժողովուրդին, հայրենիքին, երկրւոյն՝ անոնց յաղթանակներուն ու պարտութիւններուն առջեւ, ազգային մեր սրբութիւններուն պահպանման համար անգիջող, նոր յաւելումներու հաշտոյն նախանձախնդիր, կորովի, քաջ, զոհաբերող:

Ծագումը անյայտ բառերուն վրայ, անուններուն, քերականական ձեւերուն վրայ լոյս նետելու իր մնայուն արբեցումին հետ, Աճառեան պաշտամունք ունէր արդէն ծանօթին, ստոյղին, նուիրագործուածին հանդէպ եւ սրբապղծութիւն կը համարէր անոնց նկատմամբ գիտական յարգանքի որեւէ թերացում:

Կը բաւէ յիշել իր անգիջող կեցուածքը, պայքարը՝ յանուն մեսրոպեան ուղղագրութեան, ընդդէմ պետական հոռոտորտակէզ հաստատուած Արեղեանի սարքածին, այնպիսի՝ չըրջանի մը: Երբ աղղային սրբութեան մը համար բաշ թօթուող ունէ՛ մարդ, հանճարեղ ու վաստակեալ ըլլար ան թէ պարզ քաղաքացի՝ կ'ոչնչացուէր իսկոյն: Ինք անծանօթ չէր ամէն ինչ՝ հասկացողութիւն, սրբութիւն, նուիրապետութիւն ու ժառանգութիւն տակնուվրայ ընող հար իրաւադարգին անողոք բրտութեան, այլ անյողողղ մնաց դարերուն սրբագործածը դաւանող իր տեսակէտին վրայ, ի սրբութեան անցեալին ու հայ ժողովուրդի միւս հատածներուն հետ ժառանգական կապը պահելու համար անդոր տառապանքներու մատնուած մեր մտաւորականութեան: Ինչպէ՞ս միւս մարդերուն, նաեւ լեզուական հայրենասիրութեան խոր, անդիմադրելի սպրումին մէջ, Աճառեան ստեղծեց աւանդութիւն մը, որ անպարտուղ չի կրնար մնալ, ճշմարտութեան ճանապարհէն մէծ զրկանքներով ու երբեմն մահուան զնով ստեղծուած բոլոր աւանդութիւններուն պէս:

Ու իր ստեղծած աւանդութիւնը անպատու չմնաց առաջին հերթին իր առիթով:

Չենք գէշեր որով երախտապարտ պէտք է ըլլանք, Հայաստանի այսօրուան չնչնանութիւններուն, առանձին հաստատութիւններուն, հայ մտաւորականութեան, չենք զիտեր, բայց պէտք է արձանագրուի երախտադատութիւն մը ա՛յն իրականութեան համար, որ եօթանասունական թուականներուն, յարգելով կամքը մեծ դիւանականին, նրբանի մէջ «Արմատական բառարան»ը լոյս ընծայեցին մեսրոպեան ուղղագրութեամբ:

Բոլոր մեծ իրագործումները արդիւնք են, արդիւնք եղած են հաւատքի զօրութեան, եւ երեւի այդ հաւատքն է կրկին, որ մշակոյթի մարդերուն մէջ արդիւնաւորման իր դըրդումէն ետք, կ'անդրադառնայ նաեւ մարդուն մարդկային բնաւորութեան վրայ, արմատաւորելով անոր դրական կողմերը ու հետո կացուցանելով գոյն փոտաբերող շեղումներէ, զիջումներէ, վերականուցելու ակարութիւններէն ու յարմարողական ձեւազեղումներէ, որոնց զոհերը այնքան շատ եղան մեր մէջ:

Աճառեան տարրեր խստնուածք ունէր, ու իր կենսագրութեան ծանօթ մարդերը պիտի չգփուարանան նմանցնել զինք առաջին քրիստոնեաներուն, որոնք, իրենց հաւտաքին հաստարիմ մնալու յափշտակութեան մէջ՝ արհամարհեցին հալածանքի, քարկոծման, բանտարկութեան ու խաչելութեան բոլոր սպառնալիքները ու ձղեցին մարդկութեան իրենց տառապազին ցնորքներուն կենսայորդ կտակը:

Յատկանշական պարագայ մը, պատմուած իր կողմէ.

«Այն կարն շրջանում, որ ես ապրեցի Մառի հետ, լաւ ուսումնասիրեցի նրա անձնաւորութիւնը: Չափազանց բարի, բնկերական եւ ազնիւ մարդ էր... Մառը ինձ հարցրեց.

«— Ի՞նչ պիտի անէ՛ք դուք այստեղ:

«— Ուսուցիչ եմ եւ սիրում եմ ուսուցիչ մնալ, ծառայելու համար իմ ժողովրդին:

«— Բայց դուք գիտէ՛ք, թէ ինչքան տառապալի է հայ ուսուցիչի վիճակը. այստեղ ձեզ ոչ ոք չի գնահատի. դուք կը մնաք խեղճ ու թշուառ. եկէ՛ք ինձ հետ Պետերբուրգ, ձերի համար աշակերտեցէ՛ք ինձ մի տարի, ռուսերէն կը սովորէ՛ք... եւ դուք կը լինէ՛ք նշանաւոր գիտնական:

«Ես պատասխանեցի, թէ աւելի լաւ եմ համարում մնալ ազատ ուսուցիչ եւ ապրել ու ծառայել իմ հարազատ ժողովրդին մէջ»:

Ու մնաց իր ժողովուրդին մէջ, ու տասնեակ տարիներ ու տասնեակ շրջաններու վարժարաններէն ներս վարեց իրեն սիրելի պաշտօնը, ապա բարձրացաւ պետական համալսարանի փրոֆեսէօրական ամպիոնին, նոր հորիզոններ բացաւ զինք խանդավառութեամբ շրջանպատող ուսանողներուն մտքին, այդ դիրքին վրայ հաշտ աչքով չդիտեցին զինք նոր մարդ կերտելու յաւակնութեամբ աղմկող իշխանութիւնները, վար առնուեցաւ ամպիոնէն, բաւ չհամարեցին այդ զրկանքը մեծահոշակ դասախօսին, բանտերու խուցերուն մէջ ենթարկեցին զինք նաեւ քաւարանային կարմիր խստութիւններուն, մերժեցին իր դործերուն հրատարակութիւնը, խժրժել տուին իր դիտական դրոյթները, ո՛չ դրելու եւ ոչ ալ աւանդելու արտօնութիւն արուեցաւ իրեն ամբողջ երկու տարի, 37ի չարաշուք օրերէն մինչեւ 39: Միայն պատերազմի նախօրեակին եւ անասելի պայմաններու տակ էր, որ վերահաստատուեցան իր իրաւունքները, ու վերսկսաւ գործի դա՛րձեալ առանց տրտունջի, առաջուան թափով, առանց ոչինչ ըսելու «իր բացակայութեան մասին. կարծէ՛ք նախորդ օրը ընդհատուած դասն էր, որ շարունակուում էր... կարծէ՛ք երկու տարուայ կուտակուած պաշարն էր բեռնաթափում հանոյ՛քով, բաժանում սիրայօժար»:

Այդպէս, դառնութեան բոլոր բաժակներն ըմպելէ ե՛տքն անդամ, Աճառեան, մեծերուն վայել մեծութեամբ մը՝ պահեց իր հոգեկան կորովը, հաւատքը՝ իր առաքելութեան հանդէպ, իր ժողովուրդին հանդէպ, որուն ընծայած նոր հատորներուն հետ՝ տուաւ նաեւ հոյլ մը աշակերտներ, տյսօրուան մտաւորականներուն ու լեզուաբաններուն մէկ կարեւոր տոկոսը, արդիւնք՝ յետ բանտարկութեան ծաւալած իր եռանդուն գործունէութեան:

Եկած էր, պիտի ըլլար, եղա՛ւ: Հարուստ՝ իւրացումներով, խորացումներով, ծաւալումներով ու բիւրեղացումներով, հարստութիւններու նոյն որակներով հարստացնելով նաեւ իր սիրելի ժողովուրդին մշակոյթը:

Հետագայ էջերուն՝ իր մօտիկ-մերձաւորներէն կը մէկտեղենք քանի մը հատուած՝ ի մասին իր անցած ճանապարհներուն, նուաճումներուն, կրած դառնութիւններուն, փառքին ու վարքին, ո՛չ անպայման իր հմայքը թարմացնելու մտքով, այլ յօրինակ մեր ամէնուս, որ էսպէս պէտք ունինք հաղորդուելու մեծերու մեծ կիրքին, պէտք ունինք վարակուելու անոնց ստեղծագործ խանդով, հաւատքով, պէտք ունինք անոնց սկզբունքային տմբութեան, աւանդներու եւ աւանդոյթներու վրայ դուրդուրալու յամառութեան, ծառայութիւնը ընախօսական պէտքի վերածած անոնց հրակէզ պապակներուն, Աճառեանի օրինակին...

## Հ. Ա Ճ Ա Ռ Ե Ա Ն

### Գ Ի Տ Ո Ի Թ Ե Ա Ն Մ Ա Տ Ո Ի Ց Ա Ծ

### Ծ Ա Ռ Ա Ց Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր Ս

1. Լազերը անգրագէտ ժողովուրդ էին, նրանց լեզուն ուսումնասիրուած չէր: 1893 թուականին, երբ գեռ 17 ասրեկան էի, ես մտայ նրանց մէջ, կազմեցի նրանց լեզուի բառարանը, համեմատական քերականութիւնը, հաւաքեցի երգեր եւ խօսակցութեան նմոյշներ եւ կազմեցի առաջին լազերէն ձեռնարկը, որ եւ Ֆրանսերէն թարգմանելով հրատարակեցի Փարիզում...

2. Իմ անձնական սուղ միջոցներով ճանապարհորդելով Կովկաս, Տաճկաստան եւ Պարսկաստան, Ռոտոստոյից մինչեւ Սպահան, ուսումնասիրել եմ հայերէնի գրեթէ բոլոր բարբառները, կազմել եմ 30 բարբառի բառացանկը, որ եւ հրատարակել եմ իմ «Արմատական բառարան»ում: Հրատարակել եմ 6 հայ բարբառի ամբողջական ուսումնասիրութիւնը, նիւթեր ունեմ նաեւ ուրիշ բարբառների ուսումնասիրութեան համար, որոնք տպագրութեան լոյսին են սպասում: Իմ ուսումնասիրած բարբառներից 14ը արգէն անհետացած են՝ 1915 թուականի համաշխարհային պատերազմին զոհ գնալով: Ես փրկել եմ այդ բարբառները յաւիտենական կորստից եւ նրանց հրատարակութիւնը մեծ ծառայութիւն է գիտութեան համար:

3. Հիմնուելով այդ բոլոր ուսումնասիրութեանց վրայ, կազմեցի առաջին ձեռնարկը հայ բարբառագիտութեան, որ հրատարակեցի նախ Ֆրանսերէն (իբրեւ իմ գիտերտացիտն) եւ յետոյ աւելի ընդարձակ՝ հայերէն: Սրանով ես հիմք գրի մի նոր գիտութեան, ինչպէս ասաց եւրոպական քննադատութիւնը: Այդ գիտութիւնը այժմ մուտք է գործել համալսարանում եւ այլ բարձր ախի գպրոցներում:

4. Կազմեցի հայերէնի մեծագոյն գաւառական բառարանը, ուր հաւաքել եմ 30.000 գաւառական բառ: Ուրիշ հաւաքածուներ նրանից շատ աւելի պակաս են: Ամենամեծը, որ է Ամատունու բառարանը, ունի միայն 16.000 բառ:

5. Կազմել եւ հրատարակել եմ «Հայերէնի արմատական բառարան»ը 6 հատոր եւ մի յաւելուած, բոլորը 9000 էջ, ապակետիպ, գրուած իմ ձեռքով (տպուած պիտի լինէր 4000 էջ): «Արմատական բառարան»ներ ունենք յունարէն (Բուասակ), լատինարէն (Վալդէ-Մեյէ), ալբաներէն (Գոստաւ Մեյէր), սլավական լեզուներ (Բեռնեքեր), պարսկերէն (Հոոն), լիթվաներէն



(Տրաուաման), թուրքերէն (Վամրերի, բայց իմ «Արմատական բառարան»ը իր մեծութեամբ գերազանցում է բոլորին: Վերոյիշեալներից Հոռնինը ունի 300 էջ, ամենամեծը՝ Բուասակինը, 1200 էջ: Իմ «Արմատական»ը գերազանցում է ուրեմն նրանցից Յից մինչեւ 13 անգամ: Դարուս մեծագոյն հնգերոպագէտներից մէկը՝ Մեյէն, քննադատելով այս գիրքը, ասաց. «Ո՛չ մի երկիր, ո՛չ մի ժամանակ, ո՛չ մի լեզու նման կատարեալ աշխատութիւն չի արտադրած»: Իսկ Խորհրդային Միութեան մեծագոյն հայագէտը՝ Մառը, գրում է.

«Պր. Անտեանի աշխատութիւնը, իմ կարծիքով, երբ ամբողջութեամբ ապագրուի, կը դառնայ խոշոր իրադարձութիւն հայոց լեզուի լեզուաբանական գրականութեան մէջ, որպէս արժէքաւոր տեղեկագրական ձեռնարկ, որի նմանը չկայ ո՛չ միայն հայերէնում, այլեւ՝ եւրոպական գիտական գրականութեան մէջ» (1907, Մայիս 20):

6. Հիմնուելով այս բառարանի եւ հայագիտական բազմալեզու լեզուաբանական գրականութեան վրայ, ես կազմեցի առաջին ձեռնարկը «Հայոց լեզուի պատմութեան», մի նոր գիտութիւն, որ ինքս հիմնեցի եւ որ այժմ մտել է իբրեւ ուսման առարկայ պետական համալսարանում եւ այլ բարձրագոյն գիտական հիմնարկներում:

7. Կազմել եւ արգէն հրատարակում է «Հայոց անձնանունների բառարան»ը, որ ամբողջ հայ մատենագրութեան անունների ցանկն է, անունների ծագման քննութեամբ, կենսագրական աեզեկութեամբ, ժամանակագրութեամբ եւ որ գլխաւորն է՝ ազբիւրների լիակաւար վիճակագրութեամբ: Կ'ունենայ 3000 էջ:

8. Իմ ամենամեծ գործը կը լինի սակայն «Ընդհանուր փերականութիւն»ս, որ աշխարհիս բոլոր ծանօթ լեզուների համեմատական քերականութիւնն է: Պիտի բովանդակի 562 լեզուի քերականութիւն: Առայժմ կազմել եմ 139 լեզուի համեմատութիւնը: Ենթադրում եմ, որ գործը կ'ունենայ 8000 էջ, որի առաջին կէսը արգէն գրել եմ: Նման տիպի գործ չի տեսած գիտութիւնը:

Ռ. Զ Ա Ր Ե Ա Ն

Հ Ր Ա Չ Ե Ա Յ Ա Ճ Ա Ռ Ե Ա Ն

Աչքի եմ անցկացնում դրառուճներս եւ, թող խոստովանութիւն լինի, ծանօթութիւնս այդ մեծ դիտնականի հետ, ցաւօք, իմ օղտին չէ: Եղածը եղել է ու ինձ մնում է անել այդ պատմութիւնը ինչպէս որ պատահել է:

Աճառեանը Հայպետհրատին ապադրութեան առաջարկեց իր «Հայոց լեզուի պատմութիւն» աշխատութեան առաջին հատորը: Վերապահութիւն կար նրա այդ ուսումնասիրութեան նկատմամբ: Մառի ազդեցութիւնն այդ ժամանակ ուժեղ էր բոլորի վրայ, այդ թուում եւ իմ, իսկ Աճառեանի դիրքն այլ մօտեցումով էր դրուած, եթէ չասենք՝ հակառակ:

Ես պէտք է պատասխան տայի: Մտիպուած էի արհեստական պատճառներ մէջ բերել: Մէ անդամ ասացի, թէ լաւ թուղթ չունենք:

— Ինչ թղթի վրայ ուղում էք տպագրէք, թէկուզ շաքար փաթաթելու թղթի վրայ, բայց տպագրէք: Լաւ դրքի համար թուղթը ոչ մի նըշանակութիւն չունի:

Մի այլ անդամ ասացի, որ երեւի հարկ կը լինի առաջարան դրել եւ յայտնել անհամաձայնութիւն՝ որոշ տեսակէտների նկատմամբ: Համաձայն է:

— Համաձայն եմ, ի հարկէ:

Ու բարձրացրեց երկու ձեռքը, որպէս յանձնընելու նշան: Յետոյ ձայնն իջեցրեց եւ կամացուկ ասաց.

— Առաջարան չէ, ինչ ուզում էք դրէք, միայն թէ տպագրէք: Գրեցէք, որ այս դիրքը մի դրոշ չորժէ, դիտութեան հետ ոչ մի կապ չունի, դրեցէք, ինչ ուզում էք դրեցէք, բայց տպագրէք:

Եւ յետոյ աւելացրեց.

— Ոչ մի առաջարան անյաջող դրքին յաջողութիւն չի բերի: Եւ յաջողուած դրքի ճանապարհը փակել չի կարող ոչ մի բացասական առաջարան:

Իմ սխալը նորա այն, որ խորհրդակցեցի համալսարանի այն լեզուաբանների հետ, որոնք Մառի երկրպագուն էին: Ես էլ մտապաշտ էի: Հրատարակութեան մէջ ծանր կացութիւն էր ստեղծուել: Չգիտէինք ինչ անել: Հայպետհրատի ղեկա-

վարութիւնն այս բոլորի մասին իրազեկ դարձրեց վերադաս մարմիններին: Նրանք դտան, որ Աճառեանի նման դիտնականին մերժել չի կարելի, բայց ասացին, որ լաւ կը լինի, եթէ Պետական հրատարակչութեան փոխարէն համալսարանը լոյս ընծայի, որպէս ուսումնական ձեռնարկ, ու եթէ անհրաժեշտ են համարում՝ թող մի առաջարան կցեն, քննադատեն հեղինակի սխալ հայեացքները, բայց նշեն նաեւ դրքի արժանիքները: Ինձ վրայ դրուեց այս որոշմանը պրոֆեսէօրին անդեակ պահելու ծանր պարտքը:

Լսեց եւ ասաց.

— Ես այդպէս էլ սպասում էի:

Եւ յետոյ.

— Չեղանից չեմ նեղանում, դուք կարողութիւն էք կատարում:

Ես չթաքցրի, որ ես էլ այնպէս եմ մտածում, ինչպէս որոշում կայացնողները:

— Չեղ պատիւ է բերում այդ կեղծ խոստովանութիւնը, բայց չէք կարող երեւակայել, թէ ինչ մոլորութեան մէջ էք: Կը հասկանաք մի օր, թէ ե՞րբ՝ չեմ կարող ասել, բայց կը հասկանաք անսպասման, երեւի ինձանից յետոյ:

Մի հեղինական ժպիտ դժուեց դէմքին.

— Ասենք, ինձ համար միեւնոյնն է, թէ ով է տպագրում, միայն թէ լոյս տեսնի:

Չանցաւ մի քոնի օր՝ Աճառեանը խոստացած յօդուածը դրեց սեղանին:

— Ե՞րբ կարող եմ իմանալ պատասխանը՝ տպագրում էք, թէ ոչ:

— Հենց հիմա:

— Ինչպէս թէ՛ հենց հիմա:

— Համարէք ձեր յօդուածը ընդունուած, կը հրատարակուի երրորդ համարում:

— Թող լինի երրորդում, բայց ես ուզում եմ իմանալ խմբագրի որոշումը՝ յօդուածս կարդալուց յետոյ միայն: Ե՞րբ ի վիճակի կը լինէք յայտնելու ինձ ձեր որոշումը:

— Թէկուզ վաղը:

Յաջորդ օրը Աճառեանը նկաւ ու նստեց դիմացս:

— Կարդացի՞ք:

Ձէի կարդացել: Ներսիսը խնդրող հայկացիով մեզուսը նայեցի իրեն:

— Ոչինչ, ոչինչ, մի նեղուէք: Կարող եմ վազը դալ, միս օրը: Բայց մի բան ասեմ. ձեզանից մեծ եմ եւ ինձնից ձեզ խրատ կը հասնի: Աշխուհիք ստոյգ լինել, արուած խօսքը պահել:

Փստաց, ինչ-որ բան ասաց պահաւերէն, որից սչինչ չհասկացայ:

Նայեց ինձ:

— Տեսնում եմ, որ պարսկերէն չգիտէք: Միտն ասում է՝ մարդ պէտք է իր տուած խօսքի տէրը լինի: Իմաստուն խօսք է: Պարսիկն ասում է. մինչեւ խօսքը տալը՝ դու ես խօսքի աէրը, խօսք տալուց յետոյ՝ խօսքն է քո աէրը:

Նորից փստաց:

— Հօ չէ՞ք նեղանում:



Յաջորդ օրը, որպէսզի փամանակ չկորցնի, ինքս պնացի մօտը, յայտնեցի, որ կարդացել եմ, պայմանաւորուածութիւնը երրորդ համարի վերաբերեալ պահպանում է:

— Իսկ ինչո՞ւ ոչ երկրորդում:

Ասացի, որ երկրորդը մամուլի ասկէ եւ կէս էջ անգամ անդադրել չեմ կարող: Եւ յետոյ հարցրի՝ մի՞թէ միեւնոյն չէ մի ամիս առաջ, մի ամիս յետոյ:

— Ես գործնական մարդ եմ, եւ այսօրուան գործը վաղուան չեմ թողնում: Կեանք է, ամէն ինչ կարող է պատահել:

Շատ ուշ էր եւ չէի կարող որեւէ յօդուած հանել եւ անդը Աճառեանինը դնել:



Երեւի մարդիկ կան, որոնց նախազգացումն ուժեղ է: Ըստ երեւոյթին դրանից էր Աճառեանը:

Երրորդ համարի որոշ նիւթերի հետ յօդուածն ուղարկեցի ասպարան: Ստացանք սրբազրութեթերը:

Այդ օրերին լոյս տեսաւ ամսագրի դէմ դըրած բաւական խիստ մի յօդուած: Խմբագիրը խստագոյնս քննադատուում էր դրական հանդէսը փամանակակից հարցերից հեռու պահելու համար: Յօդուածի հեղինակը եւ նրա հետ նաեւ ուրիշներ, անուանի գրողներից, օրինակ, Դեմիրճեանը, գրողների միութեան նախագահութեան նիստին ինձ կշտամբեցին դրական սխալ քաղաքականութիւն վարելու համար:

Յօդուածը լոյս տեսնելու յաջորդ օրը Աճառեանը եկաւ խմբագրութիւն եւ խնդրեց իր նիւթը չտպագրել:

Ես ասացի, որ քննադատութիւնն իրեն չի վե-

րարերում: Յամառեց, ասելով, որ իր համար չի անհանդատանում, որ ինքը հրի ու ջրի միջով անցած մարդ է եւ մտածում է խմբագրութեան մասին: Եւ աւելացրեց, թէ ինքը չի կամենայ, որ ուրիշներն էլ իր պատճառով հարուածի տակ լինեն:

Ես ցոյց ասի յօդուածի սրբագրութեթերը: Նա ասաց.

— Ուզո՞ւմ էք վերադարձրէք ինձ, ուղո՞ւմ էք պահէք ձեզ մօտ, բայց ոչ մի դէպքում մի ապաղրէք:

Նրա խօսքը կտրական էր:

Եւ այդպէս, սահպուած եղայ յօդուածը հանել երրորդ համարից:



Աճառեանը ութսունը չլրացրեց: Եւ զարմանալի բան: Երբ առաջին անգամ լսեցի Աճառեանի անունը, նա, կարծեմ, յիսուն տարեկան էլ չկար, իսկ նրա անուան շուրջ արդէն առասպելներ էին հիւսւում: Գիտութեան մէջ հազուադիւտ ժողովրդականութիւն ունեցող մարդ, որի անուան շուրջ զանազան ճիշդ ու անճիշդ պատմութիւններ բերնէ բերան էին անցնում:

Աճառեանի մասին մտածելիս ես միշտ անդրադարձել եմ նրա արտակարգ անհատականութիւն լինելուն: Նրան կեանքը օժտել էր մի յիշողութեամբ, որ առասպելական էր, աշխատասիրութեամբ, որ բոլոր համեմատութիւններից դուրս էր, ինչպէս նաեւ դիտական մաքի այնպիսի յղացումներով, որ նոյնիսկ իբրեւ զաղափար եւ ծրագիր արժանի էին բարձր գնահատութեան: Աճառեանի արածը մի մարդու գործ չէ, այլ մի տմբողջ հաստատութեան: Աճառեանին մօտ կանգնած ընկերներս ասում էին, թէ նա թողել է այնքան ձեռագիր, դեռեւս չհրատարակուած աշխատութիւններ, որ լիւրի բաւական է մի երեք, նոյնիսկ չորս գիտնականի ծանրակշիռ վաստակ կազմելու համար:

Աճառեանը օժտուածութեան եւ աշխատասիրութեան ներդաշնակութեան բացառիկ օրինակն է:

Մեր վերջին հանդիպմանը խնդրեցի նրան թարգմանել գրաբար մի նախադասութիւն Սարգիս Տիգրանեանի ընդարձակ նախաբանից՝ կըցւած «Գոթոգիա»ի հայերէն թարգմանութեանը: Իմ տուած թերթիկը մօտեցրեց իր աչքին այնքան մօտ, որ թուղթը կպչում էր արտեւանունքներին: Իմացայ, որ մի աչքը չէր տեսնում բոլորովին, իսկ միւսը՝ մի քառորդով միայն: Եւ այդ վիճակում նա շարունակում էր կատարել այնպիսի գործեր, որոնք վեր էին մի մարդու ուժերից:

## ԲԱԶՄԵՐԱԽՏ ՀԱՅԱԳԷՏԸ

...Չսկսեք է մոռանալ, որ Հր. Աճառեանը հայ նոր դրականութեան ուսումնասիրութեան եւ դպրոցական ուսուցման բնագաւառի պիտներնեւրից մէկն է: Ողջունելի է, որ «Հայ նոր գրականութեան պատմութիւն» ակադեմական բազմահատոր հրատարակութեան առաջաբանում այդ պրակները արժէքաւորուում են ըստ արժանւոյն. «Ըստ առանձին հատուածների, գրականութեան պատմութիւնը չմնաց առարկայի պատմութեան միակ ձեւ, շուտով երեւան եկան աշխատութիւններ, որոնք ներառում էին երկու հատուածների գրականութիւնը: Ճիշդ է, այդ աշխատութիւններում միանգամից չլուծուեց հայ նոր գրականութեան գիտական միասնութեան խնդիրը, բայց երկու հատուածների գրականութիւնը մի ամբողջական գրքի, թէկուզ ընդհանուր վերնագրի տակ առնելը, հոգեբանօրէն միեւնոյն ժողովրդի ընդհանուր գրականութեան հասկացողութեան յուշումն իսկ լուրջ ազդակ էր երկու հատուածների գրականութեան մերձեցման: Այս ուղղութեամբ առաջին փորձն արեց Հրաչեայ Անտեանը՝ «Պատմութիւն հայոց նոր դրականութեան» աշխատութեամբ (1906-1912): Հայ նոր գրականութիւնն Անտեանը բաժանում է երկու մեծ շրջանի՝ կեդժ դասական, որը տեսում է մէկուկէս դար... եւ աշխարհաբար, որն սկզբնաւորում է 19րդ դարի 60ական թուականներին»:

Այս աշխատութեան գրականագիտական արժէքի լուսաբանութիւնն ու գնահատութիւնը հայ նոր դրականութեան պատմութեանը նուիրուած աշխատութիւնները (Լէոյի «Ռուսահայոց գրականութիւնը» 1904, Լ. Մանուէլեանի «Ռուսահայ գրականութեան պատմութիւնը» 1909-1911, Արփիարեանի «Պատմութիւն ժԹ. դարու Թուրքիոյ հայոց գրականութեան», 1902 եւ այլ պատմաքննական ակնարկները) վերաբերում էին կա՛մ միայն արեւելահայ նոր դրականութեան կամ արեւմտահայ նոր դրականութեան պատմութեանը, որով՝ ըստ էութեան միմեանցից անջաւառում էին մէկ ազգային գրականութեան երկու հատուածների գրականութիւնները, դիտուում իբրեւ առանձնացած երեւոյթներ. իսկ սա գիտակցաբար թէ անգիտակցաբար, ուղղակիօրէն թէ անուղղակիօրէն յանգեցնում էր հայ ազգային միասնական գրականութեան անտեսմանը: Յայանի է նաեւ, որ հենց այդ շրջանում, երբ հրատարակուում էին Աճառեանի պրակները, շատ դպրոցներում դեռեւտ անցնում էին ընդհանրապէս հայ դրականութիւն՝ սկզբից մինչեւ մեր ժամանակները, որը, սակայն, ոչ թէ իսկապէս հայ դրականութեան պատմութիւն էր, այլ գերազանցապէս հայ մատենագրութեան պատմութիւն: Այս պայմաններում ահա գրել հայ նոր դրականութեան պատմութիւն՝ դիտական նորարարութիւն էր: Չէ՞ որ շատ յաճախ է պատահում, որ տուեալ դիտակարգի կամ դիտածիւղի էրթաւունքների հաստատումը աւելի մեծ դժուարութիւնների է հանդիպում, քան դրանից յետոյ՝ այդ դիտակարգի կամ դիտածիւղին վերաբերող հետազոտութիւններ գրելը: Սրանով էլ ահա, բնութագրուում էր Հր. Աճառեանի այդ պրակներէ պատմական ու գիտական արժէքը, ըստ որում՝ Աճառեանը դառնում է մեր ազգային նոր դրականութեան պատմութեան ուսումնասիրութեան ուսուցիչներից մէկը:



Ս. Ս Ա Հ Ա Ռ Ռ Ի Ն Ի

Մ Շ Ա Կ Ո Ի Թ Ա Ց Ի Ն Լ Ո Ի Ր Ե Ր

\*\*

1933 թ., մի օր, Պատմութեան Թանգարանի ազգագրական բաժնի գրասենեակում պրոֆեսոր Ստեփան Լիսիցեանի հետ մեր օրուայ աշխատանքներն էին կատարում, երբ յանկարծ, գրասենեակի դուռը բացուեց, եւ մուտքի վրայ երեւաց ահադեմիկոս Հր. Անտեանը:

— Ստեփա՛ն, — դիմելով Լիսիցեանին՝ յուզուած բացականչեց նա:

— Ի՞նչ է, Հրաչեայ:

— Ստեփա՛ն, սոքա աւերում են:

— Ովքե՞ր են սոքա, եւ ի՞նչ են աւերում, — հարցրեց Լիսիցեանը:

— Ստեփա՛ն, սոքա աւերում են:

Զգիտես ո՞րտեղից նա լուր էր ստացել, որ Դիլիջանի կոլխոզնիկները Գոշավանքի ֆարերից գումեր էին շինում: Եւ երկա՛ր եւ յուզումնալից խօսեց այդ անտանելի վայրենութեան դէմ:

Երբ հեռանում էր մեզնից, աչքերի մէջ արցունքներ կային...

\*\*

Հր. Անտեանը մինչեւ վերջ մնաց Մ. Արեղեանի նոր ուղղագրութեան ոխերիմ թշնամի:

— Այդ նոր կոչուածը այնպէս է կազմուած, որ հնով այլեւս ոչինչ չի կարելի անել: Ինչի՞ համար է այս գարիւրելի գոհարերութիւնը...

Իր ուսումնասիրութիւնները երկար ժամանակ լոյս էր ընծայում ապաւիտիայ, իսկ ուր իր ստորագրութիւնն էր պէտք, ստորագրում էր միմիայն Հր. Աճառ՝ նոր ուղղագրութեան տուրք չտալու համար:

Աւելի ոգրերգական էր, երբ մի

խումբ հայ անմիտ «բարեփոխիչների» առաջարկութեամբ փորձեր եղան Մեսրոպեան տառերը լատինական տառերով փոխարինելու:

— Այս երեկոյ, լամբի լոյսի տակ, իմ տկար աչքերի առաջ, պարզեցի մի գիրք լատիներէն, մի գիրք ռուսերէն եւ մի գիրք էլ հայերէն: Իմ տկար աչքերը հանգստացան, երբ, վերջապէս, հայերէն գիրքն էի կարդում...

\*\*

1934 թուականին, Հայաստանի Լուսաւորութեան նախարար Դր. Տէր Սիմոնեանի նախագահութեամբ՝ քննուել էր հայկական Հանրագիտարանի հրատարակելու հարցը: Ներկայ էին Երեւանի գիտական եւ գրական դէմքերը:

Ընդհանուրի հաւանութեամբ, որոշուեց հրատարակել հայկական Հանրագիտարանը:

Երբ ժողովը արդէն փակուելու վրայ էր, մինչեւ այդ լուր նստած Հր. Անտեանը յանկարծ ձայն խնդրեց եւ արեց հետեւեալ հարցումները.

— Ովքե՞ր են լինելու Հանրագիտարանի աշխատակիցները: Ովքե՞ր են խըմբագրելու լեզուի եւ բանասիրութեան բաժինները:

— Հանրագիտարանին մասնակցելու են մեր գիտական եւ գրական ուժերը: Լեզուի եւ բանասիրութեան բաժինները խմբագրելու են պրոֆ. Անտեանը, Արեղեանը եւ Ղափանցեանը, — պատասխանեց Դր. Տէր Սիմոնեանը:

— Է՛, Ղափանցեանը ծոյլ է, — բացականչեց Անտեանը:

Ճիշդ այդ ժամանակ տեղից արագ

վեր թուաւ Ղափանցեանը եւ խիստ բողոքեց Անառեանի դէմ...

— Է՛, ծո՛յլ մարդ, դու ընդամէնը 1000 թերթ չես գրել, իսկ ես 1000 թերթից վար գիրք չեմ ընդունում, — կարճ եւ կտրուկ պատասխանեց Անառեանը եւ ժողովը փակուեց:

Սակայն Հանրագիտարանի միայն երեք հատորները լոյս տեսան: Բայց ժողովուրդը այդ հատորների երեսն անգամ չտեսաւ երբեք: Շուտով վրայ հասան 1936 թ. դէպքերը, եւ Անառեանն ու Հանրագիտարանի միւս աշխատակիցները բանտ նետուեցին՝ իրենց անցեալ «մեղքերը» քննելու համար: Մինչեւ իր բանտարկուիլը, Հր. Անառեան հեռացուած էր Պետական համալսարանից՝ իր հակամարտութեան վարքի համար:

— Ուր կը խոթէ՛ք, խոթեցէ՛ք, բայց իմ առարկայի մէջ մարտիգմ-լեռնիգմ մի խոթէ՛ք, — անվախ կեցուածքով պատասխանել էր Հր. Անառեանը:

«*Խորհրդային Հայաստան*» օրաթերթի մէջ մի նորելուկ մարտիստ «լեզուաբան» քննադատեց Հր. Անառեանի «բուրժուական» պատմահայեցողութիւնը:

\*\*

1934ին, Երեւանի Մշակութային ինքնաշարժումում քննուում էր ակադեմիկոս Յ. Մանանդեանի «*Խորենացու առեղծուածը լուծուած է*» գիրքը: Գլխաւոր բանախօսն էր ողբացեալ Թադէոս Ավդալբեկեանը:

Յ. Մանանդեանը իր գրքի մէջ հորեմացուն համարում էր Յրդ դարի պատմիչ:

Երբ Թադէոս Ավդալբեկեանի փառաւոր եւ ջախջախիչ բանախօսութիւնը վերջացաւ, առաջինը խօսք առաւ Հր. Անառեանը եւ ասաց.

— Ես չգիտէի, որ մեր Յակոբը (խօսքը Մանանդեանի մասին էր) անգուսպ երեւակայութեան տէր մէկն է եղել: Մի քանի բռտերի համար, որոնք

յատուկ էին Յրդ եւ Յրդ դարերին, կարիք կա՞ր արդեօք հորեմացուն Յրդ դարից ուժով քաշել ու հասցնել մինչեւ Յրդ դարը...

Մանանդեանի այդ գրքի դէմ, ի միջի այլոց, խստութեամբ խօսեց եւ գրեց նաեւ ակադեմիկոս Ստ. Մալխասեանը:

Մի երկու տարի յետոյ, Յ. Մանանդեանը իր «*Տէրրան Բ.*» մեծարժէք աշխատութեան ծանօթագրութիւնների մէջ սրբագրեց իր սխալը Մ. հորեմացու մասին:

\*\*

1934 թ., Հր. Անառեանը դիմում կատարեց էնկավեդէին, Ագուլիս գնալու եւ տեղւոյն վրայ ուսումնասիրելու համար Ագուլիսի բարբառը: Սակայն էնկավեդէն ինչ-ինչ պատճառներով մերժեց: Շարքներ յետոյ, երբ թոյլտուութիւն ստացաւ Ագուլիս գնալու, այս անգամ էլ ինքը մերժեց...

\*\*


1935 թ., հորհրդային Հայաստանի ողբացեալ վարչապետ՝ Սահակ Տէր Գաբրիէլեանը իր մօտ հրաւիրեց Անառեանին եւ խոստացաւ դրամ, բնակարան եւ վաստակաւոր գիտնականի կոչում տալ նրան: Բայց Անառեանը իրեն յատուկ ձեռով մերժեց՝ ասելով.

— Ինձ համալսարանից հեռացրին, հիմա էլ ուզում եմ ինձ դրամ նուիրել: Ես աղքատ եմ, ի՞նչ է: Ինձ ուզում եմ վաստակաւորի կոչում տալ, ես դերասան եմ, ի՞նչ է...

Ո՛չ մարտ-լեռնեան գաղափարախօսութիւնը եւ ոչ էլ խորհրդային շոնդալից խոստումները կարողացան փոխել Հր. Անառեանի ազգային-գիտական լայն համբան... Անառեանը գնաց հայոց համբով, մինչեւ անմահութիւն...

Յարգանք իր մեծապայծառ, անմեռ յիշատակին...

Ս. Ս.



# ԻՎԱՅԱԿԱՆ ՇԱՐԺԻԼՆ



## ՄԱՀ՝ ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆԻԻ

«Իսոյին»ի ներկայ համարին տպագրութիւնը սկսած էր արդէն, երբ Օգոստոս ամսոյն 11ին իր աչքերը յափ-

տենապէս գոցեց մեր ամսագրի հիմնադիրներէն եւ անոր վարիչ խմբագրի բեռը ամբողջ տասնամեակ մը իր ուսերուն առած Կարօ Սասունի:

Ապրեցաւ ութսունութ տարիներ, որոնց վերջին երեքը անցուց անկողնի մէջ, Լիբանանի դժնդակ տարիներուն զուգադիպող շրջանի մը, որուն ընթացքին հաւատարիմ մնաց իր բնաւորութեան մայր գիծերէն մէկուն, լաւատեսութեան, շարունակ խօսք բանալով ու հաւատալով մեր ժողովուրդի լինելութեան, անոր քաղաքական եւ մշակութային հեռանկարներուն զօրեղ զգացողութեամբ:

Ճակատագրին անողոք հարուածը իջած էր անգամ մը ու անոր վախճանական փաւր անծանօթ չէր իրեն, այսուհանդերձ իր այցելուները զարմանքի մատնող պայծառամտութիւն մը կը պարզէր Կ. Սասունի, իրմէ վեր բաներու հաւատացող մարդու մը իմաստութեամբ իր անձէն հեռացնելով ուշադրութիւնները ու բելետելով զանոնք ազգային, գրական, մշակութային անցուդարձերու վրայ, ինչպէս եղած էր իր բովանդակ կեանքը, վաղ պատանութենէն մինչեւ խոր ալեւոյթ:

Կարօ Սասունիի կորուստով մեր իրականութենէն իրապէս բան մը կը պակսի, մտաւորականին, գրողին, կուսակցականին, գործիչին հետ դրսեւորուած այն սրտագրաւ մթնոլորտը, որ «Լեռներու խորհուրդ»էն կը բխէր ու «Կեանքի յորձանուտին մէջ»էն կը բաշխուէր ամէնուրեք, — հայրենիքի ապրումը, արու ու ազնուական սերունդին յեղափոխական այն աւանդները, որոնց կշռոյթով շնչեց ինք ու վարակեց իր շրջապատը, հայրենիքի սահմաններէն մինչեւ Սփիւռքի հեռաւոր ծագերը:

«Հայրենի հողը կը տառապի մեր կարօտով եւ մենք կը տառապինք հայրենի հողին կարօտով», կ'ըսէր՝ բովանդակ իր ուժերը տրամադրելով այդ երկու կարօտներուն յագուրդ տալու միջոցներուն, փոխ առ փոխ կիրարկելով գիրք, խօսքը, շարժումներուն նպատակայարմար եղանակը, հողի զգայնութեան, յեղափոխական արթնութեան, ազատութեան ու մշակութային գեղեցկութիւններու զգայնութիւնները վառ, ներգործօն պահելու աննուազ ջերմութեամբ:

Վերջին գործը, «Հորիզոնէ հորիզոն», կէս մնաց, ինչպէս՝ գրիչը ձեռքին, ինչպէս իր ընկերներէն շատերը ինչպէս զէն ի ձեռին:

«Բագին»ի Նոյեմբերի համարին մէջ մեր երէց ընկերոջ վաստակին պիտի յատկացնենք աւելի լայն տեղ մը, ուր պիտի երեւան իր յատկանշական գրութիւններէն նըմոյշներ, նամակներ՝ իր կողմէ գրուած, նամակներ՝ իրեն ուղղուած, եւ յուշեր ու վկայութիւններ:



**Բ. Փ Ա Փ Ա Ջ Ե Ա Ն**

«Բագին»ի ներկայ թիւէն շատ առաջ պէտք է լոյս տեսած ըլլար Բ. Փափազեանի «Թատերագրութեան արուեստը» անուն գործը, բայց ապարանական նոր դասաւորումներու պատճառով նոր միայն աւարակեցաւ անոր տպագրութիւնը:

Հրատարակելէ առաջ՝ նոյն աշխատութենէն ստորեւ կու տանք նոր հատուած մը, ուր քննութեան կ'ենթարկուին յառաջապահ քառորդի ծաղման պատճառները, որոնումներն ու նուաճումները՝ առարկայական հիմունքներու վրայ ընթացող զարգացումներով:

**ՅԱՌԱՋԱՊԱՅ ԹԱՏՐՈՆԻ ՄԱՍԻՆ**

Պարբերաբար, դրեթէ քսանըհինգ տարին անդամ մը, հրատարակ կու դան դրադէաներու, արուեստագէտներու նոր սերունդներ, որոնք իրենց հետ կը բերեն իրենց հողեմտային աշխարհէն բխող վերանորոգման պահանջները եւ կը դառնան յառաջապահներ, նոր ճամբաներ բացողներ:

Նոր ժամանողներուն համար, նախորդող ճշմարտութիւնները կա՛մ չափէն աւելի ծամծմուած կ'ըլլան, կամ ալ դադրած կ'ըլլան ճշմարտութիւն ըլլալէ. որովհետեւ ընկերային եւ մարդկային նոր իրողութիւններ, նոր տուեալներ երեւան եկած կ'ըլլան, որոնք, ըստ յառաջապահներուն, այլեւս ժամանակավրէպ կը դարձնեն նախկին ճշմարտութիւնները:

Ամէն ծնող էակ ինքնին նորութիւն մըն է. ամէն նոր աշխարհ եկող մարդ տարբեր է թէ՛ նախորդներէն եւ թէ՛ իրմէ ետք դալիք մարդերէն: Սերունդներն ալ, որ իրարու կը յաջորդեն, ունին տարբերութիւններ իրենցմէ առաջ եկող սերունդներէն եւ կը ձգտին իրենց սեփական ճշմարտութիւնները արաայայաել նոր ձեւերով:

Թատերագիրները բացառութիւն չեն կազմեր. նորի փնտռողքը պարբերաբար կը վարակէ նաեւ գիրենք:

Նորութիւն կը դառնայ հինին մերժումը, նոր ձեւերու փնտռողքը:

Ոմանք չեն յաջողիր դտնել արտայայտութեան նոր ձեւ ու նոր պարունակութիւն մը. ուրիշներ կը յաջողին հասնիլ նոր խորութեանց, նոր երանդներու, կը դտնեն արտայայտութեան իրապէ՛ս նոր ձեւեր եւ հանդիսատեսներուն դիմաց կը բանան կեանքի նոր ծալքեր, նոր անկիւններ եւ, դասական դառնալէ առաջ՝ կ'ըլլան յառաջապահ արուեստագէտներ:

Շէյքսպիր յառաջապահ մըն էր իր դարուն:

Իբրևն վերանորոգեց թատրոնն ու թատերադրութիւնը :

Վ. Հիկոյի «Հերմասի»ի ճակատամարտը վերջինը չէր :

1921 Մայիս 10ի զիջերը, Հռոմի մէջ տեղի կ'ունենար նման ուրիշ ճակատամարտ մը, Լուիճի Փիրանտելլոյի «Վեց անձնաւորութիւններ, որոնք հեղինակ մը կը փնտռեն» թատերախաղին ներկայացման ընթացքին, ու անոր աւարտէն ետքն ալ՝ փոզոցը :

Այդ օրերուն յառաջապահ թատերադիրը Լուիճի Փիրանտելլոն էր : Թատերադրութեան եւ թատերական մտածողութեան մէջ յեղաշրջում մը կ'առաջանար Փիրանտելլոյի միջոցով. թատերադրութիւնը կը մտնէր նոր հունի մը մէջ : Իր օրերուն վէճի նիւթ եւ շատերուն համար անըմբռնելի, փաստօրէն, Փիրանտելլո շուտով կը դառնար մեծարժէք թատերադիր մը : Իր արդեպսութիւնը այնքան մեծ էր, որ մինչեւ անպամ այսօրուան յառաջապահ թատրոնի ներկայացուցիչները՝ Պեքէթ, Իոնեսքօ եւ ուրիշներ իրենց ակունքը Փիրանտելլոյի դործերուն մէջ կը դանկն :

Վերանորոգման ամէն փորձ կը կատարուի յանուն ճշմարտութեան, մինչ այդ ընդունուած պայմանականութեանց դէմ : Երբ կատարուող փորձերը կ'աւարտին յաղթանակով, տարուած ամէն յաղթանակ կ'ըլլայ մասամբ միայն յաղթանակ. չի քանդեր, կը փոփոխէ հինը որոշ չափով եւ, քանի մը նորութիւններ բերելով՝ սրոշ ձեւի ու չափի յառաջդիմութիւն մը կ'արձանագրէ :

«Յառաջապահ թատրոն» արտայայտութիւնը պէտք է այս սահմաններուն մէջ ըմբռնել, այսինքն՝ մինչ այդ ընդունուած ու դործադրուած չափանիշներուն դէմ դժգոհութեան արտայայտութեան եւ նոր չափանիշներու փնտռտուքի սահմաններուն մէջ :

Լուիճի Փիրանտելլոյի առաջացուցած վերանորոգումէն ետք, ամբողջ երեսնամեակ մը, թատերադրութիւնը ընթացաւ մէկէ աւելի ճշմարտութիւններու, ճշմարտութեանց յարաբերականութեան, հարցական ճշմարտութիւններու մտածման ճամբով :

Փիրանտելլոյէն ետք փոխուեցան նիւթերը. անոնք հեղհեղեղ աւելի ու աւելի շեշտուած ձեւով մարդկային կեանքի պայմաններուն շուրջ դարձող, կեանքի իմաստի փնտռտուքի նիւթեր եղան. միշտ մնալով թատերական պայմանադրութեան սահմաններուն մէջ՝ բախում, կամքերու ընդհարում, դործողութեանց միջոցով արմատմտածումի մը արտայայտութիւն :

Անույ, Աարթր, Մոնթերլան եւ Քամիւ առաւելաբար խորհրդանշական արժէքներ տուին իրենց անձնաւորութեանց, անհեթեթի, ունայնութեան, պարապութեան դիմաց համապատասխան կեցուածքի անհրաժեշտութեան եւ փիլիսոփայական նման մտածումներ արտայայտելու համար :

Անոնք ըմբոստներ էին, բառին դրական եւ արուեստի ըմբռնումով : Իրաւ արուեստագէտը անպայման ըմբոստ մըն է, «միջ» ըսող մը : Արուեստագէտի ըմբոստացումը, սակայն, բացասական իմաստով ըմբոստացում մը չէ. աշխարհի ամբողջական մերժումը չէ : Արուեստագէտը խորապէս կ'ապրի մարդկային ու մարդկութեան իրականութիւնը ու տառապանքը, անոնց մեծ մասը համարելով ընկերային, տնտեսական, հոգեբանական, դաստիարակչական կամ այլ թերթներու հետեւանք եւ մարդկութեան խնայելի տանապանքներ : Այդ ոլորտա-

ուով ալ արուեստագէտը կ'ընդլզի եւ իր ապրումները կ'արտայայտէ իրեն յատուկ միջոցներով ու ձեւերով:

Արուեստագէտը քարոզիչ մը չէ, դաաաւոր մը չէ. սեփական անձկութիւնը արտայայտող մըն է, որ կրնայ յուզումներու եւ մտածումներու ճամբով զանգուածները առաջնորդել դէպի աւելի առողջ, աւելի մարդկային որոշումներու:

Պէտք չէ ընդհանրացնել արուեստագէտի «ըմբոստացում»ը իրեւ արուեստի նախապայման եւ կարծել, թէ ամէն ըմբոստացում, ամէն ժխտում ինքնին արուեստի արտայայտութիւն է, արուեստագէտի կեցուածք:

Սուր Պելլօ լաւագոյն ձեւով կրցած է ընդդժել տարբերութիւնը. ան կ'ըսէ.

«Մեծութիւն կայ անշուշտ. դրախտը անհիծելուն մէջ. սակայն երբ մեմք մեր գուլպաներն է, որ կ'անհիծեմք՝ պէտք չէ սպասեմք, որ մարդիկ մեզ լուրջի առնեն»<sup>29</sup>:

Անցնող յիսնամեակի ընթացքին, արուեստագէտ դրողներու եւ թաաներայիրներու ընդլզումը ընթացաւ աստիճանական յաւելումով: Այդ ժամանակաշրջանին ընկերային վարդապետութիւններ, քաղաքական հակադիր կեցուածքներ, տնտեսական տեսութիւններ եւ փիլիսոփայական վերլուծումներ խօսեցան անհատի իրաւունքներէն, ընկերային պայմաններու բարելաւումէն. մարդկութեան յառաջդիմութենէն ճառեցին եւ ընկերութեան ու անհատին յարաբերութիւնները առաջին դիժի վրայ բերին:

Յակայն նոյն ժամանակաշրջանին, երբ առաջնորդներ, փիլիսոփաներ եւ յեղափոխականներ մարդկայինի մասին կը դրէին ու կը խօսէին, միլիոնաւոր մարդիկ՝ առանց դատի ու դատաստանի, կեղրոնացման ճամբարներ կը շրկուէին, ցկեանս տաժանակիր աշխատանքի կը դատապարտուէին. դերոյէն 30 աստիճան վար կլիմաներու տակ. զաւակները կը ստիպուէին իրենց հայրերը ուրանալ, կիները՝ ամուսնալուծում. պահանջել, որպէսզի ընկերութեան թշնամի չյտտարարւին, երբ իրենց ամուսինը ձերբակալուելով աքսորի կը շրկուէր, առանց դատի ու դատաստանի:

Ցեղային պատկանելիութեան «յանցանք»ով ուրիշ միլիոնաւորներ հրկիզման կայաններու մէջ մոխիրի կը վերածուէին. տասնեակ հազարաւորներ կ'առաջնորդուէին, լողանքի սուտ պատրուակներով, թունաւոր կազերու տաշերու տակ:

Այլուր, ընկերային յառաջդիմութեան անունին տակ թշուառութիւնը կը տարածուէր. աւտաապետութեան եւ ազնուապետութեան վերացման առաջադրանքով մղուող երկարատեւ պայքարներէ ետք, «աւատա» եւ «ազնուա» մակդիրները վերցուելով կը պահուէր «պետական»ը, աւելի՛ կաշկանդող, աւելի՛ կեղեքող, աւելի՛ դաժան, քան անհատական կեղեքումները՝ անցեալին:

Ուրիշ տեղ, հարիւր հազարէ աւելի մարդիկ իրենց քաղաքներուն հետ մէկ վայրկեանի մէջ կ'անհետանային աշխարհի երեսէն, իրենց յիշատակը կը վերածուէր՝ մտահալածանքի մը՝ մարդկութեան

<sup>29</sup> ՍՈՒՊԵՆԵՆԿՈՎ, «Գրագէտը իր բնութարայութեամբ» յօդուածէն. լոյս տեսած «Աթլանթիք» ամսագրի 1963 Մարտի քիւիմ մէջ:

դիտակից տարրերուն համար, Հիրոշիմա եւ Նակասաքի օդային համանիչ անուատմելի դարհուրանքներու, եւ այս բոլորը՝ խաղաղութեան անունով:

Աստուածները, բոլոր տեսակի աստուածները, իրենց ուժն ու ազդեցութիւնը կը կորսնցնէին, կը մեռնէին յաճախ. սակայն իրենց տեղը կը մնար պարապ, ինչպէս կը մասնանշէր Ժան-Լուի Պարո<sup>30</sup>:

Ոչ ոք, ոչինչ կրնար լեցնել ստեղծուող այդ պարապը. անչափելի խորութեամբ անդունդ մը կը բացուէր մտածող մարդկութեան աչքերուն դիմաց, որմէ վար նայի՛լն անգամ կրնար դիտու պտոյտ պատճառել, խելադարութեան տանիլ, մահացու ըլլալ:

Մարդկութիւնը հետզհետէ կը նմանէր լտրիւրինթոսի մը մէջ շրջող ուղեւորի մը, որ ամէն կողմէ, բոլոր անկիւններուն վրայ կը լսէր իր յանցապարտութեան, դատապարտուածութեան մասին, առանց դիտնայու ինչուն: Դաաաւարութիւնը՝ ՔաՖրայի դատաւարութիւնն էր եւ կարելի չէր որեւէ զղեակէ ներս մտնել ու հարցնել պատճառը:

Ընդունուած բոլոր արժէքներուն խորտակումով կ'առաջանար սոնայնութեան, անհեթեթի զղայնութիւնը, որուն կը յաջորդէր յուսահատութիւնն ու անկամ վիճակը: Անդորութեան զղացումին հետ կը քայքայուէին կամեցողութիւնները եւ յանցապարտութեան զղացումը կ'աւելնար. կը սկսէր սուր ու տառապալից զղայնութիւն մը, ներքնապէս չղթայուած ըլլալու, ծնած պահէն իսկ դատապարտուած էակ մը ըլլալու զղայնութիւնը:

1953 Յունուարին, Փարիզի մէջ, առաջին անգամ ըլլալով կը ներկայացուէր Սամուէլ Պեքէթի «Սպասելով Կոտոյին» թատերախաղը: Փիրանտելլոյի «Վեց անձնաւորութիւններ, որոնք հեղինակ մը կը փնտրեն» թատերախաղին առաջին ներկայացման առաջացուցած հակամարտ դիրքաւորումները այս ներկայացման առիթով եւս կը կրկնուէին, աւելի սուր, աւելի ուժղին: Ոմանց համար ասիկա այլևս թատրոն չէր. ուրիշներու համար՝ բուն թատրոնը ատիկա՛ էր, յառաջապահ թատրոն մը:

«Սպասելով Կոտոյին» թատերախաղին մէջ էսթրադիոն եւ Վյատիմիր կը սպասեն Կոտոյին, որ կ'ըսուի, թէ պիտի դայ, սակայն չ'երևիր. լուր կը զրկէ, թէ թերեւս վաղը դայ, սակայն չի դար: Ու իրենք կը սպասեն, հակառակ իրենց հեռանալու փափաքին: Ոչ ոք կու դայ, ոչինչ կը պատահի մինչեւ վերջ, ոչ մէկ գործողութիւն, ոչ մէկ հողերանալան փոփոխութիւն. այս իրողութիւնն իսկ եղաւ պատճառը՝ դատապարտելու համար թատերախաղը, իրրեւ հակաթատրոն:

Այդպէս չէ, սակայն, իրականութիւնը, Եթէ քիչ մը աւելի մտտէն քննուի հարցը:

Սամուէլ Պեքէթ կը ներկայացնէ արուեստագէտ սերունդի մը սուր տաղնապար, ի տես մարդոց բացարձակ անդորութեան, կամքերու անճիտումին, մարդ անհաաին ի ծնէ դատապարտուածութեան:

Տիեզերք մը, ուր ոչ մէկ ողեղէն ուժ դոյութիւն ունի այլեւս, չի կրնար մղել մարդը որեւէ շարժումի, որեւէ գործողութեան: Մարդը

<sup>30</sup> ԺԱՆ ԼՈՒԻ ՊԱՐՕ. «Esprit» ամսագրի 1965 Մայիսի բացառիկ քիւն, Թարգման՝ քասրսնիմ եւ Խասարակութեան, դերասանիմ եւ ոգրերգութեանց:



կը խճճուի իր մարմնական կացութեան եւ կարիքներուն մէջ եւ անկարող կը դառնայ բարձրանալու իր բնախօսական պահանջներէն վեր. մա՛նտանդ՝ որ միակ անվիճելի իրականութիւնը, որուն մասին ոչ մէկ կասկած կրնայ ունենալ, իր մարմինէն եկող պահանջներն են՝ անօթութիւն եւ բնական այլ կարիքներու զոհացման պահանջները:

Սամուէլ Պեքէթի թատերախաղերուն մէջ անտեսանելի եւ անբացատրելի ուժ մը քայքայած է անձնաւորութեանց մարդկայնութիւնը, զանոնք վերածած է բուսական արարածներու, որոնք իրենց ճակատագրին մասին տրտմութեամբ խօսելէ զատ, ուրիշ բան չեն կրնար ընել: Մարդը կը ծնի ցաւով, կը շարունակէ տառապիլ առանց պատճառը գիտնալու, առանց որեւէ կարելիութեան, մինչեւ որ սովորութեանց մէջ թմրի ու մահը դայ անակնկալօրէն վերջ տալու իր տառապանքին ու գոյութեան:

Որքան ալ գործողութենէ զուրկ, Սամուէլ Պեքէթի թատերախաղը չի դադրիր հանդիսատեսը դրաւելէ. խորունկ տրտմութիւն մը կը բարձրանայ անկէ ու կը վարակէ հանդիսատեսները, եթէ կանխասարամադրուած ձեւով չհակադրուին անոնք Պեքէթին ու իր թատերախաղին:

Հակառակ շատերու կարծիքին, հակաթատրոն մը չէ Սամուէլ Պեքէթի թատրոնը: Անզօր մարդկութեան տրամն է, որ կը ներկայացնէ անիկա. սակայն կամազուրկ մարդկութիւնը ներկայացնելու իր ընթացքին մէջ, ճիշդ այդ կամքերու քայքայման իսկ բերումով, որ նիւթն իսկ է թատերախաղին, սահմանափակ են թատերադիրին տրամադրութեան տակ դտնուող կարելիութիւնները:

Յառաջապահ թատրոնի միւս ուշադրաւ դէմքը, Էօժէն Իոնեսքօ, հասաւ այն տեսակէտին, թէ ո՛չ միայն մարդոց կամքերը անճիտած են, այլեւ՝ լեզուն. մարդոց միջեւ յարաբերութեան, մարդոց արտայայտութեան գործիքը դադրած է մարդը արտայայտող միջոց ըլլալէ. մարդոց յարաբերութիւնները անկարելի դարձած են. բառերը կը գործածուին իմաստազրկուած ձեւով. իմաստազրկուած նախադասութիւնները կը վերածուին բառերու, բառերը՝ վանկերու, վանկերը՝ բացառանշութեանց միայն. ամէն մարդ իր ըսածը կ'ըսէ եւ իր ըսածը միայն կը հասկնայ՝ իր ըսած ձեւով: Անհատականութիւնները կորսուած են մեծ մասով, քայքայուած են ա՛յն աստիճան, որ ենթակաները չեն գիտեր մինչեւ անգամ, թէ իրենք ով են, ինչ են. անոնք կրնան ինքզինքնին ռեզեղջիւր կարծել, եթէ այդպէս ներշնչուի իրենց («Ռեգեզիւրները»):

Ժան Ժընէի անձնաւորութիւնները նոյնպէս կորսնցուցած են ինքզինքնին, ո՛չ դատողութիւն ունին, ոչ գիտակցութիւն. մինչեւ անգամ սեռը անորոշ է անոնց մօտ:

«Արուեստի գործ մը անհազորդելի իրականութեան մը արտայայտութիւնն է, գոր կը փորձենք հազորդել ուրիշներուն. երբեմն ալ կը յաջողինք: Ա՛յս իսկ է իր հակասութիւնն ու նշմարտութիւնը»<sup>31</sup>:

Իոնեսքոյի այս սահմանումը կու տայ բանալին յառաջապահ թատրոնի կատարած փորձերուն:

Վէպն ու սինեման կը բաւեն լաւ պատմութիւն մը պատմելու

<sup>31</sup> EUGENE IONESCO, «Notes et Contrenotes», էջ 75.

համար. Թատրոնը, որպէսզի կարենայ ըլլալ, պէտք է կարենայ ընթացիկ, լաւ կառուցումով բան մը սլատմելու ձեւէն անդին անցնիլ:

«Արդի թատրոնը, — կ'ըսէ Իոնեսքօ, — պէտք է համարձակի ամէն ինչ փորձելու, հասնելու համար հանդիսատեսին հետ հաղորդակցութեան մը մէջ մտնելու վիճակին: Հաղորդակցողը արուեստագետ հեղինակն է, որ չի կրնար հասած չըլլալ ա'յն եզրակացութեան, թէ մարդիկ կ'ապրին ու յարաբերութեան մէջ են իրարու հետ, ստացական նշանաբաններով միայն, որոնք ամէն իրական իմաստ կորսնցուցած են այլեւս: Բառերը չեն կրնար այլեւս նշգրիտ իմաստ մը կրել, որովհետեւ նկատի չունին անձնական կապակցութիւնները, որ իւրաքանչիւր անհատ կը կատարէ իր բառերուն հետ: Թատերագիրը, ինքզինքն արտայայտելու համար, պէտք է ինքնիրեն թոյլ տայ օգտագործել թատրոնին ընձեռած բոլոր կարելիութիւնները: Թատրոնը այն վայրն է, ուր երեւակայութիւնը իրականութիւն կը դառնայ, իրականութիւնը կը ներկայացնէ. պէտք է համարձակիլ»<sup>32</sup>:

Թատերախաղ մը կառուցում մըն է, բաղկացած շարք մը դոյալիճակներէ, դրուժիւններէ, որոնք հետզհետէ աւելի ուժգին կը դառնան, կը խտանան, իրարու կը կապուին՝ ինքզինքնին քակելու համար, կամ ալ աւարտելու համար անչուծելիին, անտանելիին մէջ:

Լաւ կառուցուած թատրոնը, կ'ըսեն յառաջապահ թատրոնի ներկայացուցիչները, դոհացում կու տայ հանդիսատեսի պահանջներուն, մինչ, մարդկութեան տաղնապին անդրադարձող հեղինակը, բառերու իմաստազրկման զգայնութիւնը ունեցող թատերագիրը՝ չի կրնար ատով դոհանալ, պարտաւոր է ուրիշ բան փնտռել:

Իոնեսքոյի թատերախաղերը խառնուրդ են երեւակայութեան, բանաստեղծութեան, անձկութիւններու, մղձաւանջներու, մշակոյթի եւ ընկերութեան քննադատութեանց:

«Ամէն ինչ ներելի է թատրոնին մէջ. անձնաւորութիւնները մարմնաւորել, բայց նաեւ՝ անձկութիւնները, ներքին ներկայութիւնները նիւթականացնել: Որով՝ ո'չ միայն արտօնուած է, այլեւ թելադրելի է օգտագործել երկրորդական միջոցներ, ապրեցնել առարկաները, կենդանացնել տեճորները, նիւթականացնել խորհրդանշանները: Ինչպէս որ խօսքը, երբ անբաւարար դառնայ կը շարունակուի դիմախաղով, մարմնական կեցուածքով, շարժումներով, նոյնպէս ալ բեմական տարրերը կրնան օժանդակել՝ աւելի ուժգին դարձնելու, աւելի հարստացնելու համար թատերագիրին արտայայտութիւնը»<sup>33</sup>:

Իոնեսքօ իր այս տեսակէտը կ'իրականացնէ թեքնիք դիւտերու «Քանչէլի շարքով մը եւ իրապէս կը յաջողի օղաադործել բեմական այլ տարրերը, լրացնելու համար իր արաայայտութիւնը:

«Իմ թատրոնս, — կ'ըսէ ան, — հակաթատրոն մըն է՝ ա'յն իմաստով, որ գուտ թատրոն մըն է, ամբողջովին թատերական թատրոն մը»<sup>34</sup>:

Իոնեսքոյի հանդիսատեսները հազուադէպ է, որ անաարբեր

<sup>32</sup> Նոյն տեղը, էջ 30—33:

<sup>33</sup> Նոյն տեղը, էջ 16:

<sup>34</sup> Նոյն տեղը, էջ 167:

մնան. կա՛մ կատաղորէն հակառակ են Խոնեսքոյի ներկայացումին, կամ կատաղորէն համաձայն:

«Արդի» կոչուած թատրոնի բոլոր ներկայացուցիչները չեն, որ նոյն ձեւով կը մօտենան հարցին: Անոնց համախմբումը կը կատարուի մէկ հասարակ յայտարարի շուրջ՝ թատերական ընդունուած, սլայմանական կանոններուն չենթարկուիլ, թափ տալ երեւակայութեան եւ կացութիւններ ներկայացնել:

Սակայն նպատակներու յայտարարութիւնները չեն, որ թատրոնը կ'ընեն թատրոն, եւ թատերադրութիւնը՝ դրականութիւն:

Ուե՛է մէկը իրաւունք ունի ինքզինք արտայայտելու համար օգտաւորձել արուեստի այս կամ այն ձեւը, միջոցը: Նոյն աղատութիւնը կը վայելէ նաեւ թատերագիրը: Ճիշդ է նաեւ, թէ արտայայտութեան թատերական ձեւը անսահման կարելիութիւններ կրնայ տալ, քանի որ հանդիսատեսը տրամագիր է ընդունելու բեմին վրայ ներկայացուելիքները, իբրեւ հեղինակին իրեն հետ հաղորդակցութեան մէջ մտնելու միջոցները: Ատիկա չի բաւեր սակայն: Որսկէսզի դորժ մը թատերական ըլլայ, անհրաժեշտ է, որ հանդիսատեսը կարենայ հաղորդակցութեան մէջ մտնել թատերագիրին հետ:

Թատերագիր մը սլարտաւոր չէ հասարակութեան համար գրել իր թատերախաղը: Սակայն ան սլարտի չմոռնալ, թէ թատերական դորժ մը, իբրեւ այդ՝ կ'իրականանայ միայն ներկայացման մը ընթացքին. ներկայացում մը առանց հանդիսատեսի չի կրնար ըլլալ:

Արուեստի երեւակայութեան եւ հիւանդագին ուղեղներու զանանցանքներուն տարբերութիւնը կը կայանայ անո՛ր մէջ, որ առաջինը անսլայման բան մը կ'ըսէ, մինչեւ անգամ երբ երեւութասլայմանկապակից ձեւով կը ներկայանայ. իսկ երկրորդը արտայայտութիւնն է դերագրողուած ուղեղներու, որոնք անկարող են համադրուած ձեւով արտայայտուելու:

Կրնայ առարկուիլ, թէ յարաբերական է նաեւ «հաւասարակշիռ ուղեղ» արտայայտութիւնը:

Ճիշդ է նաեւ, թէ բաղմաթիւ դրական նորութիւններ ժամանակի կաբիքը ունեցած են բացատրուելու համար, դառնալու համար ըմբռնելի եւ դարձած են նոյն իսկ ըմբռնելի. սակայն կարելի եղած է գտնել բացաարող մը եւ բացատրութիւն մը, որ երեւութասլայման անկապակից երեւցող աարբերը կը համադրէ եւ հանդիսաանանքուն կը հրամցնէ անոնց կողմէ ըմբռնելի վիճակով մը:

Սամուէլ Պեքէթի «Սպասելով կոտոյի» թատերախաղը գլխաւորարար հեաեւեալ սլաաճաոով մեղադրուեցաւ.

«Ահաւոր է, ոչինչ կը պատահի, ոչ ոք կու գայ, ոչ ոք կ'երթայ»:

Այս արաայայտութիւնը թատերախաղին երկու անձնաւորութիւններէն էսթրակոնի արաայայտութիւնն իսկ է եւ իրենց կացութիւնը կ'արտայայտէ լրիւ:

Ճիշդ չէ, ի հարկէ, թէ ոչ ոք կու գայ, ոչ ոք կ'երթայ. ուրիշ երկու անձնաւորութիւններ, Փողզո եւ Լաքի, քանի մը անգամ բեմ կ'ը մանեն ու կ'ելլեն: Այդ շարժումները, սակայն, ոչ մէկ տեղ կ'առաջնորդեն թատերախաղը. կայուն գոյավիճակ մը կայ, դորժողութիւնը կը բացակայի թատերախաղէն. այդ սլաաճաոով է, որ կ'ըսուի, թէ ընդունուած իմաստով թատերախաղ մը չէ Պեքէթի դորժը: Սա-

կայն երբ կ'աւարտի թատերախաղը, էսթրակոնի եւ Վլատիմիրի ան-  
ղօր, բուսական վիճակը տրտմութիւն մը կ'առաջացնէ հանդիսատեսին  
մէջ, եւ անդրադարձումը՝ մարդկութեան անգորութեան, անյոյս սպա-  
սումին: Այն տտեն կարելի է անդրադառնալ, թէ թատերախաղին  
մնայուն, հիմնական հաստատումը ա'յն է, թէ մարդկային կեանքը  
իմաստէ զրկուած, մեքենական բանի մը վերածուած է, որ ոչ մէկ  
տեղ կը տանի, ուրկէ փախչիլ կարելի չէ. կարելի է միայն տար-  
տամօրէն յուսալ, թէ բան մը պիտի պատահի, որով՝ պէտք է սպասել,  
պէտք է սպասել...:

Պեքէթի թատերախաղը եթէ կը ներկայացնէ կամազուրկ անձ-  
նաւորութիւններ, որոնք ոչ մէկ բախումի մէջ կը գտնուին, ոչ մէկ  
իրականացնելիք նպատակ կը հետապնդեն եւ կը մնան գրեթէ բուսա-  
կան վիճակի մէջ կանգնած, այդ չի նշանակեր, թէ թատերախաղը  
առանց կառոյցի է եւ առանց գործողութեան: Գործողութիւնն ու  
բախումը փոխադրուած են սրահ. ներկայացման ուշադիր հետեւող  
հանդիսատեսներու մտքին ու հոգիին մէջ է, որ տեղի կ'ունենան ա-  
նոնք: Էսթրակոնի եւ Վլատիմիրի կացութեան ներկայացումը, այն-  
պէս՝ ինչպէս յաջողած է պատկերացնել Սամուէլ Պեքէթ, չի կրնար  
չմղել հանդիսատեսը մտածելու, լրացնելու ըսուածները եւ տրտմելու  
կամ ընդվզելու ի տես մարդկութեան կրած այս հոլովոյթին, կամ-  
քերու այս անճիտումին: Կամքի ծառայումը հանդիսատեսներունն է:

Պեքէթի «Սպասելով Կոռոյին» թատերախաղը կը յիշեցնէ յու-  
նական ողբերգութիւնները, ուր մարդը պայքարի մէջ էր աստուած-  
ներուն դէմ եւ իր ժամանակաւոր յաղթանակներուն համար շատ սուղ  
կը վճարէր, քանի որ վերջին հաշուով դատապարտուած մըն էր ինք:  
Տարբերութիւնը պրոմէթէոսեան շղթաներուն մէջ կը կայանայ: Շղ-  
թաներուն տակ՝ շղթաներուն դէմ ընդվզում կար: Վլատիմիրի ոտ-  
քերուն շղթայ չկայ. Լաքիի վիզէն կապուած չուան մը կայ միայն.  
սակայն երկուքն ալ կորսնցուցած են ընդվզելու կարողութիւնը: Ա-  
նոնք համակերպածներ չեն. համակերպում կը նշանակէ՝ նախ ընդ-  
վզում, ապա միայն լուութիւն: Վլատիմիր եւ էսթրակոն կամազուրկ  
արարածներ են այլեւս:

Այս իրողութեան ներկայացումը, Պեքէթի մը տաղանդով ու  
արուեստով, կրնայ քանի մը թատերախաղի նիւթ հայթայթել եւ  
այդ գործերն ալ կրնան հաճոյքով գիտուիլ, սակայն այդ չի նշանա-  
կեր, թէ թատերական գրականութիւնը պիտի հետեւի այդ ճամբուն,  
այսինքն՝ առանց գործողութեանց, առանց կամքերու բախումի, ա-  
ռանց զարգացումի, առանց պազաթնակէտի թատերախաղեր գրելու  
պահանջի մը կամ «կանոն»ի մը: Դարուն յանցապարտութեան զգա-  
ցումը եթէ առաջնորդէ կամքերու անճիտումին, թատրոն չի մնար.  
Թատերապրութեան կարիքը չի մնար: Եթէ այլ արժէքներ պիտի չգան  
փոխարինելու հիները, մարդուն համար կարելի պիտի չդարձնեն մաս-  
նակցութիւնը կեանքին իր սեփական անձնաւորութեամբ, ցանկու-  
թիւններով ու կամքով, այդ պարագային բոլոր գործողութիւնները  
կ'իմաստազրկուին: Թատերախաղի մը կեանք ու հոգի տուողը գոր-  
ծողութիւնն է. գործողութիւններ կ'առաջանան երբ կամքեր կան,  
կ'արտայայտուին, կը բախին, կը պայքարին՝ իրենց սեփական տե-  
լականին պաշտպանութեան կամ իրականացման համար:



Արդիական կոչուած թաարոնը թաարոնին պիտի բերէ ի՛ր նորութիւնները. թատերագիրին ալ՝ արտայայտութեան նոր կարելիութիւններ, նոր միջոցներ. սակայն, ինչպէս իրեն նախորդող «վերանորոգումներ»ը, ի՛նք եւս պիտի չկարենայ խախտել թաարոնին հիմնական պայմանները:

Բեմերը կրնան մեծնալ, լոյսի ու ձայնի, դոյնի ու ձեւերու լաւադոյն օգտագործումի մը կարելի է հասնիլ. կարելի է երեւակայութեան թափ տալ եւ թանձրացեալ ձեւով ներկայացնել անձկութիւն մը, մտածում մը, կայութիւններ: Սակայն բոլոր պարագաներուն թաարոնը պէտք է ըսէ ըմբռնելի բան մը եւ որոշ կառուցումով պէտք է ներկայանայ հանդիսատեսին:

Թաարոնը կայ եւ ունի իրեն յատուկ իմաստ մը: Տարբեր բաներ ալ կարելի է փորձել, մինչեւ իսկ կարելի է բեմը օգտագործել տարբեր նպատակներով, սակայն անոնք կ'ըլլան տարբեր բաներ, եւ ո՛չ՝ թաարոն:

Թատերագրութիւնը է՛ ու կը մնայ արուեստագէտ հեղինակներու բեմի ճամբով արտայայտուելու միջոցը: Ինչպէս բոլոր արուեստները՝ նա՛եւ թատերագրական արուեստը պիտի հետեւի կեանքի հոլովոյթին, փոփոխութիւններ պիտի կրէ, սակայն հիմնականին մէջ մնալով նոյնը: Արժէքը փոփոխութեանց մէջ չէ, նորութեանց մէջ չէ, այլ՝ արուեստին: Եթէ բան մը պիտի մնայ թատերագիրէն, պիտի մնայ արուեստի մեծութեան շնորհիւ:

**ԲԱԲԳԻՆ ՓԱՓԱԶԵԱՆ**

Լ. Մ Կ Ր Տ Ջ Ե Ա Ն

## Ա Լ Ե Ք Ս Ա Ն Դ Ր Ս Ո Լ Ժ Ե Ն Ի Ց Ի Ն

(ՄԱՐԴԸ, ՃԱՆԱՊԱՐՀԸ, ԳՈՐԾԸ)



Գրողների ու արուեստագետների համար մատչելի է աւելի՛ն՝ յողթե՛լ ստին: Արդէն իսկ ստի դէմ պայքարելի՛ս է, որ արուեստը միշտ յազրել է, միշտ յազթում է, — բոլորի համար տեսանելի, անհերքելի: Աշխարհում շատ բանի կարող է դիմանալ սուտը, բայց ո՛չ Արուեստին:

ԱԼ. ՍՈԼՃԵՆԻՑԻՆ

Զ.

1971 թուականին Փարիզում լոյս աեսաւ ՍոլՃենիցիինի «Տասնըչորսի Օգոստոսը (իին տումարով Օգոստոսի 10-21)» հատարը: Այդ հատարը կոչում է «Առաջին հանգստից»: Դասելով հեղինակային յուելեայ տեղեկութիւններէց, պիտր բնդարձակ յրացման մաս է կոչում: Առաջով յայտնի է, որ դրան պէտք է յաջորդեն «Տասնըվեցի Հոկտեմբերը» եւ «Տասնեօթի Մարտը» վերնագրերով հանդայնէրը: Այդ ետագրութիւնը ՍոլՃենի-

ցիւնը համարում է իր դրական դործունէութեան դերագոյն նպատակը:

Այսպէս, փարիզեան ոուսերէն հրատարակութեան վերջարանում ՍոլՃենիցիւնը, ի շարս այլ բացատրութիւններէ, ասում է նաեւ հետեւեայը.

«Այս առաջին մասով բացուող ընդհանուր ծրագիրը ինձ մօտ յղացուել է 1936 թուին, միջնակարգ դպրոցն աւարտելիս: Այդ ժամանակից ի վեր ես երբեք չեմ բաժանուել նրանից, այն ըմբռնելով իբրեւ իմ կեանքի գլխաւոր ծրագիրը: Ուրիշ գրքերի վրայ կանգ առ-

նելով՝ սուկ իմ կենսագրութեան առանձնայատկութիւնների եւ ժամանակակից տպաւորութիւնների խտութեան բերումով, ես ընթացել եւ պատրաստուել եմ ու նիւթեր հաւաքել միայն այդ ծրագրի ուղղութեամբ»:

*Այդ վերջաբանում հեղինակը անդրադառնում է նաեւ այն հարցին, թէ ինչու դիրքը չի կարող լոյս տեսնել իր հայրենիքում.*

«Այս գիրքը հիմա չի կարող տպուել մեր հայրենիքում, — ոչ այլ կերպ, քան ինքնահրատարակչութեամբ, — բնական մարդկային դատողութեանը անհասանելի գրաբնական առարկութիւնների պատճառով եւ հենց թէկուզ նրա համար, որ հարկ կը լինէր Աստուած բառը անպայման փոքրատառով գրել: Այդ նրաստացման հետ ես արդէն չեմ կարող հաշտուել: Աստուած փոքրատառով գրելու հրահանգը էժան աթէիստական մանրախնդրութիւն է, փոքրութիւն: Թէ՛ հաւատացեալները եւ թէ՛ ոչ-հաւատացեալները համաձայն կը լինեն, որ եթէ Մթերումների Մարգային վարչութիւնը գրում է մեծատառով, իսկ ԿԳԲն (պետանվտանգութեան կոմիտէն) եւ ԶԱԳՍը ամբողջովին մեծատառ, ապա տիեզերքի բարձրագոյն ստեղծագործ ուժը նշանակող հասկացութեան համար կարելի է թոյլատրել գոնէ մի մեծաատ: Չեմ ասում արդէն, որ փոքրատառ «աստուածը» 1914 թուականի մարդկանց բերում եւ պատկերացումներում պատմական կեղծիք կը լինէր»:

*Դեռեւս 1971 թուականին Սուլթենիցիներ, յայանելով նիւթեր հաւաքելու այլեւայլ կարգի դժուարութիւնների մասին, խնդրում եւ կոչ էր անում, որ Առաջին Համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանի վերաբերեալ հաւաստի առեւալներ եւ նիւթեր ունեցողները օգնեն իրեն՝ մա՛նաւանդ արտասահմանից: Հետադառնում, արդէն անձամբ արտասահման ընկնելով, դրողը ուսական մամուլում աւելի հանդամանօրէն անդդրազարձաւ այդ խնդրին՝ արժէքաւոր համարելով նոյնիսկ ամենափոքր ու ան-*

*նշան կարծուող հաւաստի վկայութիւնը: Եւ ներկայումս Սուլթենիցիներ իր ժամանակի եւ ուժերի հիմնական մասը յատկացնում է սլաւոնական ժամանակաշրջանի ուսումնասիրութեանը ու իր պատանեկան երազը ի կատար ածելուն:*

*Գրողը քանիցս խոսատուանել է, որ սկզբում ինքը կարծում էր, թէ ի վիճակի կը լինի դործը սպառել պատերազմական տարիների կեանքի ուսումնասիրութեամբ, բայց աշխատանքի ընթացքում նորանոր պահանջներ երեւան եկան: Պարզուեց, որ առանց 1914 թուականին նախորդած տասնամեակների ուսաստանեան իրականութեան հիմնաւոր հետազօտութեան՝ անկարելի է լիովին դոհացուցիչ երկ ստեղծել: Ուրեմն՝ կաարելիք աշխատանքը ուղղակի բազմապատկուեց:*

*1975 թուին նոյնպէս Փարիզում տպուեց Սուլթենիցիի «Լեւինը՝ Յիւրիխում» դիրքը: Հեղինակը իր եռագրութեան մէջ տեղ է վերապահել նաեւ Լեւինին: Առաջին Հանդոյցի 22րդ գլուխը, պատրաստ լինելով հանդերձ, ժամանակին չի մտցուել հրատարակութեան մէջ որոշ նկատառումներով: Իսկ 2րդ եւ 3րդ հանդոյցների լեւինեան գլուխները դրուել կամ սկսուել են դեռեւս Խորհրդային Միութեան մէջ: Յիւրիխում Սուլթենիցիները դտաւ լրացուցիչ կարեւոր նիւթեր, ուստի եւ համապատասխան գլուխների ծաւալը մեծացաւ: Եւ քանի որ դալիք հանդոյցների հրատարակութիւնը շուտ չի նախատեսուում, հարկ համարուեց լեւինեան գլուխները հրատարակել առանձին գրքով: «Լեւինը՝ Յիւրիխում» դիրքը պարունակում է մէկ գլուխ Առաջին, եօթը գլուխ Երկրորդ եւ երեք գլուխ Երրորդ հանդոյցներից:*

*«Տասնըչորսի Օգոստոս»ը դրքի արտասահմանեան հրատարակութիւնը ժամանակին առիթ եղաւ, որպէսզի խորհրդային երկրում, չհաշուած արտասահմանեան ձայնակիցներին, զրպարտչական կատաղի արչաւ սանձազերծուի Սուլթենիցիի դէմ: Մամուլի էջերում դրքի «քննադատութեամբ» հանդէս եկան*

եւ ըստ վերին հրամանի փրփուր թափեցին բացառապէս այնպիսիները, որոնք զբքի երեսն անգամ չէին տեսել: Եւ այդպիսով մի անգամ եւս փառաւորսեց «սովետական հասարակական կարծիքը», իր ունայնութեամբ, արտառոցութեամբ ու անհասանելի դարչելիութեամբ:

«Տասնըչորսի Օգոստոս»ը ըստ էութեան պատմական վէպ է: Եւ քանի որ ամբողջովին վերարերում է պատերազմի ժամանակաշրջանին ու մեծ մասամբ ներկայացնում զինուորական ու ռազմաճակատային միջավայր, որոշ վերապահութիւններով կարող է համարուել նաեւ պատերազմական վէպ: Թէեւ պէտք է անմիջապէս շեշտել, որ հեղինակի նպատակը, դատելով երկի բովանդակութիւնից, պատերազմի նկարագրութիւնը չէ, այլ պատերազմական ժամանակաշրջանի մարդկանց ու հասարակութեան կեանքի գեղարուեստական մարմնաւորումը, մարդկային կենցաղի, ասրումների, տըրամադրութիւնների, արարքների ու հակազդեցութիւնների հաւանական համայնապատկերը դժելը: Վէպի մթնոլորտը առաւելապէս, եթէ չասենք ամբողջովին, մարդկային շնչառութեամբ է ներկայանում եւ մարդու ամենեքեան ներկայութիւնն է վկայում:

Առաջին հանգոյցը բաղկացած է 64 դրուխներից: Շարագրանքը աչքի է ընկնում որոշ առանձնայատկութիւններով: Հիմնականը հիւսուած է, բնականաբար, գործող անձանց անմիջական շարժումներով ու արտայայտութիւններով: Բայց շատ յաճախ հեղինակը որոշ դրուխներ է յատկացնում ժամանակի իրադարձութիւնների ընդհանուր հեղինակային ամփոփմանը, առանց գործող անձանց ներկայութեան ու նրանցից անկախ, լրացուցիչ կարգով լուսարանելով դէպքերի ընթացքը: Բացի այդ, ժամանակ առ ժամանակ, երեւում են 1914 թուականին վերաբերող եւ այն օրերին հրատարակած տպագիր նիւթերից կազմուած զանազան վկայութիւնների փնջեր, առաւել վաւերական երանգ տալով պատումին:

Վէպի շարագրանքի իւրայատկու-

թիւնը նկատելի է մանաւանդ «կլինոէկերանային» (շարժանկարապատաստանային) դրուխներում», որտեղ պատկերներ են հրամցւում շարժանկարային արուեստի սկզբունքներով: Ո՛չ միայն այդ պարպան, այլեւ վէպի ամբողջ հիւսուածքը կասկած չեն թողնում, որ «Տասնըչորսի Օգոստոս»ն ու առհասարակ ամբողջ վէպաշարքը անպայման պիտի դրաւեն շարժանկարային գործիչների ուշադրութիւնը ու ներկայացուեն կենդանի տեսարաններով եւ համապատասխան դոյներով:

Վէպում ներկայացուած են թէ՛ քաղաքացիական եւ թէ՛ ռազմաճակատային իրականութեան պատկերներ: Սկզբում մեր առջեւ պարզւում է Հիւսիսային Կովկասի ռուսաբնակ վայրերի դիւղաշխարհը, նաեւ Դոնի Ռոստովի ու Մոսկուայի ուսումնա-մտաւորական միջավայրը: Այնուհետեւ ընթերցողը տեղափոխւում է Արեւելեան Պրուսիա՝ վէպի գործողութիւնների հիմնական վայրը: Իսկ վերջին դրուխներում էլ վերստին ներկայացւում են քաղաքացիական կեանքի դրուսպներ, ինչպէս եւ Պետրոգրադին մերձակայ արքունական միջավայրը, բարձրագոյն հրամանատարութեան ներկայացուցիչներով եւ նրանց բնորոշ յատկանիշներով:

Առաջին դրուխների պատկերներում մենք ծանօթանում ենք այն միջավայրին, որտեղ ընթացել է Սոլժենիցինի ազդականների կեանքը: Աւելին, այնտեղ ներկայացւում է ուղղակի այդ աղաւկանների համակարգը, նրանց դեղաբուստական ինքնութիւնը: Աւելի կամ պակաս ձեւափոխուած անունների տակ ցոյց են տրւում հեղինակի հօրենական ու մօրենական կողմերի բնտանիքները, — պապերն ու տատերը, նրանց զաւայներն ու հարսները, դորձակիցներն ու շրջապատողները: Ընթերցողի աչքի առջեւ դժագրւում են Սոլժենիցինի ապաղայ հօր եւ մօր կերպարները, որոնք պատանութիւնից նոր են երիտասարդական տարիքը մտնում: Հայրը ներկայանում է իբրեւ Լաժենիցին (իրականում՝ Սոլժենիցին) ընտանիքի համալսարանա-



կան սրղի Իսաակի (իրականում՝ Իսայ), իսկ մայրը՝ Տոմչակ (իրականում՝ Շչերբակ) ընտանիքի ուսանողուհի դուստր Կոենիս (իրականում՝ Տաիոիա)։ Տարակորս շկայ, որ յաջորդ հանդույցներում թէ՛ նրանք եւ թէ՛ ընթերցողին ծանօթացուող միւս՝ երիտասարդ կամ տարեց, անձերը անսլայման վերստին կը ներկայանան։

Վէպի ռազմաճակատային մասի բուն պատմութիւնը կարելի է ամփոփել այսպէս։ Ինչպէս որ տրդէն նշուած է վերնագրի մէջ, ժամանակային առումով գործողութիւնն ընդգրկում է 1914 թ. Օգոստոսի 10-21ը, հին տոմարով։ Այն օրերը, երբ ռուսական բանակը՝ Հիւսիս-Արեւմտեան ճակատում՝ փորձեց Արեւելեան Պրուսիայում վճռական յառաջխոյզացում կատարել, բայց ինքը իր կարեւոր մասով շրջապատման մէջ ընկաւ եւ այդպիսով Երկրորդ զօրաբանակը, զօրավար Սամսոնովի հրամանատարութեամբ, գլխովին ջախջախուեց։ Մօտ հարիւր հազարանոց զօրքից քսան հարարը զոհուեցին, իսկ 70 հազարն էլ գերուեցին։

Այդ կապակցութեամբ, ընթերցողը ծանօթանում է ռազմավարական մի շարք հարցերի, հրամանատարական կազմի համալրման ընդունուած սովորութիւններին, հրամանատարական ակնյայտ անճարակութեան օրինակներին, որոշ բարձր խաւերի մորթապաշտական տրամադրութիւններին, ինչպէս եւ բանակային զանգուածի մաս կազմող տարրերի հագեթանութեանն ու հայրենասիրական եւ հերոսական ոգու այլեւայլ փայլատակումներին։ Գրողը չի սահմանափակուած որեւէ միազիծ իրականութեամբ, հոսանքով, ճանապարհով։ Նա ջանում է ընդդրկել ըստ հնարաւորին շատ նիւթ ու վկայութիւններ։ Ուստի՝ մեծ տեղ են բռնում զուգահեռ պատումները, շեշտուած են արագ անցումները բնագաւառից բնագաւառ։

Գրողին օգնել է այն պարագան, որ ինքը անձամբ դերմանախորհրդային պատերազմի ընթացքում գտնուել է նը-

կարտգրուող երկրամասում։ Ուստի՝ միջայայրը նկարագրելու համար երեւակայութեանը դիմելու կարիք չունի։ Երեւակայութիւնը շարժման մէջ է դրուում առաւելապէս կերպարներ մարմնաւորելու ուղղութեամբ, մա՛նաւանդ՝ որ դրանք պատմական են եւ մտքի լարուածութիւն են պահանջում՝ վաւերական դառնալու համար։

Վէպի ռազմաճակատային մասի շարադրանքը պտըտուում է Ալլենշտայն, Հոհենշտայն, Նայդենբուրգ, Վիլլենսբերգ, Օրաւսբուրգ եւ այլ քաղաքների ու բնակավայրերի անունների շուրջ։ Բուն ռազմական տեսարանների հետ միաժամանակ ներկայացուում են նաեւ քաղաքացիական բնակչութեան կեանքի պատկերներ։

Քանի որ վէպում էականը վիպային ճանապարհներից որեւէ մէկը անպայման չեշտելը չէ, միւսների թուլացման հաշւին, կարեւոր է դառնում զուգահեռ իրականութիւնների համադրական ընկալումը։ Իսկ նման ընկալման առաւել արդիւնաւէտ միջոցը յատկանշական գրուազներին իրազեկ լինելն է, գոնէ արծարծուած հիմնական նիւթերի շրջանակում։ Ի հարկէ, հեղինակն իր երկն ըստեղծել է որոշակի դիրքերից, ամբողջական հայեացք ունենալով ներկայացուող իրականութեան նկատմամբ։ Ուստի՝ առանձին դրուազները երբեք ինքնանպատակ չեն, այլ միահիւսուած են թէ՛ յարակից դրուազներին եւ թէ՛ ամբողջութեանը, կարող են առաւելագոյնս հասկացուել ու բացատրուել նմանապէս միւս դրուազների եւ ամբողջութեան օգնութեամբ։ Վէպը այդ մակարդակով ներկայացնելու հիմքեր կան։ Բայց տուեալ դէպքում նպատակայարմար է գոհանալ առաւել աչքի ընկնող յատկանշական կողմերի ծանօթութեամբ։

Վէպի գրեթէ առանցքային կերպար կարելի է համարել գնդապետ Վորոտինցեւին, քանի որ նա ռազմաճակատային մասի սկզբից մինչեւ վերջ, նոյնիսկ աւելին, ներկայանում է ընթերցողին։ Վորոտինցեւը ներկայացնում է

ուսումնական ու հասարակական մտածողութեան որոշակի ուղղութիւն: Նա դըրժտուր սպայակոյտի աշխատողներէն է, երիտասարդ է եւ ունի իր համախոհները: Սիրում է իր հայրենիքը, բայց դժգոհ է առկայ այլեւայլ պայմաններից: Ուղղում է օգտակար լինել՝ ո՛չ թէ ժլտական, տյլ՝ բարենորոգչական միջոցներով: Այդ տրամադրութեամբ էլ դըրժտուր սպայակոյտից, համախոհների չանքերով, գործուղում է ուսումնական գործերի վիճակին ծանօթանալու եւ համապատասխան ղեկուցողի ներկայացնելու համար: Եւ, ստեղծուած պայմաններում, նրան տեսնում ենք թէ՛ հրամանատարական եւ թէ՛ բանակի շարքային միջավայրում, տեղեկանում նրա վկայութիւններին:

Պէտք է ասել, որ Սովետիցիներ Վորոտինցեւի կերպարի մէջ խտացրել է եւ իր սեփական ըմբռնումները, կարծես ցոյց տալով, թէ ինքը ինչ կը մտածէր ու ինչպէս կը վարուէր Վորոտինցեւի փոխարէն ասրելու գէպքում: Ի հարկէ, այսպէս կարելի է պնդել, երբ նկատի ունենք երկի գրական-գեղարուեստական պայմանական կողմը եւ անպայման նոյնական իմաստ չենք վերագրում հեղինակի ու որեւէ հերոսի բոլոր արտայայտութիւններին: Սովետիցիներ ամբողջ գրքի հեղինակն է, իսկ Վորոտինցեւը կերտուած հերոսներից մէկը, թէկուզ եւ առաւել համակրելին հեղինակի աչքում: Չենք կարող դրանք լիովին նոյնացնել, բայց չենք էլ կարող անգիտանալ հեղինակային մտածելակերպի եւ Վորոտինցեւի մտքերի ազդակցութիւնը:

Այդ իսկ պատճառով որոշակի հետաքրքրութիւն են ներկայացնում Վորոտինցեւի խորհրդածութիւնները ուսական բանակի հրամանատարութեան կազմի մասին: Դրանք ուշադրաւ են թէ՛ ինքնին եւ թէ՛ վէպի ընթացքը բացատրելու հեղինակային ելակէտի առումով: Վորոտինցեւը խորապէս գիտէր է իրերի վիճակից, երբ ղինուորականները՝

«Բանակը հասկանում են իբրեւ յարմար, փայլուն ու գորգապատ սան-

դուխք, որի աստիճանները վրայ ուսումնական ու աստիճաններ են բաժանում: Նրանց մտքով լրջօրէն չի էլ անցել, որ այդ սանդուխքը աւելի շատ պարտաւորեցում, քան պարգեւատրում է, որ աշխարհում կան ինչ-որ գիտնական գիտելիքներ եւ դրանք փոխում են իւրաքանչիւր տասը տարում, ուստի եւ պէտք է սովորել, միշտ փոխուել, հասցրել: ... Սանդուխքն այնպէս է սարքաւած, որ նրանով առաջ են քաշուած ո՛չ թէ կամփի տէր մարդիկ, այլ՝ բմբաւները, ո՛չ թէ խելացիները, այլ՝ կամակատարները: ... Ռուսական բանակին կործանել է աւաղութիւնը՝ ծառայութեան գերագոյն անվիճելի հաշիւն ու ըստ աւաղութեան բարձրանալու կարգը»:

Սյա կարգի խորհրդածութիւնները բացայայտում են ժամանակի ղեկավար խաւի կազմախօսութիւնը, ինչ որ, անշուշտ, զուտ տեղական մենաշնորհ չէ: Այդուհանդերձ, համանման վկայութիւնների կողքին, վէպի վկայութիւնը եւս ծանրակշիւ է դառնում:

Վէպում բանակ կանչուածների տրամադրութիւնը չափուած է սովորական, ընթացիկ չափանիշներով: Բանակը եւ պատերազմը ընկալում է իբրև անխուսափելի կացութիւն: Այսինքն՝ որքան էլ անցանկալի ու դժուար լինի այդ վիճակը՝ զանգուածը դրանից խուսափելու կամ դրա համար իր երկրի ներսում յատուկ յանցաւորներ որոնելու փորձ չի տնում: Սովորական բանակ՝ սովորական պարտականութիւններով: Այդ զանգուածի ներսում, բնականաբար, կան նաեւ հերոսական գործերի սիրահարներ: Բայց նկատելի է նաեւ հետտղայ քայքայումների սաղմը, ընդդէմադիր տրամադրութիւնների խմորումը: Առայժմ դա մեծ տեղ չի բռնում, սակայն արդէն տրտայայտում է միտումը եւ հեղինակը չէր կարող չըմբռնել:

Այդ իմաստով ուշադրաւ է բժիշկ Ֆեդոտինի եւ սրբապորչիկ Լենարտովի չի ծանօթութիւնն ու զրոյցը: Հայրենիքի դաշտային հիւանդանոցի մաս:

լենարտովիչը իրաւաբան է եւ ձախակողմեան: Նրա համոզումով՝ «այսպէս կոչուած գրասրտութեան մասնակի դէպքերը միայն մթագնում եւ հեռացնում են հարցի ընդհանուր լուծումը. այս պատերազմի մէջ եւ առհասարակ Ռուսաստանի հետ՝ ո՛րքան գործերը վատանան, ա՛յնքան աւելի լաւ»: Այդպիսի արմատական տրամադրութիւններով է մտածում ու գործում նա, ներկայացուցչական դառնալով որոշակի խաւերի համար:

Ձոնազան առիթներով հարկ է լինում անդրադառնալ եւ Ռուսաստանի ու Դաշնակիցների փոխյարաբերութիւններին: Նման դէպքերում ներկայացւում են սլաակերներ ու անձեր: Այդ իմաստով իր տեղն ունի անդլիական զօրավար Ալֆրէդ Նոքսի այցելութիւնը Օստրոլենկայի զօրակայան, նրա վարուելաձեւի, համազղեստի եւայլնի նկարագրութիւնը: Ուշադրաւն այն է, որ նման պարտգայում անուղղակի կերպով կարծես թէ քննադատում է եւ ռուս զինուորականների ծանրաշարժութիւնը, ձեւամոլութիւնը, համազղեստի կաշկանդիչ բնոյթը, միաժամանակ ակնարկելով օտարների գործունէութեան թեթեւ, բնական եւ գործարար բնոյթի օգտակարութիւնը:

Երբ յիշում է վէպում ընդհանուր յոռետեսութիւն յարուցող իրադարձութիւնների ու մթնոլորտի մասին, հեղինակային մտածողութեան ուղղութեան մասին, հրամանատարական անձնակազմի յետամնացութեան ու դանդաղամտութեան կապակցութեամբ, բնաւ չի մոռացւում խնդրի միւս կողմը: Վէպում ներկայացւում են եւ մեծ թուով օրինակելի կերպարներ բոլոր խաւերից: Կան եւ պարտաճանաչ, անկաշտ ու հնարագէտ հրամանատարներ, նոյնիսկ մտաւոր առաջնակարգ պաշարով: Բայց նրանք չեն որոշում իրերի ընթացքն ու ելքը: Այլ՝ վերին անձարակութեան սլատառով՝ տուժում են թէ՛ նրանք եւ թէ՛ նրանց գործը:

Այդ իմաստով տպաւորիչ է զօրա-

վար Նեչլոլուովի, որը միաժամանակ նաեւ ուղղափառութեամբ տողորուած դրող է, ու հրետանային սպայ Սմիլտովսկու հանդիպումն ու խօսակցութիւնը: Վերջինս իր երեք եղբայրներով հրետանային մասնազէտ է, ու նաեւ ինքն իր համար աստղազէտ եւ փիլիսոփայ, երկրային մանրուքներից վեր մտածում է տիեզերական չափանիշներով: Նրան տարօրինակ է թւում, որ Նեչլոլուովի դրքերում ուղղափառ եկեղեցին միշտ լրաւացի է, քան կաթոլիկութիւնը, մոռկովեան դահը՝ Նովդորոզի դիմաց, ուսական բարքերը աւելի մեղմ ու մաքուր են արեւմտեաններից: Նա մտածում է. «Մեզ մօտ նաեւ Ռուսաստանը չեն հասկանում: Մեզ մօտ 20ից 19ը չեն հասկանում, թէ ինչ բան է Հայրենիքը: Զինւորները կուում են միայն հաւատի ու ցարի համար, դրա վրայ էլ յենում է բանակը»: Իսկ հարկաւոր է, որպէսզի հայրենիքի ըմբռնումը դառնայ ընդհանուր սրտաբուխ զգացմունք: Նեչլոլուովը յարում է. «Այո... Դուք ամէն ինչ լայն էք տեսնում... Իսկ ես Ռուսաստանից աւելի լայն չեմ կարողանում»: Երկու միմեանց լրացնող կերպարներ:

Որտեղ պատերազմ այնտեղ էլ կողոպուտ եւ աւար: Բոլորը չեն կողոպտում, ի հարկէ, բայց կողոպտիչների բնազդն արթնանում եւ գործելու ասպարէզ է բացւում, տխուր օրինակ ծառայելով նոյնիսկ խոնարհների համար: «Տասնըչորսի Օգոստոս»ում եւս այդ կարգի դրուազներ կան, երբ խաչաձեւում ու բախւում են տարբեր էութիւններ: Ռուստովի երիտասարդ սպայ Շարոսլաւ Խաբիտոնովը, խանդավառ հայրենասէրի ու դադափարական մարդու իր էութեամբ, անսահման զզուանքով է տեսնում, թէ ինչպէս են զինուորները կողոպտում լքուած քաղաքը: Ամէն կերպ ջանում է արդելել այդ մոլութիւնը, բայց ի դուր: Եւ նրա ու սպասեակ Կոզեկոյի միջեւ «բանավէճ» է ծաղում՝ թեր ու դէմ փաստարկումներով, դադափարապաշտ սպայի եւ գործնական զինուորի միջեւ:

Ընդհանրապէս, հրամանատարու-

թեան ու շարքային զինուորներն փոխ-  
յարաբերութեան հարցը արծարծուով է  
այլեւայլ առիթներով, ու մակարդակնե-  
րով: Որովհետեւ այդ փոխյարաբերու-  
թիւնները արտացոլում են ո՛չ միայն  
զինուորական ու պատերազմական, այլև՝  
ընդհանուր հասարակական օրինաչափու-  
թիւններ: Դա կարելոր ու նոյնիսկ ճա-  
կատապարհական է մա՛նաւանդ ռուսական  
անծայրածիր ոլայմաններում, երբ ան-  
կարելի է բնական թելերով ծայրը ծայ-  
րին կապել եւ ուստի դերիչխում է կա՛մ  
սանձարձակ քառուր կամ էլ արհեստա-  
կան ու պայմանական, կեղծ արժէքների  
պաշտամունքը, ի վնաս իրական կեանքի  
ու բարօրութեան:

Երբ զօրքը ջլատուով եւ դէմքից ու  
կամքից զուրկ բազմութիւն է դառնում,  
Վորոտինցեւը նախաձեռնում է էստ-  
լանդետն դնել մնացորդներին կազմա-  
կերպել ու ողբերել: Եւ ազդելու համար  
բառեր է ընտրում, նրանց հասկանալի  
լինելու համար: Մի կողմ է դնում Աստ-  
ծուն, նոյնիսկ Ռուսաստանն ու հայրե-  
նիքը, եւ ապաւինում զինուորներն՝ կա-  
ցութեան հրամայական պահանջը դի-  
տակցելու կարողութեան եւ նմանների  
հանդէպ տածած պարտաճանաչութեան  
զղացման վրայ, — «Ահա այդպէս, չէր  
հրամայում, չէր սպանում, — բացա-  
ւորում էր»: Եւ ազդում:

Բայց Արեւելեան Պրուսիայում ռու-  
սական զօրքի պարտուելը պատմական ի-  
րողութիւն է եւ վէպի հեղինակը ջանում  
է դեզարուեստական բոլոր միջոցներով  
բացայայտել պարտութեան պատճառնե-  
րը, առաւելապէս կանդ առնում հրամա-  
նատարութեան վրայ, որովհետեւ հա-  
մոզուած է, թէ նրա անձարակութիւնն  
էր ամօթալի կացութեան դիւաւոր պատ-  
ճառը: Այդ առթիւ հեղինակի խօսքը  
ընդլայնում եւ ընդհանրացումների է  
հասնում.

«Ժողովրդական ոգին ջլատած չորս-  
ամեայ պատերազմի մէջ ո՞վ կարող է  
ցոյց տալ վնասական ճակատամարտը:  
Դրանք անթիւ էին, աւելի շատ անփա-  
ռունակ, քան փառապանծ, որոնք կլա-

նեցին մեր ուժերն ու հաւատը մեր հան-  
դէպ, անվերադարձ ու անօգուտ իլիւպ  
մեզնից ամէնից համարակներին ու գի-  
մացկուններին, թողնելով վատքար տե-  
սակները: Եւ, այնուամենայնիւ, կարե-  
լի է յայտարարել, որ առաջին պարտու-  
թիւնը որոշեց, ուղղութիւն տաւեց պա-  
տերազմի ամբողջ ընթացքին՝ Ռուսաս-  
տանի համար»:

Տեղի չունեցած ճակատամարտի ան-  
փառանակ վախճանը, զօրավար Սամ-  
սոնովի ինքնառօզանութիւնը, ճակատի  
քայքայումը՝ որոշ իմաստով խորհրդա-  
նշական են դառնում վէպի հեղինակի  
համար: Սամսոնովի կեանքի պատմու-  
թիւնը, նրա բարեպաշտութիւնն ու աստ-  
ւածավախութիւնը, ուղղամտութիւնն ու  
նուիրուածութիւնը ընթերցողի առջեւ  
պարզելով, հեղինակը ցոյց է տալիս, որ  
մարդկային ուժերն ու արժանիքները,  
յիբրեւ կանոն, ապարդիւն կորչում են,  
երբ սխալ տեղ են դրնում եւ սխալ ուղ-  
ղութեամբ են գործածուած, սլայմանա-  
ւորուած լինելով ընդհանուր սխալ իրա-  
դրութեան թելադրանքով: Այդ ճանա-  
պարհով է, որ ուժը թուլութեան է վե-  
րածուած, յաղթութիւնը՝ պարտութեան,  
բարօրութեան ուղին՝ ողբերգութեան:

Թերեւս անտեղի չէ այս առթիւ նը-  
շել, որ այդ իրողութիւնը իր հետեւանք  
ներով առաւել ճակատագրական եղաւ  
մա՛նաւանդ հայութեան համար, երբ  
դրեթէ ամբողջ Արեւմտահայաստանը մե-  
ծագոյն թշնամու ձեռքից ազատուել,  
բայց մէկ թեթեւ հարուածով վերստին  
նրան վերադարձուեց: Յաղթութիւնը  
պարտութեան վերածելու դասական օ-  
րինակ: Այս կէտը յիշելն աւելորդ չէ,  
քանի որ բխում է վէպի դադափարական  
հարցադրումից:

Բնականաբար, վէպում ընդհանուր  
հասարակական հոգսերը չեն բացառու-  
ւում միակ ու անառարկելի մակարդա-  
կով: «Մտքերի բախումը» ակնյայտ գե-  
ղարուեստական իրողութիւն է եւ բացա-  
ւորութիւններ առաջ են քաշում տարբեր  
դիրքերից: Եւ երբ, իբրեւ անխախտ եղ-  
րակացութիւն, շեշտուած է, թէ երկիրը



գուրկ էր արժանաւոր ղեկավարութիւնից, չի մոռացւում նաեւ խնդրի ներքին բարդութիւնը: Այսպէս, զօրավար Աամսոնովը, իր փորձից լաւ իմանալով, թէ որքան դժուար բան է դործի համար արժանաւոր մարդ ընտրելը, այսպէս է խորհրդածում:

«Կայսեր համար որքան դժուար է արժանաւոր օգնականներ ընտրելը: Չէ՞ որ վատքար ու շահախնդիր մարդիկ աւելի եռանդուն են բարի ու նուիրուած մարդկանցից, նրանք յատկապէս ջանում են կայսեր առաջ ցուցադրել իրենց կարծեցեալ հաւատարմութիւնը, իրենց կարծեցեալ ընդունակութիւնները: Ոչ ոքի չի վիճակուում տեսնել այնքան ստախօսների ու խաբեբաների, որքան ցարին, եւ այդ մարդը որտեղի՞ց ունենայ ուրիշների մթութիւնները տեսնելու աստուածային խորաթափանցութիւնը: Այսպէս էլ նա դառնում է սխալ ընտրութիւնների գոհ, եւ այդ շահախնդիր մարդիկ, որդերի նման, փորփրում են ուսական ամուր բունը»:

*Վէպում ծանրութեան կենտրոնը ռազմաճակատային իրականութիւնն է, զինուորական վերնախաւի յարակից միջավայրերով: Բայց զուգահեռաբար ներկայացւում է եւ քաղաքացիական հասարակութեան կացութիւնը, նրա բազադրիչ խաւերի տրամադրութիւններով: Ինչպէս որ արդէն նշուել է, այդ բնադաւանին դիւրսներ են յատկացուել դրքի սկզբում եւ վերջում: Ժողովրդական կեանքի նկարագրութիւնը վերաբերում է բացառապէս Լաժենիցին եւ Տոմշակ ընտանիքների առօրեայ կենցաղին ու աշխատանքին: Իսկ հասարակական առաւել բարդ խնդիրները լուսաբանւում են Դոնի Ռոստովի ու Մոսկուայի, մասամբ էլ Պետրոպոլի միջավայրերից վերցրւած կենդանի օրինակներով:*

Ռոստովում դեղարուեստական պատումի հանդիսավայր է ընտրուած մանաւանդ մասնաւոր զիմնապիսի ձախակողմեան տիրուհի Խորիտոնովայի ընտանիքը, որի որդին է «աղաաամիա» մօր կամքից «չեղուած» հայրենասէր Եարոս-

լաւը: Ահա թէ 59րդ գլխում ինչպէս է բնութագրւում տիկնոջ ասպարէզը:

«Ազլաիդա Ֆեդոսէեւնա Խարիտոնովան իշխելու դիրքին վարժուած խիստ կին էր, եւ իշխանութիւնը լաւ էր սագում նրան: Նրա հանգուցեալ ամուսինը, մի բարի մարդ, վախենում էր իրանից՝ առաջին շոյանքից մինչեւ վերջին շունչը: Գիմնագիական տեսչի հանգամանքով նա մշտապէս խորհրդակցում էր նրա հետ, իսկ ծառայութիւնից դուրս՝ ենթարկում առանց աւարկութեան. երեխաները գիտէին, որ ամէն մի լուրջ բան կարող է թոյլատրել կամ արգելել միայն մայրիկը: Քաղաքային իշխանութիւնները շատ էին հաշուի նստում Խարիտոնովայի հետ, եւ նրա գիմնագիայի ձախ ազատամտական ուղղութեամբ հանդերձ՝ ոչ ոք չէր համարձակուում ննչել կամ դիտողութիւն անել նրան: ... Խարիտոնովայի գիմնագիայում պատմութիւն էր աւանդում մի յեղափոխականի կին, որը մերթ դատապարտում, մերթ փախչում, մերթ էլ հենց այստեղ՝ Ռոստովում գործում էր գաղտնի, եւ պատմութեան գիմնագիական դասընթացի ամբողջ ուղղութիւնը բացայայտ յեղափոխական թեփում ունէր: Նոյնպիսի համակրանքներով էր դասաւանդում եւ ուսու գրականութիւնը: Ի հարկէ, չէր վրիպում եւ կրօնի ուսուցումը, բայց դասատու էր հրաւիրում ո՛չ խաւարամուր, ոչ էլ մոլեռանդը. եւ ասեմք սանուհիների կէսից աւելին ազատում էր այդ դասերից, իբրեւ հրէական դաւանանքի անձինք»:

Այս տողերից երեւում է, որ ընդդիմադիր արամտղրութիւնները առաւելապէս մշակուում էին ձախ-ազատամտական բնոյթ կրող ուսումնական հաստատութիւններում եւ միջավայրում, ընդդէմ պահպանողակտնութեան, ցարական իշխանութեան, կրօնի եւայլնի: Նրանք՝ ձախ-ազատամտականները օգտուում էին օրինակտն իրաւունքներից եւ տեղական ուժերի հոյանաւորութիւնից: Իսկ առաւել ձախ, յեղափոխական ու ընկերվարական ուժերի դործունէութիւնը այլ

պայմաններում էր ընթանում, ոչ այնքան բացայայտ ու անկաշկանդ, բայց եւ այնպէս նկատելի ու զլալի: Սովետների վէպում արտացոլում է եւ կեանքի այդ կողմը:

Այդ կարգի իրողութիւններին ընթերցողը ծանօթանում է ալրազացային մի ընկերութեան հարաւարեւելեան բաժանմունքի վարիչ Իլեա Իսաակովիչ Արխանդորոզսկու աշխատանքային ու ընտանեկան միջավայրում: Նրան է այցելում նոյնպէս մի գործարար մարդ՝ Ինժեներ Սվետոզլաւ Օբոզովսկին, որը նախկին անիշխանական է, պետական յանցագործ, յեղափոխական, երկարամեայ Վտարանդի Եւրոպայում, բայց Ռոմանովների թագաւորութեան 300ամեակի առթիւ ներման արժանացած ու հայրենիք վերադարձած: Նա դտնում է, որ «Ինժեներների միութիւնը» հեշտութեամբ կարող է դառնալ Ռուսաստանի առաջատար ուժերից մէկը, եւ աւելի կարելոր ու արդիւնաւէտ լինել որեւէ քաղաքական կուսակցութիւնից: Նա իշխանութիւն չի ուզում եւ հաւատարիմ է Կրապոտկինին, որովհետեւ՝ «գործարար, խելացի մարդիկ չեն իշխում, այլ ստեղծում եւ վերափոխում են. իշխանութիւնը մեռեալ դողոջ է»: Օբոզովսկու բմբրոնումների մէջ արտայայտում է հա-

սարակական ինքնագործունէութեանը զարկ տալու ուղղութիւնը:

Բայց նոյն Արխանդորոզսկու ընտանիքում առիթ է լինում ծանօթանալու եւ այլ կարգի մտայնութեան: Ընտանեկան սեղանի շուրջ ճաշի հրաւիրուածների վեճաբանութեան ընթացքում: Օբոզովսկու ընդդիմախօսում են տանտիրոջ դուստր՝ գիմնադրատուհի Սոնիան, նրա բարեկամ երիտասարդ՝ սոցիալ-դեմոկրատի զաւակ Նաում Գալպերինը: Պոսակցութեան նիւթ է դառնում ամէն ինչ՝ կապիաալիզմ, շահագործում, յաւելեալ արժէք, արտադրութիւն, բաշխում, քաղաքականութիւն, հրէական հարց, եւայլն, եւայլն: Այդպիսով, վէպում արծարծւում են ժամանակի հասարակական խմորումների ըստ հնարաւորին բոլոր կողմերը, գեղարուեստական խօսքի ուժով եւ կենդանի կերպարների անմիջական մասնակցութեամբ:

«Տասնըչորսի Օգոստոս»ը գիրքը (մօտ 580 էջ) գրուել է 1969-1970 թուականներին: Այն աւարտւում է Գերագոյն հրամանատարութեան զօրակայանի հաւաքսթով եւ հետեւեալ առաձանման արտայայտութեամբ.

«Մեզնով չի ստեղծուել անիրաւութիւնը, մեզնով էլ չի վերջանայ»:



### ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ (ՀՐԱԶ ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ)

Այս տարուան Մայիսին, «Համազդայինի Վահե Սէթեան» ազգային լոյս տեսաւ Հրաչ Տասնապետեանի «Հայկական հարցը» անուն գրքովը, մատենաչար՝ «Ազգակ Շարաքօրեակ-Դրօշակ»ի, թիւ՝ 4:

Ինչպէս հեղինակը կը յայանէ գրքովին սկիզբը դրած իր ծանօթութեան մէջ, այս աշխատութիւնը հայացումն է Փրանսերէն դասախօսութեան մը, որ տրուեցաւ 18 Մայիս 1975ին, Պէյրութի Ecole Supérieure des lettres ընդարձակ ամփոփարոնին մէջ, Մեծ Եղեռնի 60ամեակին առթիւ հայ ուսանողութեան կազմակերպած «Հայկական շարժում» ձեռնարկներու շարքին: Անիկա, իրրեւ յօդուածաչարք՝ լոյս տեսաւ նաեւ «Ազգակ Շարաքօրեակ-Դրօշակ»ի 1977 Ապրիլ ամսուան համարներուն մէջ:

Հրաչ Տասնապետեանի աշխատութիւնը դիւրամաաչելի գործ մըն է, որ արագօրէն կը ծանօթացնէ Հայկական Հարցին ծագման եւ անոր հիմնական փուլերուն զարգացման հստակութիւնը:

Հակառակ անոր, որ ամփոփ ու սեղմ է դործը, անոր պարաստութեան համար հեղինակը օգտադործած է աւելի քան 26 ազգիւրներ, որոնք դիտարարար օտար են՝ Փրանսական, անգլիական, գերմանական, ամերիկեան եւ թրքական:

Այս իմաստով՝ առարկայականօրէն հիմնաւորուած աշխատանքի մը արդիւնքն է «Հայկական Հարցը»: Անիկա լիովին յազեցած է պատմական դէպքերու եւ տուեալներու ճշգրտութեամբ:

Միւս կողմէ՝ Հայկական Հարցի ծագման ու զարգացման հանդրուանային բնութագրումը հիմնականին վրայ կեդրոնացնելով՝ հեղինակը կը ձերբադառնէ ընթերցողը յաւելեալ մանրամասնութիւններու փնտռուէքէն:

Աշխատութիւնը կը բաղկանայ հինգ մասերէ, որոնք կ'ուրուագծեն Հայկական Հարցին կարեւորագոյն հանդրուաններուն հստակութիւնը:—

Առաջին մասը հայ քաղաքական պատմութեան մէկ համառօտ ակնարկն է, որ կը սկսի ԺԱ. դարու Բագրատունեաց հարստութեան, եւ ապա՝ 1875էն ետք, Բուրինեան հարստութեան անկումով, երբ վերջ դրուեցաւ հայ պետական գերիշխանութեան եւ անկախութեան, հասնելով ԺԲ. դարու երկրորդ կէսը, երբ Սան Սթեֆանոյի դաշնագրով «Հայկական Հարց» արտայայտութիւնը նուիրագործուեցաւ ու միջազգային մակարդակի

վրայ ստացաւ դիւանադիտական ճանաչում: Սակայն, ինչպէս Հրաչ Տասնապետեան կը գրէ, «Իրականութեան մէջ, գէթ հայութեան համար, խնդիրը առկայ էր այն օրէն ի վեր, որ Հայաստան կը հիւծէր թուրանեան ժողովուրդներու լուծին տակ»: այսինքն՝ հայ պետական անկախութեան կորուստէն ի վեր:

Երկրորդ մասը, «Հայկական Հարցը՝ 1878էն մինչեւ 1914» խորազրին տակ՝ կը ներկայացնէ Սան Սթեֆանոյի դաշնագրէն (3 Մարտ 1878) մինչեւ Համաշխարհային Առաջին պատերազմին սկիզբը, երբ Հայկական Հարցի հետապնդման աշխատանքները նոր թափ ու ծաւալ ստացան նախ քաղաքական-դիւանադիտական, ապա՝ յեղափոխական-մարտական միջոցառումներով՝ թէ՛ հայկական եւ թէ՛ միջազգային ճակատներու վրայ:

Հոս կը կատարուի բաղդատականը 3 Մարտ 1878ին կնքուած Սան Սթեֆանոյի դաշնագրին հաշտութեան վերաբերեալ 16րդ յօդուածին, որ «առնչուագն տանելի կեանքի մը խոստումը կը կազմէր», եւ 13 Յուլիս 1878ին ստորագրուած Պերլինի դաշնագրին հաշտութեան վերաբերող 61րդ յօդուածին, որ կու դար փոխարինելու Սան Սթեֆանոյի 16րդ յօդուածը: Սակայն «61րդ յօդուածի անորոշութիւնն ու անգորութիւնը ակնբայի են»: Այսուհանդերձ, 61րդ յօդուածը պարտաւորութեան տակ կը դնէր Եւրոպան, «որ թերացաւ իր պարտականութեան մէջ, ատով իսկ անուղակիօրէն յառաջացնելով Հայկական Հարցի հետագայ բազմաբարդացումներն ու գայն յատկանշող ահաւոր սպանդները»:

Այսպէս, կազմուեցան յեղափոխական միութիւններ եւ կուսակցութիւններ, մինչ միւս կողմէ՝ իր համախիտ գունդերով՝ Սուլթանը կը ձեռնարկէր զանգուածային ջարդերու:

Յեղափոխական նախաձեռնութիւններ ունեցան նաեւ կտրոք մը թուրքեր, որոնք ստեղծեցին թուրք ազատական շարժում մը, որ հայ յեղափոխականներու հետ գործակցարար, 1908ին, կըրցաւ Սուլթանին պարտադրել 1876ի չորսդարուած սահմանադրութիւնը: Ապա, 1909ին, զահւնկէց եղաւ Սուլթանը:

Սահմանադրական շրջանին, հայ քաղաքական ուղին օսմանցիութիւնն էր, որ կ'առաջադէր օսմանեան կայսրութեան մէջ թուրքերու եւ միւս ազգութեանց միջեւ ստեղծել դաշնակցային միութիւն մը: Դժբախտարար, թրքական Միութիւն եւ Յառաջդիմութիւն կուսակցութեան կոմիտէն իր կարող մը ղեկավարներու մոլեռանդ ընթացքով բունեց ցեղապաշտութեան ուղին՝ որդեգրելով համաթուրանական վարդապետութիւնը: Եւ սկըռաւ բոնի թրքացման քաղաքականութիւն մը:





թեան ընդդժումը, զոր կը կատարէ Տասնապետան:

Ու այդ եղբայրակիչ պարբերութիւնը բարոյախօսութիւն չէ, պատգամ չէ, այլ՝ դարերու ընթացքին հայկական արդար հարցի եւ հայուն իրաւադրկուած ըլլալու հանգամանքին կուտակած ճշմարտութեան արդար ձայնը:

ՍԵՂՈ ՊՈՅԱՃԵԱՆ

«ՄԻԱՅՆ ԼՈՒՍՆՈՎ ԿԱՅ  
ՀԱՅՈՑ ՓՐԿՈՒԹԻՒՆ»

(ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՒԱՆԵԱՆ)

Գրաբար դասադիրքէ մը (1967) եւ բառարանէ մը (1974) ետք, Անդրանիկ Կուսեան այս ասորի հրատարակ հանեց «Միայն լուսնով կայ հայոց փրկութիւն» խորագիրով թատերախաղը, որ կը լազկանայ երեք արարէ: Անոր ժամանակն է 2015 թուականը, Ապրիլեան Եղեռնի հարիւրամեակը:

Առաջին արարը տեղի կ'ունենայ կուսակցապետ Կուկունեանի տունը: Հրաւիրուած են հայու թիւնը բաղկացնող զանազան կողմերը՝ Արտակ սրբազանի գլխաւորութեամբ եւ իրաւարարութեամբ: Օրակարգի գլխաւոր հարցն է, թէ ո՞վ պէտք է զրկել լուսին՝ ուսումնասիրելու համար հոն բնակելու պայմանները: Կողմերը կը համաձայնին, որ Փիբոն ըլլայ այդ անհատը, Կուկունեանի աղջկան՝ Սալբիին նշանածը: Սակայն Կուկունեան կ'ուզէ, որ իր վերադարձէն ետք, Փիբոն իր տեղեկագրին մէջ դէմ արտայայտուի լուսնին. մինչդեռ հակառակորդ կողմը, Ռոստոմ Շահնազարեանի գլխաւորութեամբ՝ կ'ուզէ, որ թեր արտայայտուի, այլապէս կը սպառնայ սպաննել զինք՝ օդակայանին մէջ իսկ: Ահա թէ ինչու Փիբոն կը գտնուի հոգեկան ու մտային տազնապններու մէջ: Շփոթի մէջ է: Ձի դիտեր ինչ ընել:

Երկրորդ արարը երազ մըն է, ուր կը ներկայացուի Սալբիին լուսնային հարսանիքը:

Իսկ երրորդ արարը կը ներկայացնէ Փիբոյի վերադարձը: Իրականութեան մէջ, թէեւ չէր ճամբորդած ան լուսին, այլ՝ ամիսով մը առանձնացած էր զիւզի մը մէջ, բայց պատուիրած էր աստղանաւորդին, որ կարգայ տեղեկագիրը, որ «Լուսինը թէ՛ բնակելի է, թէ՛ բնակելի չէ: Եթէ չէ՛ք հաւատար, անձամբ եկէ՛ք տեսէ՛ք»: Մնացեալը վիճարանութիւն է՝ երիտասարդ եւ երէց սերունդներու միջեւ:

Գործին աւարտէն անմիջապէս ետք, հեղինակը կ'ընէ հետեւեալ յայտարարութիւնը. «ԱԶԳԻՍ ժամանակավրէպ գործ մը գրած ըլլալու ինքնամագրանով»:

Ճշգրիտ կերպով չենք զիտեր, թէ ի՞նչ մը

ասդրութեամբ հեղինակը կ'ընէ այս հաստատումը: Համեստութիւն: Եթէ ժամանակավրէպ ըլլալու գիտակցութիւնը ունեցած է ան, ուրեմն ինչո՞ւ հրատարակած է գործը: Այլ հարց, եթէ հեղինակը կ'ուզէ առաջը առնել կամ կը ջանայ մեղմացնել թատերախաղին նկատմամբ կատարուելիք քննադատութիւնները, եւ կամ՝ անուղղակիօրէն (չենք ըսեր անգիտակցաբար) կ'ուզէ արտառոց բան մը ըսած ըլլալու հեշտանքը ապրիլ:

Մեր կարծիքով՝ այս գիրքը ունի բազմաթիւ խոցելի կողմեր՝ թէ՛ իբրեւ կառոյց, թէ՛ իբրեւ խորք եւ թէ՛ իբրեւ լեզու:

Նախ՝ վերնագիրը: Մեր յեղափոխական շարժանի ամէնէն ժողովրդականացած ու յեղափոխական ոգին էսպէս մարմնաւորող երգերէն մէկուն աղաւաղումն է անիկա: Կուսեանի գործին մէջ՝ «Միայն գէնգով կայ հայոց փրկութիւն» տողին դէմքը փոխարինուած է լուսնով, որ խորհրդանշին է վիպապաշտութեան, երազկոտութեան, զգացապաշտութեան:

Գլխաւոր մէկ-երկու դերակատարներէն զատ ու չհաշուած երիտասարդ պարողները, գինովնեւրու եւ ցուցարարներու խումբերը, ծախողները, բազոսեան պարուհիներն ու քուրմերու խումբը, թատերախաղը կը հաշուէ մօտաւորապէս քառասուն գործող անձինք: Եւ այս բոլորը թխմուած են նուազ քան եօթանասուն փոքրածաւալ էջերու սահմանին մէջ: Այս խճողումը հաւանաբար հեռանք է այն մտադրութեան, որ հեղինակը կ'ուզէ ներկայացնել հայութեան բոլոր խաւերը՝ անշուշտ բոլորն ալ «մէկ ջուրով լուալու» նպատակով:

Այլ հարց, գերակատարներուն ոմանց անուններու ընտրութիւնն ալ եղած է մասնաւոր դիտումով, ինչ որ կը ստեղծէ անախորժ տրամադրութիւն մը ընթերցողի միտքին մէջ: Մե՛ղք, որ դերակատարներու այս ամբողջ փաղանգին մէջ չկայ տիպար մը, որ տպաւորէ մեզ:

Ինչպէս խորագիրը կը թելադրէ արդէն, հայութեան այլազան տազնապններուն ու Հայ Դատին լուծումը կը տեսնուի հայութիւնը լուսին փոխադրելու «իրականութեան» մէջ: Անշուշտ այլարանութիւն է լուսինը այստեղ: Բայց տըրւած քննադատութիւնը (քննադատութիւն) ո՛չ միայն հիմնաւոր չէ, այլեւ դատապարտելի է, մա՛նաւանդ՝ սփիւռքեան այժմու կացութեան մէջ, որ ամէն բանէ աւելի կարիքը ունի գաղափարներու բիւրեղացման:

«Միայն լուսնով կայ հայոց փրկութիւն»ը կը փորձէ քննարկել հայութեան գրեթէ բոլոր հարցերը, իղձերը, հեռանկարները: Անհամ լիցքի կը նմանի անիկա: Հոն տեղ գտած են հայ երիտասարդութիւնը, որ Ապրիլեան Եղեռնի հարիւրամեակին «սիւրփրիզ փարթի»ներ կը կազմակերպէ, կուսակցապետը (Կուկունեան), որ թղթախաղի սեղանին առջեւ կը ծեծէ ազգային հարցերը, ա՛յն կուսակցապետը, որ ըստ հեղինակին՝ իր գաւակն



Իսկ չէ կրցած դաստիարակել Հայ Գասի ուղղութեամբ, ձուձվիլը (նոր հանք մը: որուն զիւարժրած է հայ հոշակաւոր դիտնական Համբարձում Վիկտորեան), մեր դպրոցներուն ապակրօնականութիւնը եւ ոչ-հայեցի դաստիարակութեան ջամբումը, սպառնալիքի ձեւին տակ մարդ համոզելու եզանակը, թեկնածուի առընչութեամբ կատարուած բանակցութիւններն ու սլայքարները, հայագիտական հիմնարկի սնանկութիւնը, եկեղեցականը՝ իր շեղած դերին մէջ, խորհրդային անհատի պաշտամունքը, Մայիս 28, Չարենց, հայ աիկիներու նորաձեւութեանց հետեւելու մոլուցքը, Անթիլիաս-էջմիածին կապերը, հայ ազգային կուսակցութիւնները, Ազգային Սահմանադրութիւնը, մեր բանահիւսութեանն սլատառիկներ (Վահագն, Արաաչէս եւ Ստթենիկ), թոնդրակեցիները, դրական մրցանակները, մա՛նաւանդ ազգային հարցերու նկատմամբ հայութեան զղացապաշտ եւ ոչ-առարկայական մօտեցման եղանակը, սիրոյ պատմութիւն, ընկերային անարդարութիւններ:

Ի՞նչ կը մնայ տակաւին:

Ամբողջացնելու համար ըսենք, թէ հոն իբրեւ դերակատար ներկայ է նաեւ հեղինակը, որ թատերախաղի աւարտին իր վճիռը կ'արձակէ՝ դիւտ մը ըրածի պէս: Ան կ'ըսէ. «Երկընտրանք՝ ամէն ազգ ունի իր պատմութեան քանապարհներուն վրայ: Բայց վա՛յ այն ազգին, որ չի կրնար դուրս գալ երկընտրանքներու քակարդէն: Չուձվիլը՝ խմբուելու եւ փրկուելու առիթ մըն էր: Փրկութեան քանի՜ ձուձվիլներ կորսնցուցիք, դուք հայերդ: Որովհետեւ երբ փրկութեան առիթը ներկայացաւ, ձեզի վէճի մէջ գտաւ միշտ: (...) Հէ՛յ ժողովուրդ, երկրագունտ անգամ փոխելով՝ մարդս չի փոխուիր» (էջ 68):

Հակառակ նիւթերու այս առատութեան՝ հայութեամբ հետաքրքրուած անհաւար ո՛չ մէկ նորութիւն կը դտնէ այնտեղ: Մեր մամուլին մէջ կատարուած են այդ բոլոր քննադատութիւններն ալ:

Անիկա չէ յաջողած նոյնիսկ իբրեւ ախառանաշումներու համադրում: Աւելի՛ն. ափիւռքեան անորոշութիւնը աւելի անորոշ կը ներկայացուի հոն: Ահա թէ ինչու ձանձրոյթով կը կարդացուին բոլոր էջերը:

Բայց ասիկա չէ գրողի մը առաքելութիւնը:

Գրողի մը պարտքն է դեղարուեստականօրէն պայծառացնել անորոշութիւնը:

Չանձրոյթը ձանձրոյթով ներկայացնելը դրագէտի գործ չէ. այլապէս ինչպէ՞ս զանազանել զրագէտն ու հասարակ թղթակիցը:

«Միայն լուսնով կայ հայոց փրկութիւն» թատերախաղին մէջ հարց կ'ըլլայ նաեւ մեր թատերական դրականութիւնը: Գրականութեանց մէջ ամէնէն զժուար մարդը նկատուող այս արուեստը լաւ չէ զարգացած մեր մէջ՝ քաղաքական աննշարաստ պայմաններու պատճառով: Այժմ, մայր

հայրենիքի մէջ թատերադուրսիւնը լաւ հոնի մէջ կը դտնուի: Իսկ Սփիւռքի տարածքին նաւանջի մէջ է անիկա: Այս իմաստով, եթէ հայ թատերադիրը նորութիւն չունի բերելիք տուեալ սրբուեստին մէջ, լաւ է, որ չգրէ:

Անդրանիկ Կոստեանի այս պործը խորձանք մըն է պարզապէս եւ կապ չունի գրականութեան հետ: Սրամտութիւնը, որ յատկանիշներէն մէկն է թատերական արուեստին, ներկայացուած է շատ թեթեւ եւ աժան կերպով՝ գոհճիկ ըլլալու աստիճան: Ահաւասիկ քանի մը օրինակներ. «Սըրբագան մը ա՛յնքան արժէք կը ներկայացնէ, ո՛րքան մարգական ակունքի պիւփէի մեր պատասխանատուն» (էջ 9): «Շնորհակալ ըլլալու եմք Ս. Մեսրոպին, որու այբուբենին շնորհիւ՝ մեր գրքչապայքարները մնացին հայ թերթերու գոց սիւնակներուն մէջ միայն» (էջ 12): «Բանաստեղծները ճաշակաւոր մարդիկ են. ինչո՞ւ միշտ լուսնի մէջ են եւ ո՛չ ուրիշ արբանեակի մը կամ մոլորակի մը մէջ» (էջ 35): «Օրացո՛յց, օրացո՛յց...: Լուսնահայ հայրենակցական Միութեան միակ ու հարագատ օրացոյցը: Հինգ ձուձվիլ... հինգ ձուձվիլ» (էջ 40): «Լուսնային պարահանդէս այս երեկոյ՝ «Մահիկաւան» առաջնակարգ պանդոկին մէջ, կազմակերպութեամբ...» (էջ 40): «(Աստղանաւին) խնկարումը մեքենակա՞ն է, թէ մեքենայութիւն» (էջ 59):

Թատերախաղին մէջ կան նաեւ լեզուական թերիւններ, բառերու անճաշակ գործածութիւն ու դրարարային ժամանակավրէպ դարձուածքներ: Այսպէս, որպէս, չգիտեմ, տասին տաս կայ, եւ ալ դիտեմ այդ, այսօր ստիկայն ծագած է մեզ համար ուրիշ հարց մը, դիրքեր մը, մէկ մը եւ այլ բացատրութիւններու արեւմտահայերէն ճիշդ ձեւերն են իբրեւ, չեմ գիտեր, տասնին տասը կայ, եւ ալ դիտեմ ատիկա, այսօր ստիկայն ծագած է մեզի համար ուրիշ հարց մը, դիրքեր կամ դիրքերը (առանց մըլ), մէկը (եւ ոչ թէ մէկ մը), եւ այլն: Այսօր դրական երկի մը մէջ չենք գործածեր ասկից, ուսկի՞ց, կը սիրես գանի, անունս ուստի՞ դիտես եւ դրարարեան այլ ձեւերը: Իսկ հետեւեալ բառերը կու տան փաստը լեզուի անճաշակ գործածութեան, ինչպէս՝ այսահարած պարողներ, այսպիսի մեծդի ծրագիր մը նոյնքան մեծդի ծախսեր կը պահանջէ, կոչ կ'ընեն ձեր գոցութեան հոգիին, դուք ձեր հերթին կը ժողովուրդի, արգէն իսկ համակամեցա՞ր լուսն բնակելու հեռանկարին հետ, խուլիգանութիւն, խորհրդասօզ, կուշ մը կը խնդամ, եւ այլն:

«Միայն լուսնով կայ հայոց փրկութիւն» թատերախաղը փանթեզի մը իսկ չէ: Անիկա հեղինակին չի տար թատերադիրի որեւէ իրաւունք:

Իսկ ինչ կը վերաբերի անոր բեմադրութեան, ատոր համար պէտք պիտի ըլլայ հոն անարար սպասել ա՛յն օրուան, երբ ամբողջ հայութիւնը փոխադրուի լուսին...

# Շ Ա Ն Ե Կ Ա Ն Գ Ի Ր Ք Մ Ը

## « Գ Ր Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ »

Կազմեց՝ ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐԵԱՆ

Ութ հարիւր էջերէ բաղկացած դուրձ մըն է «Գրական տեղեկատու»ն, Հայաստանի գրողներու միութեան «սոհամատաներ», որ Երևանի մէջ լոյս տեսաւ 1975ին և Գէյրութ հասար. միայն այս պարնանամուտին:

Իրբև նախարան գրուած էջէն կ'իմանանք, որ անցնող քառասուն տարիներու ընթացքին Հայաստանի գրողներու միութիւնը ունեցած է 424 զրչի մարդ՝ բանաստեղծներ, գրագէտներ, թատերադիրներ, թարգմանիչներ ու քննադատներ, որոնք բոլորն ալ կենսադրուած են բառարանային բժականգրութեամբ կազմուած այս մեծապէս շահեկան դուրձին մէջ:

424 զրոզ: Քառասուն տարիներու ընթացքին: Իսկ այսօր, «Առ 1ը Յուլիսի 1975ի՝ Հայաստանի սովետական գրողների միութիւնը ունի 286 անդամ»:

Անշուշտ, այս թիւը քիչ մը շատ պիտի թուի ոմանց: Այդպէս նկատուած է նաև ասկէ շատ առաջ:

Ողբացեալ Երզիծարանը, լևս կամսար, տեղ մը արտայայտուած է արդէն այդ մասին, երբ շատ աւելի քիչ էին գրիչ բոնողները:

«Եւ, վերջապէս, գիտե՞ք ինչ:

«150 գրողը մեզ նման փոքր ազգի համար շա՛տ-շատ է: Մենք ոչ այդքան վիշտ ունենք երգելու, ոչ էլ այդ չափով ուրախութիւն: Նախասովետական շրջանում գրողները թէև մատի վրայ էին համբոււմ, բայց «սէյրակ» տնկուած ծառերի նման մեծ շուաք էին տաքածում արեւակէզ հայ ընթերցողի վրայ:

«Ներկայիս բազմաթիւ գրողներ շատ խիտ են տնկուած եւ, խլելով իրարից հողի սնունդը, անում են անսւժ, բարակ, ազգուն, եւ ոչ մի ընթերցող նրանց շուաքին չի վրստահի, եթէ հաշուի չառնենք բացառութիւնները»:

Անուանի Երզիծարանին ղիտողութիւնը անշուշտ ճիշդ է, բայց Հայկ Խաչատրեանի գործը ենթակայ չէ նման դատաստաններու: Խաչատրեան ս'չ թէ արժեւորումներ կատարելու համար ճամբայ ելած է, այլ՝ իրականութիւնը պատկերացնելու համար, և իրբև այդ՝ իր կողմած «Գրական տեղեկատու»ն խիստ զնահատելի դուրձ է, անհրաժեշտ՝ հայ դրակունութեամբ շահագրգիռ բոլոր անձերուն համար:

Մեր կարծիքով, մէկ կողմով միայն թերի է այս դուրձը, հետեւեալ սկզբունքին մէջ:

«Այս գիրքը ոչ թէ ընդհանրապէս հայ սովետական գրողների, այլ մասնաւորապէս Հայաստանի սովետական գրողների միութեան տեղեկատու է: Առաջնորդուել ենք մի հաստատուն սկզբունքով՝ տեղեկատուի մէջ ընդգրկել բոլոր այն գրողներին, գրականագէտներին ու քարգմանիչներին, որոնք Հայաստանի սովետական գրողների միութեան անդամ են»:


Այս սահմաններուն մէջ, ըսինք արդէն, «Գրական տեղեկատու»ն խղճմտանքով կազմուած խիստ շահեկան հատոր է, բայց և այնպէս՝ ընթերցողը ամբողջապէս պիտի չբաւարարուի և պիտի փնտռէ «ընդհանրապէս հայ սովետական գրողների» տեղեկատուն: Արդարեւ, ակնբախ է այն հանդամանքը, որ վաստակաւոր ու անուանի մտաւորականներ, ինչպէս նաև վերջին տարիներուն ուշագրութիւն գրուած նորեր ներս չեն առնուած «Գրական տեղեկատու»էն՝ այն պատճառով, որ դուրս մնացած են գրողներու միութենէն: Եւ յետոյ՝ գրողները իրե՞նց կամքով մաս կը կազմեն կամ չեն ուզեր մաս կազմել արդեօք միութեան, թէ այս վերջինին վարչութիւնը իրեն յատուկ պայմաններուն թելադրանքով կ'ուղղէ անդամագրութեան հրաւերը: Գրողներու միութեան կանոնադիրը չունինք մենք ու դժուար է կոտհել ս'չ ներս գտնուողներուն և ոչ ալ դուրս մնացողներուն պատճառները: Այնուամենայնիւ, փաստաբէլի պիտի ըլլար կազմել նոյն սճով տեղեկատու մը նաև դուրս մնացողներուն համար, որոնք թիւով քիչ չեն և որակական առումով դրական ամբողջ ճակատի մը կրնան անունդ հայթայթել:

Փաղափար մը տալու համար «Գրական տեղեկատու»էն դուրս մնացածներուն մասին՝ հետագայ էջերուն կը ներկայացնենք մեղի ծանօթ քանի մը հետաքրքրական ղէմքեր:

## Ա Ն Ե Ջ Ր Ա Կ Ա Ն

## Ս Ի Ր Ո Յ

## Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ը



Եթէ տոստոյեւսկու յայտնի խօսքը («Մենք բոլորս դուրս ենք եկել գոգուեան «Շինելից»), ձեւափոխուած գործածենք, կարող ենք ասել, որ «Անուրջներ»-ից յետոյ արեւելահայոց նոր բանաստեղծութիւնը ծնուել է տէրեանական մթնշաղից: «Անուրջներ»-ի եւ Տէրեանի միւս շարքերի («Ոսկի հեփաթ», «Երկիր Նայիրի», եւայլն) ազգեցութեամբ ստեղծուեց գեղարուեստական խօսքի նոր մթնոլորտ: Նոյնիսկ աւելի վաղ հանդէս եկած որոշ բանաստեղծներ սկսեցին դրել նոր ոճով: Յովհ. Մասեհեանը 1910ական թուականներից սկսեց վերաթարգմանել նախկինում կատարած շէյքըսփիրեան իր թարգմանութիւնները: Նոր ասպարէզ մտած տէրեանական հարիւրաւոր բանաստեղծների մէջ կային իսկական տաղանդներ. նրանցից ամենաականաւորը եղաւ Ե. Չարենցը, որի միջոցով տէրեանական խօսքի աւանգոյթը հարստացած՝ նոր շաւիղներ գոյացրեց:

Սակայն չի կարող լինել լեզուաոճի այսպիսի հզօր ներգործութիւն առանց մեծ ու խոր բովանդակութեան: Տէրեանական արուեստի ամենակարեւոր արժանիքը նրա այդպիսի բովանդակութիւնն է:

Տէրեանը հայ դրականութեան բերեց նոր յոյզեր ու տրամադրութիւններ: Նրա աշնանային ու իրիկնային մեղեդիները, տխրութեան ու անըջանքի երգերը, գարնանային նուագները զգացմունքի նրրութեամբ եւ աներեւակայելի ուժով թափանցել ու թափանցում են ընթերցողի սրտի խորքերը, վարակում իրենց տրամագրութիւններով: Տէրեանը այն խոշորագոյն քնարերգուներից է, որոնք ծաւալով ոչ մեծ բանաստեղծութիւնների մէջ բիւրեղացրել, խտացրել են մեծ եւ ուժգին յոյզեր, խոր փիլիսոփայութիւն:

Այդ փիլիսոփայութիւնն էլ իւրովի է ընկալւում: Այն նման է երաժշտութեամբ արտայայտուող խոհին, նախ մեզ ամբողջովին համակում է տէրեանական յոյզը, տրամագրութիւնը, ասլա զգում ենք փիլիսոփայական խոհի անհունը:

Տէրեանական իւրովի աշխարհզգացողութիւնը առկայ է նրա գրեթէ բոլոր նուագներում, բայց կան նաեւ առաւել փիլիսոփայական բնույթի բանաստեղծութիւններ, ինչպէս «Առաւօտ»ը, «Կարուսել»ը, «Չգիտեմ այս տը-

խուր աշխարհում որն է լաւ, որը վատ»ը, «Հատուած»ը, եւայլն, որոնք դարազլուխ են ստեղծել հայոց խոհա-զղացմունքային քնարերգութեան մէջ: Տէրեանական աշխարհագրոգութեան իւրայատկութիւնն այսօր հասկանալի է շատ շատերին, բայց, դժուար, զուցէ անհնար է այն ճիշդ վերապատմել, մեկնաբանել:

Տէրեանի բանաստեղծութիւններում, նրա նրբակերտ մթնշաղների, աշնան մշուշների, շշուկների ու շրշիւնների մէջ կայ մի որոնում, անրջանք: Բանաստեղծը շարունակ երազում է ինչ-որ «հեռուոր երկիր», ինչ-որ աներեւակայելիօրէն դիւթական, անթերի մի բան: Դա կատարեալի ուժղին ճշգտումն է, որ ապրում է Տէրեանի ամբողջ բանաստեղծական արուեստի մէջ:

Վահան Տէրեանի ստեղծագործութեան մէջ ապրում է բարոյական մի այնպիսի կատարելատիպ, որ գրականութեան մէջ արտայայտում են ամենամեծ ստեղծագործողները՝ իրենց հանճարեղ ներշնչանքի պահին: Տէրեանական արուեստում հայոց լեզուի ամենազեղեցիկ ձեւերի մէջ բիւրեղացած է բարոյական այդ հազուադիւտ մաքրութիւնը:

Հայրենասիրութիւնը: Դարձեալ ոչ սովորական, դարձեալ զուտ տէրեանական: Դա զարմանալիօրէն ջերմ, ջերմեռանդ զգացմունքների յորձանք է «վեհանիստ սարերում» կրակ վառած հովիւների ու «տխրութեան սովոր թուխ դէմքերով» հայ գեղջուկների, «իլիկ շարժող», «բարի մայրերի», «տխուրաչեայ ու համեստ նայիրուհիների» նկատմամբ, նաեւ պաշտամունք է «որպէս աղօթք» հնչող «արքայական լեզուի» հանդէպ:

Տէրեանը աննախադէտ քնքրութեամբ է խօսում հայրենիքի մասին, նա նոյնիսկ դրա համար օգտագործեց իր զգացմունքի նրբութիւնն արտայայտող այնպիսի անուանումներ, ինչպէս՝ «Նայիրի, նայիրեան, նայիրուհի, որոնք յետոյ որդեգրեցին ամբողջ հայ գրականութեան կողմից: Եւ բանաստեղծի նուիրումը այդ նայիրեանին բանաձեւեց այսպէս.

Չկայ քեզից գերիչ երազ,  
Քո անունից անուշ անուն:

Մրա հետ միասին, Տէրեանի ստեղծագործութեան մէջ սիրոյ եւ բարութեան ջերմ զգացմունքներ են արտայայտուած «հեռու-մօտիկ» ազգերի նկատմամբ՝ ժողովուրդների եղբայրութեան երազանքը ապրում է նրա հայրենասիրութեան մէջ:

Բանաստեղծը իր ժողովրդի պատմութեան մէջ տեսնում էր մեծ խորհուրդ ու առաքելութիւն.

Հրկէզ քո հոգին որպէս առատ խունկ  
Աշխարհի համար պարգեցիր անպարտ,  
Հեզ բնդունեցիր երդում ու երկունք,  
Դու արքայաբար վեհ ու անհպարտ...

Նա իր ժողովրդի անցած ուղին բնութագրում է նաեւ այսպէս. «Չարութեան դէմ վեհսիրտ միշտ, վատի դէմ ազնիւ», կամ՝ «Ո՞ր երկրի սրբտում թախիծ կայ այնքան, եւ այնքան ներում ո՞ր երկրի սրտում»:

Նայիրի ներքին, հոգեկան մեծ ուժի վրայ վստահելով էլ Տէրեանը մեր փորձութեան ամենաօրհասական պահերին խոր համոզումով հաւատում էր, որ հայոց «խօսքը մեր կը մնայ յաւիտ», եւ որ՝

Արեւի պէս երկիր իմ, կը վառուես վառման:  
Որպէս փիւնիկ կրակից կ'ելնես, կ'ելնես նոր՝  
Գեղեցկութեամբ ու փառքով վառ ու լուսաւոր:





ՎԱԶԳԻՆ ԳԵՈՐԳԵԱՆ

Մ Ա Տ Ե Ա Ն

ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ

Գ. Ն Ա Ր Ե Կ Ա Ց Ի

Արդ, Տէ՛ր, նայելով անարգիս՝ յիշի՛ր քո մեծութիւնը  
 Եւ երբ քեզանից բարիքներ խնդրեմ ինձ ատողներին,  
 Նրանց համար էլ, որ քոնն են նոյնպէս,  
 Ըստ մեծութեանդ, անհատելիներ հրաշագործի՛ր:  
 Ինձ խայթողներին մի՛ բնաջնջիր, այլ ուղղի՛ր միայն,  
 Հանելով խոտան բարձր երկրային՝  
 Արմատաւորի՛ր առաքինութիւն իմ ու նրանց մէջ:  
 Մանաւանդ չէ՞ որ Դու լոյս ես ու յոյս,  
 Իսկ ես խաւար եմ ու յիմարամիտ.  
 Դու՛ փառաբանուած բարի իսկութիւն,  
 Ես՛ ամէն ինչով չար ու ապիկար.  
 Դու անօրէնն ես երկնի ու երկրի.  
 Ես իշխանութիւն իսկ չունեմ շնչիս ու հոգուս վրայ,  
 Դու՛ Բարձրեալ, առանց հոգս ու վշտերի.  
 Ես՛ աագնապահար ու տաժանաւոր.  
 Դու՛ վեր երկրային բոլոր կրքերից.  
 Ես անարգ կաւ եմ ու գարշելի հող.  
 Դու՛ յարամնայ, ըստ մարգարէի,  
 Անհասանելի բարձունքիդ վրայ,  
 Իսկ ես, ըստ նրա, կորստական եմ յաւիտենապէս,  
 Քո մէջ նենգութիւն ու խաւար չկայ,  
 Իսկ ես, որ աւանդն իմ չպահեցի, ե՛ւ այս եմ, ե՛ւ այն:  
 Տէ՛ր ողորմութեան եւ պարգեւատու ամէն փաղցրութեան,  
 Հօրիդ արեան գնով փրկուածիս  
 Անտես անելով՝ ի գուր մի՛ կորցրու.  
 Կանգնեցրո՛ւ ինձ, որ բազմավտանգ  
 Այս հիւանդութեամբ նարակուած՝ մահուան ափին եմ հասել:

Բան. 27. Բ


Թարգմ. ՎԱԶԳԻՆ ԳԵՈՐԳԵԱՆ



## ՅՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐԵԱՆ

### Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

Սա իմ երկիրն է — չափսերով այնպիսին,  
 որ կարող եմ վերցնել հետս,  
 երբ մի հեռու տեղ գնամ:  
 Փոփրիկ՝ ինչպէս ծերացած մայր,  
 փոփրիկ՝ ինչպէս նորածին գաւակ:  
 Իսկ ֆարտէսի վրայ ընդամէնը  
 մի համբուրաչափ տեղ:  
 Սա իմ երկիրն է — չափսերով այնպիսին,  
 որ ազատօրէն տեղաւորել եմ սրտիս մէջ,  
 որ չկորցնեմ յանկարծ:



### Ս Ո Ն Ե Տ

Փողոցներում, որտեղ հիմա դու չկաս՝ գարուն է  
 եւ մարդիկ ֆայլում են՝ ոչ մի փոփոխութիւն չնկատելով,  
 ֆաղափում, որտեղ դու չկաս,  
 չգիտես, թէ ինչու, տօն է այս սովորական օրով,  
 եւ խմբերով աղջիկներ են անցնում գոյնզգոյն շորեր հագած՝  
 ոչ մի փոփոխութիւն չնկատելով...

Իսկ նուագախումբը դուրս է ցայտում ամենամասշտաբի անկիւններից  
 իր յետեւից տանելով  
 ցնծութիւնից խելակորոյս երեխաների «հրոսակախումբը»՝  
 ամբողջացնելով գարնան պատկերը կանաչաւուն:

Ինչ հեշտ է սիրել այն ամէնը, ինչ հեռու է,  
 եւ ինչ բաւականութիւն՝ պատկերացնել այն, ինչ չես տեսնում,  
 Օ, ինչքան ես վարպետացել դու այդ ասպարէզում:

Փիլիսոփայելու համար դու ընտրեցիր երեկոն  
 եւ սկսեցիր որոնել այնտեղ, ուր չկաս ինքդ,  
 եւ հայեացքդ թափառեց փողոցներով,  
 մարդկանց մէջ,  
 սրճարաններում,  
 եւ յոգնութիւնից արցունքոտուեց հայեացքդ՝  
 ոչ մի փոփոխութիւն չնկատելով:

Իսկ նուագախումբն արդէն երկինք է բարձրանում՝  
 իր յետեւից տանելով  
 ցնծութիւնից ոչինչ չնկատող երեխաների «հրոսակախումբը».  
 Ինչ հեշտ է մտաջուրն ան, ով հեռու է  
 եւ ինչ ծանր է ընդունել այս տխուր միտքը,  
 երբ ինքդ ես հեռուում:

Ա Լ Բ Ե Ր Տ Կ Ո Ս Տ Ա Ն Ե Ա Ն

ՈՃԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

Ուզում եմ սկսել յիշատակութեան արժանի մի փաստից: Վերջերս միութենական գրական շաբաթաթերթում ուշադրութիւնս գրաւեց մի յօդուած, որ աննշան էր վերնադրից աստիճանցած գրդիւի համեմատ:

Այդ վերնադիրը օտարիական մի նոր գործիքի ասպարոթիւնն ունեցաւ. արդէն ծանօթ, հարազատ դարձած իրերին ու մարդկանց (նաեւ ինքի քեզ) նայելու մի նոր, մինչ այդ անծանօթ կամ չմտածուած չափ եւ յայանաբերում:

Անահնկալի գօրութիւնն է, եւ խուսափելով «դիտական» ճամարտակութիւնից, ասպարիւնում եւ տղաւորութիւնից ծնուած մտածումներին:

Ազգային սողմի (Չորենցի արտայայտութիւնն է) յարատեւ ձեւափոխումների ուղին ինքնսւրոյն շղթայ է, նաեւ՝ հազարամեակների մշակոյթի տղզային ներաշխարհ: Մրա համեմատութեամբ, քաղաքակրթութիւնը կոյր աղիքի է նման, բայց երբեմն հիմնական ուղիով փոխարինելու ձգտում ունի, իսկ ճղնաժամային սլահերին նաեւ մահացու է նրա ակտիւութիւնը:

Մեր պատմական փորձը վկայում է, որ չյայտարարուած պատերազմը սկիզբ ու վերջ չունի: Ընթացքն է միայն նկատելի: Ազգային յիշողութիւնը չի սլահողանել նրա նախասկիզբը: Բայց սկիզբը մեզ յայտնի է: Դա բարեկոնեան քաղաքակրթութեան ժամանակաշրջանն է: Ու Հայկ նահապետը երեքթեւեան նետով լուծեց հանդոյցը: Նրա վերջը եւս մեզ յայտնի չէ: Բայց մեզ յայտնի ընթացքը չափազանց ուսանելի է: Երբեմն քաղաքակրթութեան գործօնը համատարած է դառնում: Հեղինակը ձեռք օրինակ: Յաճախ մշակութային գործօնը ներմղում է ազգային ենթագիտակցութիւն: Ու եզակի դէպքերում է ժայթքում Մեսրոպի տիտոնեան կեցուածքով: Բայց Սուրբի հրաշքը նաեւ հանճարեղ դիւանագիտութիւն էր, որպիսի օրինակ (հետեւանքի իմաստով) մեր ազգային պատմութիւնն այլեւս չարձանադրեց:

Օրինակները շատ են եւ ասարեր:

Խորենացին յունական եւ պարսկական քաղաքակրթութիւնների բախումով հաստատեց ազգային մշակութային սկզբունքը:

Կորիւնը քրիստոնէական վեղարով քողարկուած ազգային ենթագիտակցութեան կըրոզն է:

Եղիշէն նոյնի առաւել բացայայտ եւ թանձրացեալ կերպն է:

Մինչեւ այսօր վիճում են՝ Դաւիթը հա՞յ էր, թէ՛ յոյն, հայերէ՞ն է գրել, թէ՛ յունարէն: Գերճշգրիտ բնագղը թելադրում է միակ պատասխանը. հայ էր, յունարէն էր գրում. ազգային տրադիցիան ճորտացնելով հայացրեց, ու հայացնելով աստուածացրեց նրա գործը, անողոքաբար մոռացութեան տալով կենսագրութեան անպիտանի մանրամասները:


Նարեկացին արաբական քաղաքակրթութեան անկման մունետիկն էր:

Եւ այսպէս երեքհազարամեայ ազգային յիշողութեան տարեգրութիւն. քաղաքակրթութիւններ, եւ ազգային քաղաքակրթութիւն հիմնելու փորձ: Հազար վեղահարիւրամեայ մշակութային կեանք, քաղաքակրթութիւններ: Հինդհարիւրամեայ լեթարգիական քուն եւ բարբարոսութիւն: Երկուհարիւրամեայ արթնութիւն. նոր տէրութիւն, նոր աշխարհ, դերերի ճշդում. ազգային ենթագիտակցութիւն, նոր քաղաքակրթութիւններ (Արեւելք, Արեւմուտք, ազգային հոգեբանութիւն եւ բնաւորութիւն):

Հ Ե Ն Ր Ի Կ Է Դ Ո Յ Ե Ա Ն

Դ Ի Ա Լ Ո Կ Ք Ա Մ Ո Ւ Հ Ե Տ

Իշխել կեանքի վրայ — նշանակում է ապրել,  
 ապրել՝ նշանակում է կեանքից հեռանալ,  
 սովորեցրու արուեստը նրանց միացման,  
 սովորեցրու ցանկանալ, բայց նաեւ չուզել,  
 ապրել, նաեւ չապրել, սովորեցրու չֆնել,  
 բայց երազներ տեսնել,  
 սովորեցրու ծնել նոր աւազաններում  
 եւ պատկերն ունենալ հին աւազանների:



Սովորեցրու մեզ չունենալ տխրութիւն,  
 սովորեցրու օրն ապրել մինչեւ վերջ,  
 ժամը դարձրու մի անշարժ տեսիլք,  
 առանց անցեալի եւ ապագայի  
 որովհետեւ կեանքը սեղմուած է երկու փակագծերով,  
 որոնցից այն կողմ ծաղկում է միայն  
 մեր բացակայութիւնն ինչպէս հնդկաժադիկ:

Ով մեռնում է՝ ցոյց է տալիս ներկայութիւնն իր,  
 իր բացակայութիւնն է ցոյց տալիս՝ ով ապրում է,  
 խօսողը վերածնում է իր խօսքի մէջ,  
 ով լուծ է, նա չի վերածնում՝ քանի որ չի մեռել նա,  
 խօսել՝ նշանակում է վերագտնել իրեն,  
 լսել խօսքի մէջ՝ նշանակում է դատարկութիւնը չափել  
 ոչ թէ բառի, այլ միայն հոգու սահմաններով,  
 ցոյց տուր այնպիսի վայր, ուր չկան նման բաներ,  
 ոչ խօսք, ոչ լուրջութիւն, ոչ ժամ, ոչ քամի...

Մեզ վայրկեանները տանում են իրենց մէջ  
 եւ գլխատում այնտեղ, մեր աչքերը լի են  
 տիղմով ու մամուռով, լուսնի սառը դէմքը  
 մեզ վրայ է յառած բոլոր անկիւններից,  
 ծառերի վրայ մեր մարմինն է ծաղկում,  
 օդը տանում է մեզ մի վայրից միւսը,  
 ծանօթ դէմքը արդէն անծանօթ է դառնում  
 ժամի հարուածից — սովորեցրու մեզ  
 շրջուել դէպի ներս, ապրել ինչպէս քամի,  
 սովորեցրու մեզ սիրել այն, ինչ որ  
 դժուար է սիրել...

Սովորեցրու հետեւել թռչուններին,  
 որոնց թւերն են միակ տարածութիւնն իրենց  
 եւ ցամաքներին, եւ ջրերի վրայ...

## Մ Ա Ր Գ Օ Ղ Ո Ի Կ Ա Ս Ե Ա Ն



Շատ լաւ յիշում եմ. այս յօդուածը գրելուց առաջ որոշել էի ակնարկ գրել մի շինարարի մասին: Իր գործն իմացող մի մարդու մասին. այն բազում մարդկանցից, որոնց շնորհիւ 50 տարում կառուցուած է այն լաւն ու մնայունը, այն արժէքասուրը, ինչը մեր ժողովրդի պարծանքն է, ինչը զարդարում է մեր քաղաքներն ու գիւղերը եւ զրսից եկած հիւրերին անակնկալի բերում: Ինչպիսի մեծ բաւականութիւն՝ գրել այդպիսի մարդկանց մասին: Սակայն, տիտոս, իմ բախտը չբերեց: Շինարարների 21րդ շէնքի բնակիչների ահազանդով դնացի այնակը եւ ամէն ինչ հիմն ի վեր շրջուեց:

Շինարարութեան ասպարէզում ձեռք բերած բազմադարեան մեր աւանդոյթները (կառուցելու արուեստը) ազդային հարստութիւնների շարքը չէ՞ն դասում, արդեօք, ինչպէս մեծ արուեստագէտների ստեղծողորժութիւնները, ճարտարապետական նշանաւոր յուշարձանները, մեծ դործաբանները, հողը, լճերն ու գետերը, անտառներն ու այգիները...

Այս մասհոգութեամբ գիմեցի շինարար Ժո-

սես Աւետիսեանին: Նախնական ծանօթութեան համար ասեմ, որ նա կառուցել է Կիրովի անւան ջիմկոմբինատի հանդստեան տան ողջ կոմպլեքսը Ազգերանում, Արզական-Գիւլումուշ-Երեւան ջրատարը, մասնակցել է Էրեբունի թանգարանի, Եղեռնի յուշարձանի, «Հրազդան» ստադիոնի, մաթեմատիկական մեքենաների դիտահետազոտական ինստիտուտի եւ մի շարք կառույցների շինարարական աշխատանքներին:

«Մենք խոնարհուում ենք նրանց մեծութեան առաջ: Նրանց՝ այսինքն մեր նախնիների, անցեալի մեր շինարարների: — Այսպէս սկսեց անւանի շինարարը: — Ինչպիսի պաշտամունք արուեստի հանդէպ: Նրանք սիրելի են իրենց գործը եւ իրենց գործի մեծ գիտակ են եղել:

Մենք լաւ ենք օգտագործել մեր ունեցած շինանիւթը՝ քարը: Չունենալով փայտ, մեր տաճարների եւ վանքերի ծածկերը նոյնպէս քարից ենք արել: Քար եւ կիր. թէ ինչպէս ենք կարողացել քարը եւ կիրը շողկապել իրար, դարերից եկող բազում վկայութիւններ ունենք:

Հսիփոսիմէն, Գեղարդը, Էջմիածինը, Անին,

Պ Ա Տ Ո Ւ Ի

Ե Ի

Ա Ն Պ Ա Տ Ո Ւ Ո Ւ Թ Ե Ա Ն

Ք Ա Ր Է

Վ Կ Ա Ն Ե Ր Ը



Հաղարծինը, կեչառիսը... Այդ կառույցներին մենք նայել ենք փոքրուց եւ դրանք մեր մէջ նրբութիւն եւ ճաշակ են զարգացրել:

Դրանք մեզ համար զսլրոց են եղել:

Դրանք մեզ համար շինարարութեան պաշտօնի մասին գրուած դասադրքեր են եղել:

Եւ ապա, 30-40ական թուականներէ մեր ճարտարապետները՝ հայկական շինարարութեան բազմադարեան փորձը եւ աւանդոյթները, ժամանակակից ծաւալներով եւ ժամանակակից պայմաններին համարատասխան, արդէն մեր աչքի առաջ բարձրացրին այնպիսի կոթողներ, ինչպիսիք էին Երեւանի Լենինի հրապարակը, օպերային թատրոնը: Հանրային գրադարանը, Արարատ տրեստի շէնքը, Մատենադարանը եւ շատ այլ կառույցներ, դարերին թողնելով անուններ՝ Ալեքսանդր թամանեան, Նիկոլայ Բունիաթեան, Յովհաննէս Մարգարեան, Ռաֆայէլ Իսրայէլեան, Մարկ Գրիգորեան...

...Այսօր մենք լաւ քարոզործ վարպետներ դեռեւս ունենք: Ամենաբարձր մակարդակի վարպետներ: Աւազ, նրանց թիւը գնալով պակասում է: Հին սերունդը կը գնայ եւ իր հետ կը անցնի շինարարութեան մեր հին աւանդոյթները:

Փաստօրէն շինարարութեան մի ամբողջ դըպրոց է անհետանում: Դուք հասկանո՞ւմ էք, թէ ինչ է նշանակում այդ: Այն շնորհքն ասեմ, հրմտութիւնն ասեմ, ունակութիւնն ասեմ, քարի հետ վարուելու տաղանդն ասեմ, ի՞նչն ասեմ, մենք անգործութեան ենք մատնում: Իսկ այն, ինչ անգործութեան ու անշարժութեան է մատնուած, պէտք է մահանայ: Ժամանակ կ'անցնի, եւ մենք աւելի շօշափելիօրէն կը գղանք այդ երեւոյթի՝ քայտասական ազդեցութիւնը: Եւ այն ժամանակ մենք ինչպիսի դուժար էլ ծախսենք, չենք կարողանայ վերականգնել կորուստը:

Անցեալ տարուայ դէպքը դեռեւս թարմ է: Մեր մարմարագործներից մի քանիսը հրաւիրուեցին վերակառուցելու Ղրիմի հնադոյն դղեակներից մէկը: Ասում են, որ հիմա մարդիկ շօշափում են պատը, պարզելու համար՝ ներկուած է, թէ քարով շարուած:

Քարը զգուշութիւն է սիրում, ճշգրտութիւն, բարեխղճութիւն: Քարագործութիւնը մի ամբողջ դըպրոց է եւ հնարաւոր չէ միանգամից ստեղծել: Մարդու ձեռքը քարին աստիճանաբար է սովորում եւ, հաւանաբար, ինչ-որ բան էլ փոխանցում է արեան միջոցով:

Մինչեւ ՅՈսկան թուականները Հայաստանում կար քարոզործ վարպետների մի ամբողջ բանակ: Իսկ այսօր՝ նրանք դուրս մղուեցին շինարարութեան ինդուստրիալիզացիայի հետ: Նրանք դուրս մղուեցին նաեւ մի այլ պատճառներով. թանկ աշխատանքն ինչպէս հարկն է, չէր վճարուում: Մընացած հատ ու կենսա վարպետներն այսօր դերեզմանաքարեր են տաչում: Եւ ինչ որակով. ճիշդ այնպիսի, ինչպիսի նրբութեամբ ու իմացութեամբ, որ քանդակուել-ուաչուել-յվուել են անցեալի մեր յուշարձանների սիւներն ու խոյակները, որմերն ու աստիճանները:

Եւ ի՞նչ կարելի էր անել, որ նրանք դուրս չմղուէին: Օրինակ, վերցնենք Թումանեանի տուն թանգարանի կողքին մեծ շէնքը. ինչո՞ւ դրա մետաղական պատշգամբների տեղը քար չդնէինք, ինչո՞ւ երկաթալեռնէ սիւները քարով չերեսպատէինք: Կամ «Ռոսիա» կինոթատրոնի դիմացի բնակելի մեծ շէնքը: Ամէն օտար միջոցի դիմել ենք, բացի մեր քարից:

Ինձ համար՝ քարի դեղեցկութիւնը մի ուրիշ դեղեցկութիւն է, տասն անգամ տաւալ օրգանական սպակուց, խտացրած թեփի սալիկներից ու երկաթէ կոնստրուկցիաներից: Սակայն քարի կողքին ժամանակի թելադրանքով, եթէ մենք նոր շինանիւթեր ենք օգտագործում, ապա պէտք է այնպէս կառուցենք, որ ներդաշնակ լինի: Ինչպէս որ պէտք է ձգտենք քարի շէնքերի կողքին ժամանակակից կառույցներ դնելիս մատովի տեսնել՝ ներդաշնակ կը լինի՞, թէ օտարածին մի մարմին, քարի հին շէնքերից վանուող մի մարմին է, որն իր տեղում չէ, եւ դրանով իսկ աչք ծակող է, դրանով իսկ արժէքազրկում է մէկ-երկու տասնամեակ առաջ հայ ճարտարապետութեան աւանդոյթներով կառուցուած քարէ հոյակապ շէնքերը:

Մ. Ղ.

Դ Ա Ի Ի Թ Յ Ո Վ Հ Ա Ն Ն Է Ս



ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿԱՌՈՅՑ

(Լիբիկական ռեպորտաժ)

Երկիր իմ, երկիր — դարերի նամբորդ,  
երկիր — հանճարեղ վարպետաց օրրան,  
զարթնել է այսօր ոգիդ ստեղծագործ,  
բացուել է հոգուդ մի նոր առաւօտ, —  
եւ կառուցում ես անխոնջ ու անկանգ:

Զարթնել է ահա ոգիդ ստեղծագործ,  
եւ նոր երգեր է երգում ցեղըդ հին,  
եւ վարպետներդ, խնդուն ու անխոնջ,  
տաշում են ահա երգերը քո նոր, —  
ինչպէս վաղեմի, անցեալ օրերին:

Ես քո ոգին եմ բաց անում քարէ  
արեւի ներքոյ անոգոք ու հին, —  
քար են տաշում, տես — գլուխները կախ,  
այսօրուայ քո նոր երգերի համար,  
տաշում են, տաշում — կրկին ու կրկին:

Վարպետներ — քարհատ, քարտաշ, ու քարգործ,  
որմնադիր, ծեփագործ ու հիմը դնող, —  
ամէնն այդ եղել էր վաղուց, ու դեռ կայ,  
բայց — հորատող էլ ունես դու հիմա,  
լեռնային վարպետ, ու բետոնագործ:

Զկարողացաւ ոսոխդ դժնի  
մեռցնել քո հուր կամքն ստեղծագործ,  
եւ որպէս փիւնիկ թռչուն լեզենդար,  
որպէս մի հսկայ առասպելական —  
բայում ես ահա ողջ երկրագնտով:

Որպէս մի փիւնիկ թռչուն լեզենդար,  
երգում ես ահա նոր երգերը քո,  
եւ կառուցում ես խօլ ու առնական,  
եւ կառուցում ես հզօր մի թափով,  
եւ նոր են անգամ կառոյցները քո:

Վանդ չէ արդէն, կամ պալատդ պերճ  
դառնում երգերիդ համար պերճ պատեան,  
այլ ջրանցքներդ կենսատատ ու բիլ,  
գործարաններդ — հեւեով շառաչուն,  
եւ նոր օրերիդ ընթացքը անկանգ:

Մի Արփա-Սեւան, կամ մի Տաթեւգէս,  
մի Շամբ, կամ մի նոր ատումակայան —  
ահա թէ ինչ ես կառուցում հիմա,  
մեր այս նոր կեանքի հնոցի մէջ բոքր  
ահա ինչպէս ես կերտում քո ներկան:

Եւ նոր են բոլոր կառոյցները քո,  
նոր ենք նաեւ մենք — վեհ ու առնական,  
քանզի ապրելու կամքը մեր հրկէզ  
թրծեցինք բոլոր ցաւերի մէջ քո, —  
մինչեւ որ օրը ծնուեց այս հուրկամ:

Թրծեցինք բոլոր ցաւերի մէջ քո,  
եւ գնում ես դու հիմա յաղթական,  
եւ անարգել է ընթացքը քո վեհ,  
երկիր եմ, երկիր — դարերի նամբորդ,  
երկիր — հանճարեղ վարպետաց օրրան:

ԱՐՄԷՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Ք Ո Ջ Ո Ւ Ն Ն Ե Ր

Նրանց կարմիր թելերի տակ  
կարմիր բոցը մայրամուտի  
օրօրում է գրգիռը տաֆ  
անակնկալ մի կարօտի:

Աշնան շուրթին ու երաշտի՝  
անակնկալ գարնան կարօտ,  
եւ անձրեւներ հրաժեշտի,  
եւ ճանապարհ մի ֆարֆարոտ:

Հունձ է անում ֆամին էլի,  
եւ հնձուորի աչքերի մէջ  
անապատն է տերեւների  
եւ միւղերի թափօրը խեղճ:

Երկու տերեւ, երկու թռչուն  
մահուան տագնապը յիշելով՝  
աշնան հերկից դուրս են թռչում  
գարնան մերմակ վերյուշներով:

Եւ թելերին նրանց՝ աղօթք,  
եւ կաթիլներ գարնան սիւֆի, —  
այդպէս լոյսն է բացում շաղոտ՝  
նման թափուող արտասուֆի:

\*\*

Օրուայ այտերին  
դեռ չլուացուած բառեր է փնտռում  
լուսաբացի չուն,  
եւ լուանալու համար երեւի  
վարդաջրեր է կտուցով տանում  
եւ արեգակ է կտցում երկնֆում  
մի փոֆրիկ թռչուն:  
մի փոֆրիկ թռչուն:  
Մի կաթ արցունֆ է մշմարտութիւնը,  
որ վախենում է պոկուել երեւի.  
ակնախոռոչից կախուած դողում է.  
այդպէս թռչունի ստուերն է կախուել  
ծառի կատարի կանաչ տերեւից  
եւ բոյսերի հետ լռին լողում է:  
Եւ արցունֆ-արցունֆ կորցրած բոլոր  
մշմարտութիւնը գտնելու համար՝  
լուսնոտն անցնում է հեռու անտառով,  
լուսնոտն անցնում է դաշտերով հեռու  
եւ ամէն մի դուռ բախում է նորէն՝  
մշմարտութիւնը մի տեղ գտնելու,  
եւ չգտնելով՝



թռչնի ստուերից կախում է իրեն:  
Օրուայ այտերին  
դեռ չլուացուած բառեր է փնտռում  
լուսաբացի չուն,  
եւ անակնկալ գտնում է բառը,  
եւ անակնկալ գտնում է բառը,  
որից կախուել են լուսնոտ ու թռչուն:

\*\*

Երկու շուրթեր,  
որ կախուել են առաւօտից,  
ինչպէս երկու գիրկ մառագայթ,  
արեգակի,  
ինչպէս երկու աղբիւրի ակ  
եւ կաթնաղբիւր,  
թելն են մանում առաւօտի,  
եւ բացում է մի արահետ բարակ ոտի,  
որ ելնում է տանիֆն ի վեր  
տանիֆն ի վեր առաւօտի,  
որտեղ երկու աղբիւրի ակ  
եւ կաթնաղբիւր՝  
երկու շուրթեր  
շարական են տալիս բուռ-բուռ  
բոպիկ ոտֆով արֆաներին,  
եւ Սասնայ ծուռ արֆաներն են  
լցում մերմակ շարականով,  
արեգակն է լցում մերմակ շարականով  
եւ երկիւնֆը...  
երկու շուրթեր ֆնարեբգու,  
որ բացում են մի արահետ բոպիկ ոտֆի,  
որով իմ սէրն է բարձրանում  
տանիֆն ի վեր առաւօտի:

Ա. Մ.

## Ա Ր Տ Ե Մ Յ Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ե Ա Ն



## ՆՈՐ ԵՂԱՆԱԿ

Բառ, ես քեզ եմ թշնամանում:  
 Քամի, ես դնում եմ գլուխս օտար  
 Ձայների կաթիլների տակ,  
 Լսելու համար, թե ինչպէս է հողը  
 Կրակում փունփիս իր արմատների անազմուկ անով  
 Անուն, քեզ նորից եմ անուանում,  
 Փոխելու համար տարածութիւնը այս վիճակների,  
 Որ չեն քանաչում ու չեն լսում իրար:

## Ք Ե Ջ

Հիմա դու դառել ես ֆաղափային ժխոր,  
 Յոգնած խօսակցութեան ատոմատից,  
 Կոպեկի զնգոց, ձայների փշրում,  
 Յայտնութիւն մոռացուած եղանակի:  
 Բակը լցուել է շէնփի պատմութեամբ,  
 Բակը հիւանդ է ինչով պատահի,  
 Հիմա դու դառել ես յոգնած պատասխան,  
 Երբ հարցը՝ ինքը սեփական կեանք ունի:  
 Սիրելիս, տուր այս անունը փողոցին:  
 Օգնիր պահելու խեցիները մթնոգ ժամերի,  
 Գոյութեան երանգը մի ֆշիր ֆամուց:  
 Բայց ֆաղափը մթնում է յանուն ներդաշնակութեան..  
 Հիմա դու նորից պահն ես իսկական,  
 Երբ անցումը փողոցով իր հեզնանֆն ունի  
 Հսկայ պատահարի:



# Հ Ր Ա Չ Ն Ա Յ Ս Ա Ր Ո Ւ Կ Ա Ն

## Ա Յ Ս Գ Ի Շ Ե Ր

Ցերեկների տակ բոլոր սերը բնի:  
Իրաները հայտնեն կարիլ առ կարիլ:  
Մի էիչ հոսց լինէր ու մի էիչ գրնր...

Ատիր, խնդրում եմ, շուրթերս տաիր:

Լուսին այս գիշեր ազատ կը դառնայ:  
Աստղերը՝ մոռի փայլփայլում հասիկ:  
Եզնամաններից ետիր թառնած —

Ատիր, խնդրում եմ, աչքերս տաիր:

Թող այս գիշեր էլ սրբերն ինձ խաբեն:  
Ուսումնամ յտանի գիմացի պատին:  
Ազորազրբի մրուրը լափեմ...

Ատիր, խնդրում եմ, մտքերս տաիր:

Թող զուգաուրուեն ժպտով ցիմիկ  
Ստոյգ դժոխեն ու դրոխտը պատիր:  
Մի էիչ հոսց լինէր ու մի էիչ գրնր...

Ատիր, խնդրում եմ, ազորքս տաիր:



Ազատու ածաբով երանց տրի ինձ:  
Աստղերը բաց են:  
Ես ոչինչ չունեմ աեխացնելու  
Աչնամ մշուշին,  
Բայց ձայնս կը տամ, որ աչնամ համար  
Գառնայ ես մահու շարունակուրիւն:  
Մայրերին հայրոց հրեշտակ չեմ ես:  
Երկմիկ իցած դե չեմ մարդակերպ:  
Գիտեմ,  
Որ մէկը լալիս է հիմա —  
Աչնամ բափանցիկ մշուշի միջով՝  
Ուղիկ նայելով իմ բաց աչերին:  
Իմ անկողինը գգում է սրդէն,  
Ազատու ածաբով երանց տրի ինձ  
Ես մի վանդակ բեր լուշերիս համար,  
Որնուոր ազուս:

## Ա Շ Ո Ւ Ն

Աստղերը բաց են,  
Ես բափանցիկ է մշուշը աշնամ:  
Մերկ միւղին թառած մեծաուր ազուս,  
Իրիկնապահին  
Գո նստնիներեց մէկը լսել է ձայնը Բասիայի:  
Ես ոչինչ չունեմ աեխացնելու...  
Գիտեմ,

Որ սէկը շրջում է հիմա —  
Ես իմ անուան է շուրթերին սամում:  
Մերկ միւղին թառած մեծաուր ազուս,

Ֆ Ե Լ Ի Ք Ս Պ Ե Տ Ր Ո Ս Ե Ա Ն



Ս Է Ր Ի Մ Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

1.

— Ինչո՞ւ է տուփդ վարդագոյն այսպէս :  
— Իմ արիւնն ունի .

- Բայց այդ նոյն տուփի սեւն էլ ունես դու...
- Տառապանքն է իմ , որ դարեր ի վեր ես պահ եմ տուել հոգին հայրենեաց :
- Ինչո՞ւ գարունդ շէնշող է այսֆան :
- Սիրահարուած եմ կեանքին ու մարդուն :
- Ամառդ ինչո՞ւ այրող է այսպէս :
- Սիրտս դրել եմ կրծքում արեւի :
- Բայց քո ձմեռն էլ հանելի է , տաք...
- Տրտից կուչ եկած սովորութիւնս թողնելու համար ես դարագլխին  
բուք եմ սպանել :
- Աշունդ , ասա՛ , ինչո՞ւ է այդպէս առատարուն :
- Քարից եմ քամում , եւ այդ քարի մէջ իմ նախնիների ազնիւ քրտինքը  
հնօրեայ գինու ուժ է ստացել :
- Ո՞րն է հաւատդ , ո՞վ Հրաշագործ...
- Այն՝ որ ձմեռը որքան էլ դաժան , մեռնելու պահին գարուն է ծնում ,  
Այն՝ որ գիշերը մթին ու խաւար միշտ աւարտում է վառ այգարացով ,  
Այն հաւատով եմ ես ապրել կեանքում , որ մարդն ի վերջոյ  
Մարդ է դառնալու ,  
Որ աստուածային տանջանքի գնով  
զաւակներ երկնող արարիչ մայրը  
գլխատուած որդու վրայ չի՛ լալու ,  
Հաւատում էի , որ ծխալու է իր խնկարոյրով թոնիրն հայկական ,  
Փանգոտուելու է սուրն ի մէջ պատեան  
Ու լոյս է տալու փարօսն այն փրկիչ ,  
Որն իմ խորտակուող նաւին գտնելու , ափ է հանելու :  
Սուրբ է եղել իմ Հաւատն ի բնէ ,  
Եւ այդ սրբութեան պահպանման համար  
Յանախ իմ բաժին ծիծաղն եմ դրել  
պատմութեան սուրսայր նշդարի առաջ...

Ա Ն Ա Հ Ի Տ Գ Ա Ր Ս Ա Մ Ե Ա Ն

Ս Ա Լ Ո Մ Է

Եւ ես հասկացայ տառապանիդ, կի՛ն,  
 Եւ քո աչքերի մորմոքը տեսայ,  
 Եւ քո կողերի հրահալ ոսկին,  
 Որ ավէափ էր նետուում հեւասպառ:

Երբ անգոսնեց քեզ մէկը, մի այր մարդ,  
 Եւ քամահրեց քո իգութիւնը պերճ,  
 Քո խօս աչքերը գառնուկներ դարձան  
 Ու լուռ պառկեցին արցունքների մէջ:

Երբ վիրաւորեց քեզ մի Յովհաննէս,  
 Ով էլ որ լինէր, մի մահկանացու,  
 Կողերդ ներսում ոսկին մոլեգնեց  
 Քեզ գիրկը առաւ ու տարաւ հեռու...

Հեռու քո սրտից, տանջանքից, սիրուց,  
 Ու մօտիկ կրֆին, հրդեհին, փառքին,  
 Եւ մոխրացար դու քո իսկ հրդեհում  
 Ի հեռուկս քար այն Յովհաննէսի:

Ունեցար նրան, երբեք չունեցած,  
 Կորցրիր, առանց գտնելու յոյսի,  
 Եւ իգութիւնդ յուսահատ ոռնաց  
 Երակներիդ մէջ ծարաւած կոյսի:

Եւ քամուն տուած անցեալ ու ներկայ,  
 Արիւն տենչացիր, հատուցում, վրէժ,  
 Բայց նրա մահով՝ յաւիտեան կորար,  
 Բայց սպանեցիր նրա մէջ դու՝ քե՛զ...

\*\*

Եւ գիշերուայ մութ, տաք ալիքներում  
 Զտրթնում եմ յանկարծ քաղցած  
 մանկան պէս,  
 Նստում անկողնում  
 Ու նայում իրար,  
 Մեղքերս ու ես:



Եւ չեմ գրուցում, չեմ ասում ոչինչ,  
 Ու չեմ բողբոլում անցած-դարձածից,  
 Մերկ ու մրսելով  
 Լուսւմ եմ երկար,  
 Մեղքերս ու ես:

Եւ անհնութեան սարդոստայնի մէջ,  
 Գիշերուայ հեւառ, տաք շշուկներում,  
 Իրար գիրկը ընկած  
 Լալիս եմ երկար.  
 Մեղքերս ու ես,  
 Մեղքերս ու ես...

\*\*

Աշուն կաթկթոզ իմ տաք մատներով  
 Ես լուռ կը ծածկեմ աչքերս ահա  
 Ու լաց չեմ լինի:  
 Քեզ բարի ճամբայ,  
 Իմ որոնումի հազարերորդ հիւր.  
 Մուրացիկ, արքայ,  
 Խեղկատակ, աստուած,  
 Կամ ինչ սր կուզես...  
 Քեզ բարի ճամբայ  
 Եւ ինձ լուրթիւմ:

Վ Ա Ր Ա Ք Ա Ռ Ա Ք Ե Լ Ե Ա Ն

Նարեկացին ո՛չ միայն ժողովուրդին է թողել բազմաթիւ բառեր, այլեւ նրա բա-  
ռակազմութեան հետեւողութեամբ ու կազմած բառերի որոշ փոփոխութեամբ մեր գրական  
լեզուն հարստացել է մի շարք բառերով: օրինակ, Նարեկացին ունի բազմաբուրեան բառը:  
Մեր հին լեզուի բուրեան բառը կոչուած չունի, դուրս է գալիս, որ բուրեան բառը նոյնպէս  
Նարեկացին է կազմել: Թումանեանը յիշեալ բառը օգտագործել է հետեւեալ ձևով՝

Երբ ճամբաները դիակների տեղ  
Բուրեան ծաղիկներ կը փոեն շքեղ:

Գրաբարում հանրահռչակ բառ չկայ: Նարեկացին կազմել է հանրահռչակել բայը,  
որից հետագայում տոանձնացուել է հանրահռչակ նոր բառը եւ այժմ մեր գրական լեզուի  
չաա դործածական բառերից է:

Նարեկացու բառակազմական հմտութիւնը հետագայում օգտագործուել է շատ ու-  
րիշների կողմից, եւ աստիճանաբար հարստացուել է մեր լեզուի բառակազմը:

.....

Նարեկացին խօսքի մեծ վարպետ է, վարպետ ո՛չ միայն իբրեւ գեղագէտ, այլեւ՝  
լեզուի շինարար: Հայոց հին լեզուով մինչեւ Նարեկացին գեղարուեստական աչքի ընկնող  
երկեր չկային: Հին լեզուով կար սահմանափակ կրօնական, պատմական եւ մասամբ թարգ-  
մանական ու ինքնուրոյն փրկիստփայական գրականութիւն: Նարեկացին բաց արեց գեղար-  
ւեստական խօսքի գողանի ուղիները: Համաչխարհային մշակոյթի պատմութեան ամենադը-  
քատ դարում ու հայոց միջնադարում հայերէնի սրբազան խօսքը հարստացրեց նորանոր գե-  
ղեցիկ կապուկցութիւններով, բառերով ու արտայայտութիւններով: Նարեկացին դարձաւ  
հայ գեղարուեստական խօսքի ստեղծագործ առաջին վարպետը եւ դրանով իսկ վերջաբանը  
դրեց այն դասական դրքի, որի առաջին թերթերը լուսաւորել էին Մեսրոպն ու Սահակ Գար-  
թեւը, Եզնիկն ու Աղաթանգեղոսը, Եզիշէն ու Բուզանդը, Խորենացին ու Փարսլեցին: Սովու-  
րաբար որեւէ չրջանի գրականութեան սկիզբ դնողները իբրեւ պայծառ ջահեր լուսաւորում  
են դալիքը, մնում են սերունդների անկրկնելի պարծանքը, այդ չրջանը փակողները չեն  
հասնում այն բարձունքին, բայց Նարեկացին, որ փակում էր մեր հոգեւոր մշակոյթի մի  
մեծ եւ բեղմնաւոր չրջանը, կանգնեց Մեսրոպի եւ Խորենացու կողքին իբրեւ հաւասար եւ  
իբրեւ նոր խօսք ասող: Նաեղրափակեց հինը եւ սկիզբ դրեց մեր հոգեւոր մշակոյթի մի նոր  
չրջանի: Դարձաւ հնի եւ նորի կապող մեծ օղակը. ստեղծեց գեղարուեստական իւրայատուկ  
լեզու, հարիւրաւոր բառեր ու ձևեր, օգտուեց մեր ժողովրդական լեզուից եւ հինգ հարիւ-  
րամեակի զանազան ուղղութիւնները ամբողջացրեց: Նրա գիրքը դրսեւորում է արուեստն ու  
փրկիստփայութիւնը, աղօթքն ու երգը. դա մեր ժողովրդի ծանրադոյն տառապանքի կանչն է,  
մեր հին մշակոյթի համադրումը: Իրաւամբ դա կոչուել է ողբերգութիւն, բայց ողբերգու-  
թիւնը լրիւ չի բնորոշում: «Մատեան ողբերգութեան»ը մի առանձնայատուկ դիւցազներգու-  
թիւն է՝ եւ տառապանքի դատապարտում: Սա աստուածակերպ մարդու փառաբանութիւն է,  
մի շքեղ մարդերգութիւն, ինչպէս բնութագրեց մեր վերջին մեծ եղբարախոր:



## ՆՈՐ ԵՂԱՆԱԿԷՆ ԱՌԱՋ...

Լիբանանի զինեալ պայքարին դադարէն ետք, ինչպէս սպասելի էր, մեր քաղաքին մէջ տեղի ունեցան մշակութային շարք մը ձեռնարկներ, — ներկայացումներ, երգահանդէսներ, նկարչական ցուցահանդէսներ, երգի եւ պարի ելոյթներ, հայ գիրքի ցուցադրութիւն եւ ազգային ու գրական դասախօսութիւններ, ամէնքն ալ ժողովուրդի խումն ներկայութեան:

Երեւոյթը ոգեւորիչ էր եւ ժողովուրդը անտարբեր չմնաց անոնցմէ եւ ո՛չ մէկուն հանդէպ:

Տուեալ պայմաններուն մէջ, ի հարկէ, տկարութիւնները անխուսափելի էին եւ որոշ ձեռնարկներու առիթով արդէն արձանագրուեցան տկարութիւնները, այնուամենայնիւ մշակութային մեր գործիչներուն նախաձեռնելու եւ իրագործելու ոգին վեր էր ամէն գնահատանքէ, եւ յուսալի՛ ապագային հաշուոյն:

Հիմա կը գտնուինք նոր եղանակի մը նախօրէին եւ կասկածէ դուրս է, որ արուեստին ծառայող մեր բջիջներն ու անհատ արուեստագէտները դարձեալ պիտի ներկայանան հանրութեան, որ ծարար ունի ներքին սնունդներու եւ անպայման պիտի ընդառաջէ իրեն սնուցիչ խօսք մը, շարժում մը, կշռոյթ մը խոստացող կոչերուն:

Այս անգամ, սակայն, յայտագիր կազմելու լրջութիւնը պայման է եւ կատարողական արուեստին հետ վարուելու բժախնդրութիւնը չի կրնար ի միջի այլոց կատարուած գործերու սահմաններուն մէջ մնալ:

Աւելի պարզ՝ տագնապի եւ անորոշութեան վաղորդայնին չափով մը հասկնալի էին անապարանքները, ու բացատրելի՛ անապարանքներուն հետեւանքները, բայց հիմա քաղաքական նոյն պայմաններուն մէջ չենք գտնուիր եւ չմեղանքները արդարացուցիչ հիմքեր չունին այլեւս:

Եւ յետոյ՝ հարկ է չափազանց զգուշ ըլլալ եւ չիյնալ երկու տարուան կուտակուած կարօտին մղումով սրահները փութացող ժողովուրդին խումներամ ներկայութիւնը չափանիշ համարելու թիրիմացութենէն եւ հեռու մնալ որակական խեղճութիւններ հանդիսադրելու փորձութիւններէն:

Նախատագնապեան օրերուն մեր քաղաքին մէջ նուաճուած էր արուեստի որոշ մակարդակ մը եւ բնաւ ներելի չէ մեզի, որ նոյն մակարդակին անյարիր գործերով ներկայանանք մեր ժողովուրդին, որ տագնապէն նոր դուրս ելաւ թէեւ, բայց մշակութային մարգերու մէջ նոր չ'երեւիր ու նախնական ժողովուրդ մը չէ ի վերջոյ:

Նոր եղանակի ձեռնարկներուն մենք պիտի անդրադառնանք տուեալ ամիսներուն եւ առանձին թղթակցութիւններով:

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻԲԱՆԱՆ 50 Լ. ՈՍԿԻ  
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 27 ՏՈԼԱՐ  
ՀԱՏԱՎԱՃԱՌ 5 Լ. ՈՍԿԻ

باكين

مجلة شهرية ، ادبية وفنية علمية  
مدير المسؤول  
السيد ارتين كارنيك قزائجيان

**PAKINE**  
REVUE MENSUELLE  
LITTÉRAIRE & ARTISTIQUE  
Propriétaire  
Dr. A. KAZANDJIAN

Բ Ա Գ Ի Ն  
ԱՄՍԱԳԻՐ  
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ  
ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

ԽՄԲԱԳԻՐ  
Գ. ՄՆԱԳԵԱՆ

Հեռագրային՝ 296898